ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
YEREVAN STATE UNIVERSITY

ԲԱՆԲԵՐ ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ, ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ВЕСТНИК ЕРЕВАНСКОГО УНИВЕРСИТЕТА
ФИЛОСОФИЯ, ПСИХОЛОГИЯ

JOURNAL OF YEREVAN UNIVERSITY
PHILOSOPHY, PSYCHOLOGY

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ОБЩЕСТВЕННЫЕ НАУКИ
SOCIAL SCIENCES

№ 3 (42)

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ИЗДАТЕЛЬСТВО ЕРЕВАНСКОГО ГОСУДАРСТВЕННОГО УНИВЕРСИТЕТА
YEREVAN STATE UNIVERSITY PRESS

ԵՐԵՎԱՆ - 2023

«Բանբեր Երևանի համալսարանի. Փիլիսոփայություն, Հոգեբանություն» հանդեսը լույս է տեսնում տարեկան երեք անգամ: Հրատարակվում է 2010 թվականից: Իրավահաջորդն է 1967-2009 թթ. հրատարակված «Բանբեր Երևանի համալսարանի» հանդեսի:

Журнал «Вестник Ереванского университета. Философия, Психология» выходит три раза в год. Издается с 2010 года. Правопреемник издававшегося в 1967-2009 гг. журнала «Вестник Ереванского университета».

Three issues of "Journal of Yerevan University. Philosophy, Psychology" are published annually. The journal has been published since 2010. It is the successor of "Journal of Yerevan University" published in 1967-2009.

Խմբագրական խորհուրդ.
Գլխավոր խմբագիր՝ **Հարությունյան Էդվարդ** (փ.գ.դ., պրոֆ.), **Ավանեսյան Հրանտ** *(հ.գ.դ., պրոֆ.),* **Բաղրամյան Մարիա** *(փ.գ.դ., պրոֆ., Իռլանդիա),* **Բարսեղյան Հակոբ** *(փ.գ.դ., Կանադա),* **Գոսսերիես Աքսել** *(փ.գ.դ., պրոֆ., Բելգիա),* **Զաքարյան Սեյրան** *(փ.գ.դ., պրոֆ.),* **Ժեմոյտել-Պյոտրովսկա Մագդալենա** *(հ.գ.դ., պրոֆ., Լեհաստան),* **Լուբովսկի Դմիտրի** *(հ.գ.դ., պրոֆ., Ռուսաստան),* **Խաչատրյան Նարինե** *(հ.գ.թ., դոց.),* **Կոշկարյան Մարիաննա** *(փ.գ.դ., պրոֆ., ԱՄՆ),* **Շահվերդյան Գայանե** *(հ.գ.դ., պրոֆ.),* **Պետրոսյան Սիլվա** (պատ. քարտուղար, փ.գ.թ., դոցենտ)

Редакционная коллегия:
Главный редактор: **Арутюнян Эдуард** *(д.флс.н., проф.),* **Аванесян Грант** *(д.псих.н., проф.),* **Баграмян Мария** *(д.флс.н., проф., Ирландия),* **Барсегян Акоп** *(д.флс.,н., Канада),* **Госсериес Аксель** *(д.флс.н., проф., Бельгия),* **Жемойтель–Петровска Магдалена** *(д.псих.н., проф., Польша),* **Закарян Сейран** *(д.флс.н., проф.),* **Кошкарян Марианна** *(д.флс.н., проф., США),* **Лубовский Дмитрий** *(д.псих.н., проф., Россия),* **Петросян Силва** *(отв. секретарь, к.флс.н., доц.),* **Хачатрян Нарине** *(к.псих.н., доц.),* **Шавердян Гаянэ** *(д.псих.н., проф.)*

Editorial Board:
Editor-in-chief: **Harutyunyan Eduard** *(Sc. D. in Philosophy, Professor),* **Avanesyan Hrant** *(Sc. D. in Psychology, Professor)*, **Baghramyan Maria** *(Sc. D. in Philosophy, Professor, Ireland),* **Barseghyan Hakob** *(Sc. D. in Philosophy, Canada),* **Gosseries Axel** *(Sc. D. in Philosophy, Professor, Belgium*), **Khachatryan Narine** *(PhD in Psychology, Associate Professor),* **Koshkaryan Marianna** (*Sc. D. in Philosophy, Professor, USA),* **Lubovski Dmitri** *(Sc. D. in Psychology, Professor, Russia*), **Petrosyan Silva** *(Executive Secretary, PhD, Associate Professor),* **Shahverdyan Gayane** *(Sc. D. in Psychology, Professor),* **Zakaryan Seyran** *(Sc. D. in Philosophy, Professor),* **Żemojtel-Piotrowska Magdalena** *(Sc. D. in Psychology, Professor, Poland)*

ԲԱՆԲԵՐ ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ. ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ, ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ
2023. № 3. 3-16 *Փիլիսոփայություն*
https://doi.org/10.46991/BYSU:E/2023.14.3.003

ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ՄԱՐԴԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ

ԳԱԳԻԿ ՍՈՂՈՄՈՆՅԱՆ

Մարդաբանական հարցն այն ժամանակ հնչեց, երբ լուծարվեց Տիեզերքի և մարդու նախասկզբնական պայմանագիրը, և մարդն զգաց, որ ինքն այս աշխարհում միայնակ օտարական է: Տիեզերքի այդ պատկերի փլուզումը և, հետևաբար, դրա հուսալիության ճգնաժամն առաջացրեցին անօգնական, տնանկ և ըստ այդմ ինքն իր համար խնդրահարույց մարդու մասին հարցադրումները:

Մարտին Բուբեր

Մարդու ընտրությունը միշտ վախճանաբանական հեռանկար ունի, քանզի մարդկային պատմության ընթացքը և նրա վերջաբանը կախված են այն բանից, թե նա որ ճանապարհով կգնա՝ կյանքի՞, թե՞ մահվան: Քաղաքակրթությունն աստիճանաբար մոտենում է գայթակղություններով լեցուն, սակայն խիստ վտանգավոր մի սահմանագծի, որից անդին չվերահսկվող ուժերի ազդեցությունը մարդու համար կարող է ճակատագրական լինել: Պահն է սթափվելու: Այս առնչությամբ անուրանալի են փիլիսոփայական մարդաբանության դերն ու նշանակությունը:

Փիլիսոփայական մարդաբանության մեջ տարբերակվում են երկու ուղղություններ՝ փիլիսոփայամարդաբանական էսենցիալիզմ և էկզիստենցիալիզմ: Էսենցիալիստական փիլիսոփայական մարդաբանությունը հետազոտում է մարդու հարաբերությունը բնության, հասարակության, մշակույթի, իսկ էկզիստենցիալիստական փիլիսոփայական մարդաբանությունը՝ մարդու հարաբերությունը Աստծո, ուրիշի և ինքն իր հետ: Ներկայացվում են փիլիսոփայական մարդաբանության առարկան, խնդիրները և գիտական կարգավիճակը: Հիմնավորվում է այն գաղափարը, որ վաղ է մոռացության մատնել և հրաժարվել փիլիսոփայական մարդաբանության հետազոտական հարուստ գործիքակազմից: Քննական վերլուծության արդյունքում հեղինակը եզրահանգում է, որ մարդու մեջ կան այնպիսի դրական որակներ, որոնք զարգացնելով և որոնց վրա հենվելով՝ հնարավոր է կատարելագործել սոցիալական միջավայրը և միջանձնային հարաբերությունները: Դրա համար անհրաժեշտ է զարգացնել մարդու մասին հենց իր իսկ գիտելիքները, հաշվի առնել իրականացվող տնտեսական, սոցիալական և ինստիտուցիոնալ բարեփոխումների մարդաբանական տեսանկյունները:

Բանալի բառեր – *փիլիսոփայական մարդաբանություն, մարդաբանական փիլիսոփայություն, փիլիսոփայամարդաբանական էսենցիալիզմ, փիլիսոփայամարդաբանական էկզիստենցիալիզմ, պոստմոդեռնիզմ, վիրտուալ ռեալության փիլիսոփայություն, թերիանտրոպիա, տրանսհումանիզմ, ապամարդկայնացում, էսկապիզմ*

Մասնագիտական գրականության մեջ «փիլիսոփայական մարդաբանություն» եզրույթը սովորաբար օգտագործվում է հետևյալ երեք իմաստներով.

1) Որպես փիլիսոփայական գիտելիքի ավանդական համակարգ, որը նվիրված է բնութենական և սոցիալական պատմության մեջ մարդու տեղի և դերի հիմնախնդիրների քննական վերլուծությանը: Այս իմաստով ըմբռնված «փիլիսոփայական մարդաբանությունը» ինտելեկտուալ մտքի եվրոպական պատմությունում կապվում է անտիկ աշխարհի մեծ մտածող Սոկրատեսի անվան հետ, ում ստեղծագործությամբ ազդարարվում է փիլիսոփական անդրադարձի անցումը բնության կեցությունից դեպի մարդու կեցություն: Այս իմաստով «փիլիսոփայական մարդաբանության» առանձնահատկությունն այն է, որ այն փիլիսոփայական գիտելիքի համակարգում պաշտոնական կարգավիճակ (ինչպես գոյաբանությունը կամ իմացաբանությունը, բարոյագիտությունը կամ գեղագիտությունը դասական փիլիսոփայության մեջ) չունի: Մարդու մասին անդրադարձները ներառված են եղել դասական փիլիսոփայության այլ բաժիններում:

2) Որպես մարդու և աշխարհում նրա կեցության մասին փիլիսոփայական գիտելիքի ինքնուրույն բաժին: «Փիլիսոփայական մարդաբանությունը» այս մեկնաբանմամբ դիտարկվում է որպես մասնագիտացված հետազոտական գործունեություն՝ իր բավականաչափ հստակ ուրվագծված առարկայով, կայացած ավանդույթներով և ճանաչողության յուրահատուկ ծրագրերով, գնահատման օբյեկտիվ չափանիշներով և ստացված գիտելիքների դասակարգմամբ ու ամրագրմամբ: Այս վարկածի համաձայն՝ XIX դարի վերջի և XX դարի սկզբի բեկումնային ժամանակաշրջանում (երբ, ինչպես Օսիպ Մանդելշտամն է ասում, «գելխեղդների դարում» մարդը փորձում է ինքն իրեն ճանաչել ու հասկանալ) «փիլիսոփայական մարդաբանությունը» դառնում է այսպես կոչված «մարդաբանական հեղաշրջման» արժեքաիմաստային արտահայտությունն ու վկայությունը:

3) Որպես համախոհների խումբ, որն ստացել է «փիլիսոփայական մարդաբանության դպրոց» անվանումը: Այդ դպրոցի հիմնադիրներ, գերմանացի փիլիսոփաներ Մաքս Շելերը և Հելմուտ Պլեսները, նրանց հետևորդներ Առնոլդ Գելենը, Էրիխ Ռոտհակերը և Միքայել Լանդմանը հայտարարեցին մարդու մասին մեր գիտելիքների ճգնաժամը: Նրանք արձանագրեցին հետևյալ պարադոքսալ իրավիճակը: Գոյություն ունեն մետաֆիզիկայի պատմություն, բնափիլիսոփայության պատմություն, գիտական, բարոյագիտական և գեղագիտական մտքի պատմություն-

ներ, բայց ամենահետաքրքիր, ուսանելի և մարդուն ամենից մոտ, այսինքն՝ իր իսկ՝ մարդու փիլիսոփայության պատմություն չի ստեղծվել: Այդ դպրոցի ներկայացուցիչները որոշեցին բնագիտական և փիլիսոփայական գիտելիքների համադրմամբ ստեղծել մարդու ֆենոմենի համակողմանի և համալիր հետազոտման նոր գիտակարգ՝ (philosophia prima) փիլիսոփայական մարդաբանությունը[1]:

Համադրելով «փիլիսոփայական մարդաբանություն» եզրույթի վերոգրյալ հիմնական իմաստային մեկնաբանությունները՝ դժվար չէ նկատել, որ սրանք միմյանց ամենևին չեն հակասում, սակայն, ըստ իս, ընդունելին երկրորդ մեկնաբանությունն է, համաձայն որի՝ փիլիսոփայական մարդաբանությունը ժամանակակից փիլիսոփայության այն բաժինն է, որտեղ առաջադրվում և քննարկվում են մարդկային կեցության հիմնարար խնդիրները: Բանն այն է, որ փիլիսոփայամարդաբանական խնդրակարգը, համանուն դպրոցից զատ, հետազոտվել է նաև «կյանքի փիլիսոփայության», նեոթոմիզմի, պերսոնալիզմի, թեյարդիզմի, մարքսիզմի և նեոմարքսիզմի, ֆրոյդիզմի, նեոֆրոյդիզմի և էկզիստենցիալիզմի փիլիսոփայական համակարգերում:

Այսպիսով, փիլիսոփայական մարդաբանությունը մարդու մասին գիտելիքների յուրահատուկ համակարգ է, որի առանձնահատկությունները պայմանավորված են հետևյալ հանգամանքներով:

Առաջին՝ փիլիսոփայական մարդաբանության խնդիրը մարդու ֆենոմենի համալիր հետազոտությունն է, այն չի սահմանափակվում միայն մարմնական, հոգեկան, տնտեսական, սոցիալական կամ այլ խնդիրների (ինչը բնորոշ է մարդու մասին մասնավոր գիտություններին) հետազոտությամբ: Մարդու ֆենոմենի զուտ բնագիտական կամ հասարակագիտական ուսումնասիրության (ըստ էության ռեդուկցիայի) դեպքում, որքան էլ որ մենք հագեցած լինենք մարդու մասին մարմնակազմական, ֆիզիոլոգիական, հոգեբանական կամ սոցիոլոգիական մանրակրկիտ գիտելիքներով, կունենանք ոչ թե բազմաչափ ու հակասություններով լեցուն իրական մարդու՝ վերելքներում վեհ, անկումներում նսեմ, ամբողջական, դրամատիկ պատկերը, այլ նրա թերատ, հատվածական պատկերը:

Երկրորդ՝ փիլիսոփայամարդաբանական մոտեցման համար հատկանշական է ուսումնասիրվող երևույթների էութենական ճանաչողության փիլիսոփայության ներակա (իմպլիցիտ) ձգտումը: Մարդու հետազոտության հենց այդ մոտեցումն է բնորոշ փիլիսոփայական մարդաբանությանը: «Մարդու ուսումնասիրությամբ զբաղվող և օրավուր աճող մասնավոր գիտությունները,- նկատում է Մաքս Շելերը,- ավելի շուտ թաքցնում են մարդու էությունը, քան բացահայտում այն»[2]: Փիլիսոփայական մարդաբանությունը ձգտում է իմաստավորել մարդկային կեցության«սահմանային», մետաֆիզիկական հիմունքները:

---

[1] Տե՛ս **Гуревич П. С**. Человек многоликий // Это человек: антология, М., 1995, էջ 13–15:

[2] **Шелер М.** Положение человека в Космосе // Проблема человека в западной философии: антология / под общ. Пед. Ю. Н. Попова, М., 1988, с. 31.

Երրորդ՝ փիլիսոփայական մարդաբանությունը ձգտում է համատեղել մարդու մասին տեսական և էմպիրիկ գիտելիքները, ներդաշնակեցնել մարդու էության և գոյության տարբեր իրավիճակներում դրա դրսևորման առանձնահատկությունների մասին կենսադիրքորոշումները: Այս խնդրի լուծման համար անհրաժեշտ է ապավինել մարդուն ուսումնասիրող բնագիտական և սոցիալ-հումանիտար գիտակարգերից ստացված գիտելիքներին, ինչը փիլիսոփայական մարդաբանությանը թույլ է տալիս խուսափել խիստ տեսականացման ծայրահեղություններից և բնագիտականի ու փիլիսոփայականի համադրմամբ անդրադառնալ մարդկային կեցության խորախորհուրդ, էկզիստենցիալ խնդիրներին:

Չորրորդ՝ փիլիսոփայական մարդաբանությունը կապված է աշխարհայացքային հիմնախնդիրների քննարկման հետ, որոնց լուծումն անմիջականորեն պայմանավորված չէ գործնապաշտական (պրագմատիկ) և օգտապաշտական (ուտիլիտար) նշանակություն ունեցող գիտելիքների նվաճումներով: Կյանքի իմաստի, մահվան ու անմահության, ազատության ու պատասխանատվության, ցավի ու տառապանքի հիմախնդիրները մարդու համար կարևոր ու նշանակալի են այնքանով, որ դրանց մասին խորհրդածությունները միշտ էլ անհատական բնույթ ու պայմանավորվածություն ունեն: Հենց այդ խորհրդածություններն են արթնացնում, հղկում ու կատարելագործում ինքնագիտակցությունը, մղում ինքնորոնման ու էութենական ինքնաճանաչման:

Եվ վերջապես՝ հինգերորդ՝ փիլիսոփայական մարդաբանության առանձնահատկությունն այն է, որ այն սկզբունքորեն պլյուրալիստական է: Ինչպես ողջ փիլիսոփայության, այնպես էլ փիլիսոփայական մարդաբանության մեջ ճշմարտությունը ոչ ոք չի կարող մենաշնորհել: Ճիշտ հակառակը, փիլիսոփայական մարդաբանության հիմնարար խնդիրներից յուրաքանչյուրը, պայմանավորված մտածողի փիլիսոփայական այս կամ այն դպրոցի կամ ավանդույթի հետևորդը լինելու հանգամանքով, ստեղծում է ամենաբազմազան բացատրությունների ու մեկնաբանությունների լայն ասպարեզ: Այդ առանձնահատկությամբ փիլիսոփայական մարդաբանությունը տարբերվում է կրոնական մարդաբանությունից և մարդու մասին գիտելիքների բնագիտական համակարգերից:

Ինտելեկտուալ մտքի պատմության մեջ փիլիսոփայական մարդաբանության առարկան առաջինը հստակորեն ձևակերպել է Իմանուիլ Կանտը: Նրա համոզմամբ՝ մարդը «ճանաչողության ամենագլխավոր առարկան է», քանի որ «նա ինքն իր վերջին նպատակն է»[3]: Որոշակի իմաստով Կանտի փիլիսոփայությունը մարդաբանական է, քանի որ այն կոչված է պատասխանելու ոչ միայն փիլիսոփայական մարդաբանության, այլև ողջ փիլիսոփայության համար կարևորագույն երեք հարցերի.

[3] **Кант И.** Сочинения. В 6 т., т. 3, М., 1963-1966, с. 351.

1. «Ես ի՞նչ կարող եմ իմանալ», այսինքն՝ ինչպիսի՞ն են մարդու ճանաչողական հնարավորությունները (աշխարհի նկատմամբ վերաբերմունքի ճանաչողական տիպ),

2. «Ես ի՞նչ կարող եմ անել», այսինքն՝ ի՞նչ է անհրաժեշտ անել մարդ լինելու և արժանապատվորեն ապրելու համար (աշխարհի նկատմամբ վերաբերմունքի պրակտիկ տիպ),

3. «Ի՞նչի վրա կարող եմ հույս դնել», սա հարց է արժեքների և իդեալների մասին (աշխարհի նկատմամբ վերաբերմունքի արժեքային տիպ)[4]:

«Զուտ բանականության քննադատության» մեջ ձևակերպելով այս հարցերը՝ XVIII դարի 90-ականների սկզբին Կանտն անհրաժեշտ համարեց դրանք հավելել վերջին՝ չորրորդ հարցով՝ «Ի՞նչ է մարդը»: Ըստ էության, Կանտն այն եզրակացությանը հանգեց, որ չորրորդ հարցը ներառում է առաջին երեքը, և ըստ այդմ փիլիսոփայական բոլոր գիտակարգերը «հանգում են մարդաբանությանը»[5]: «Մարդաբանությունը, ըստ երևույթին, այն հիմնական դիրքավորումն է,– իրավացիորեն նկատում է Միշել Ֆուկոն, – որը Կանտից մինչև մեր օրերն ուղղորդում և առաջնորդում է փիլիսոփայական միտքը»[6]:

Այսպիսով, կարելի է ասել, որ փիլիսոփայական մարդաբանությունը և մարդաբանական փիլիսոփայությունը հոմանիշներ են: Իր ծագման առաջին իսկ օրերից փիլիսոփայությունը գործ է ունեցել մարդու բնության ու էության, աշխարհում նրա տեղի ու դերի մասին հիմնահարցերի հետ: Խնդիրն այն է, որ պատմական տարբեր ժամանակաշրջաններում կարևորվել են մերթ հոգևորի ու մարմնականի հարաբերակցության հիմնահարցերը, մերթ մարդու իմացական կամ ստեղծագործական կարողությունների իմաստավորումները, իսկ պատմության ճգնաժամային փուլերում՝ էկզիստենցիալ հարցադրումները: Ուստի չի կարող գոյություն ունենալ զուտ փիլիսոփայամարդաբանական առանձնահատուկ մեթոդ: Մարդուն, հաշվի առնելով նրա սուբյեկտիվությունը, կամքի ազատությունը, ազգային պատկանելությունը, շահերն ու պահանջմունքները, դրանց իրացման հնարավորությունները, կարելի է տարբեր տեսանկյուններից ուսումնասիրել: Ըստ այդմ կարող են ստեղծվել փիլիսոփայամարդաբանական տարբեր կառուցակարգեր: Իրականում գոյություն ունեն բազմաթիվ «փիլիսոփայական մարդաբանություններ», քանի որ ի՞նչ է մարդը, ինչպե՞ս և հանուն ինչի՞ նա պետք է ապրի հարցերը պատմական, սոցիալ–տնտեսական և քաղաքական տարբեր հանգամանքներում կարող են ունենալ բազմաթիվ և տարատեսակ պատասխաններ:

«Փիլիսոփայական մարդաբանություն» եզրույթը որոշ հեղինակներ օգտագործում են լայն և նեղ իմաստներով[7]: Լայն իմաստով այն ներա-

---

[4] Տե՛ս նույն տեղը, էջ 661:

[5] **Кант И.** Трактаты и письма, М., 1980, с. 332.

[6] **Фуко М.** Слова и вещи: Археология гуманитарных наук. М., 1977, с. 362.

[7] Տե՛ս **Моторина Л. Е.** Философская антропология: учебное пособие для вузов. М., 2003, էջ 54:

ռում է բոլոր այն մարդաբանական ուսմունքները, որոնք նվիրված են մարդու բնության, էության և կոչման հիմնախնդիրների հետազոտությանը: Նեղ իմաստով այն վերաբերում է XX դարի գերմանական հայտնի ուղղության գործունեությանը: Բայց նման ընկալման դեպքում խնդրակարգի հետազոտական շրջանակներից դուրս են մնում մարդաբանական այնպիսի հեղինակավոր ուղղություններ, ինչպիսիք են էկզիստենցիալիզմը և պերսոնալիզմը, որոնք վերաբերում են ոչ թե մարդու (անձի) էության, այլ գոյության մասին փիլիսոփայական անդրադարձներին: Նկատենք նաև, որ այստեղ փիլիսոփական գիտելիքի համակարգում հստակորեն չեն սահմանվում փիլիսոփայական մարդաբանության՝ որպես առանձին փիլիսոփայական գիտակարգի տեղն ու դերը:

Ըստ ամենայնի, առավել հիմնավոր և ընդունելի է այն գաղափարը, համաձայն որի՝ փիլիսոփայության պատմության ողջ ընթացքն ունեցել է փիլիսոփայական գիտելիքի մարդաբանականացման հստակ միտում: Դրա վկայությունն է մարդու էության մասին Պլատոնի, Արիստոտելի, Սպինոզայի, Լայբնիցի գոյաբանական մարդաբանությունը, Բեկոնի և Դեկարտի իմացաբանական մարդաբանությունը, փիլիսոփայության բացահայտ մարդաբանականացումը Կանտի ուսմունքում, Շոպենհաուերի, Նիցշեի, Հայդեգերի և էկզիստենցիալիզմի այլ ներկայացուցիչների արտահիմացաբանական մարդաբանությունը, բնականաբար նաև XX դարի գերմանական փիլիսոփայական մարդաբանությունը[8]: Ունիվերսալ գիտություն լինելու Շելերի գաղափարը մոռացվում է: Ձևավորվում են բազմաթիվ նոր մարդաբանություններ՝ մշակութային, սոցիալական, քաղաքական, կրոնական, մանկավարժական, պատմական, հոգեբանական և այլն[9]: Ինտելեկտուալ շրջանակներում այժմ լայնորեն քննարկվում է մարդու մասին միասնական գիտություն ստեղծելու անհրաժեշտության գաղափարը[10]:

Միանշանակ չէ նաև փիլիսոփայական մարդաբանության առարկայի ընկալումը: Ամենատարածվածը Շելերի սահմանումն է, ով փիլիսոփայական մարդաբանությունը բնութագրում է որպես «մարդու էության և էութենական կառուցվածքի մասին»[11] գիտություն: Բայց բանն այն է, որ փիլիսոփայական մարդաբանության մեջ տարբերակվում են երկու ուղղություններ՝ փիլիսոփայամարդաբանական էսենցիալիզմ և էկզիստենցիալիզմ: Առաջինի գոյաբանական տարբերակման հիմքում փիլիսոփայական ռեալիզմն է, երկրորդի հիմքում՝ նոմինալիզմը: Առաջին ուղղությանը վերաբերող ուսմունքների (այդ թվում և Շելերի ուսմունքի) հետազոտության առարկան ցեղային յուրահատկությունների տեսանկյունից բնութագրվող և միայն իրեն բնորոշ էութենական հատկանիշնե-

---

[8] Տե՛ս **Никитин Е. П.** Об одной тенденции в развитии философии // Вопросы философии, 2001, № 10:

[9] Տե՛ս **Смирнов С.А.** Современная антропология // Человек, 2004, № 1, 2, 3:

[10] Տե՛ս **Борзенков В. Г.** Единая наука о человеке за пределами редукционизма // Человек, 2011, № 2:

[11] **Шелер М.** Человек и история, **Шелер М.** Избранные произведения, М., 1994, с. 70.

րով օժտված և մնացած այլ արարածներից տարբերակվող մարդն է (էսենցիալիզմ)։ Երկրորդ ուղղությանը վերաբերող ուսմունքների հետազոտության առարկան գոյութենական սուբյեկտիվ դրսևորումների ողջ բազմազանությամբ օժտված ներհակասական կոնկրետ մարդ–անհատն է (էկզիստենցիալիզմ)։ Այսպիսով, փիլիսոփայական մարդաբանության կազմում, ակներևաբար, կան երկու մարդաբանություններ՝ էսենցիալիստական և էկզիստենցիալիստական։ Շելերի սահմանումը վերաբերում է միայն առաջինին։

Ըստ երևույթին, իրավացի կլինի փիլիսոփայական մարդաբանության առարկան սահմանել դեռևս Արիստոտելից սկսած, իսկ XIX դարում Հեգելի կողմից ստեղծագործաբար զարգացրած «ձև», «մատերիա», «էություն», «հարաբերություն» և «հատկություն» կատեգորիաների օգնությամբ։ Ստագիրիտի փիլիսոփայությունում սուբստանցիա անվանվող յուրաքանչյուր իր բաղկացած է մատերիայից (բնություն) և ձևից (էություն)։ Հեգելի փիլիսոփայական համակարգում «իրերը բաղկացած են տարբեր նյութերից կամ մատերիաներից», «երևույթը էությունն է իր գոյության մեջ», «երևույթի ճշմարտությունը էական հարաբերությունն է», «իրի հատկությունները դրսևորվում են հարաբերություններում»։ Մարդը գոյատևում է հարաբերություններում, որտեղ էլ դրսևորվում է նրա էությունը։ Բայց այն, թե ինչպես է այն դրսևորվում, կախված է մարդու արտաքին և ներքին ակտիվությունից։ Հարաբերություններում մարդն արարում է ինքն իրեն, իր էությունը։

Այսպիսով, էսենցիալիստական փիլիսոփայական մարդաբանությունը հետազոտում է մարդու հարաբերությունը բնության, հասարակության, մշակույթի, իսկ էկզիստենցիալիստական փիլիսոփայական մարդաբանությունը՝ մարդու հարաբերությունը Աստծո, ուրիշի և ինքն իր հետ։ Փիլիսոփայական մարդաբանության ըմբռնման առնչությամբ օգտագործելով այս դիալեկտիկան՝ այն կարելի է սահմանել որպես մարդու բնության և էության մասին ուսմունք (տեսություն), որը դրսևորվում է մարդու՝ բնության, հասարակության, Աստծո, անդրանցականի (տրանսցենդենտալի), ուրիշի և ինքն իր հետ հարաբերություններում։ Դրանք մարդկային կեցության այն առանցքային հիմունքներն են, կեցության այն ունիվերսալ մոդուսները, որոնք մարդուն մարդ են դաձրել և մարդ պիտի պահեն։ Փիլիսոփայական մարդաբանության առարկայի նման ըմբռնման դեպքում պարզ կդառնա այն հարցը, թե ինչու են մարդաբանությունները ստորաբաժանվում ֆիզիկականի (կենսաբանականի), սոցիալականի (պատմականի), մշակութայինի, կրոնականի, հոգեբանականի և այլն։

Այսպիսով, **փիլիսոփայական մարդաբանությունը գոյի յուրահատուկ տեսակի՝ մարդու ծագման, նրա ֆիզիկական, սոցիալական և հոգեվոր կեցության անդրանցական (տրանսցենդենտալ) և էկզիստենցիալ հիմունքները հետազոտող փիլիսոփայական գիտակարգ է։**

Ելնելով փիլիսոփայական մարդաբանության առարկայի նման սահմանումից՝ դասական փիլիսոփայական մարդաբանության[12] շրջանակներում մարդու ֆենոմենը քննարկվում է չորս տեսանկյուններից.

1) մարդու հետազոտությունը ցեղային յուրահատկությունների տեսանկյունից, որոնցով նա տարբերվում է մնացյալ բոլոր արարածներից (բանականություն, առանձնահատուկ պահանջմունքներ և շահեր, կյանքի իմաստ և մահ),

2) մարդու հետազոտությունը արտամարդկայինի հետ հարաբերությունների տեսանկյունից (բուսական և կենդանական աշխարհ, երկրային և տիեզերական տարերքներ, կեցության մեգա և միկրոմակարդակներ, աստվածաբանական, անդրանցական և էզոթերիկական խնդիրներ),

3) միջանձնային շփումների և «մարդ-մարդ» հարաբերությունների վերլուծություն (միջանձնային հաղորդակցություն, անհատական փոխգործակցության միջնորդներ, հուզական-արժեքային վիճակների նկարագրություն, կեցության էկզիստենցիալներ և այլն),

4) մարդու ներաշխարհի վերլուծություն (մարդկային Ես-ի հիմնախնդիրներ, կրքերի պայքար, ուրախության և տխրության վիճակներ, գիտակցության հոսք և այլն)[13]:

Մարդու ուսումնասիրության առաջին երկու տեսանկյունները ամենից առաջ վերաբերում են կեցության ցեղային, իսկ մյուս երկուսը՝ անհատական մակարդակին: Ճիշտ է, սրանց միջև անանցանելի սահմաններ չկան, նկատենք, սակայն, որ ցեղային մարդու ուսումնասիրության համար անհրաժեշտ է դրսևորել վերացական-անդեմ մոտեցում, մինչդեռ անհատական մարդու ուսումնասիրության համար անհրաժեշտ է մշակել տեսական-փիլիսոփայական մասնավոր հայեցակարգեր: Դրանց միջոցով հնարավոր կլինի ներկայացնել անձնական կյանքի այնպիսի համընդհանուր էկզիստենցիալ իրավիճակներ, որոնք կարող է վերապրել ցանկացած ոք: Էկզիստենցիալ իրավիճակներ առաջանում են ոչ միայն գոյության ծայրահեղ, սահմանային պայմաններում, այլև ամենօրյա, առտնին կյանքում: Մարդկային կյանքի բոլոր իրադարձություններն ընթանում են այս երկու բևեռների դրամատիկ միջակայքում:

Ամփոփելով փիլիսոփայական մարդաբանության շրջանակներում քննարկվող հարցերի այս շարքը՝ նկատենք, որ այսօր կարծես արժեզրկվում է բուն իսկ փիլիսոփայական մարդաբանություն եզրույթը:

---

[12] Որպես տեխնոլոգիական զարգացման և քաղաքակրթական փոխակերպումների անընդհատ հոսքի արձագանք և դրանց ի պատասխան՝ այժմ ձևավորվում է ոչ դասական մարդաբանությունը՝ հիմնախնդիրների հարուստ բազմազանությամբ և դրանց հետազոտության նոր, երբեմն ապամարդկային թվացող լուծումներով: Այդ մասին տե՛ս **Гуревич П. С.** Классическая и неклассическая антропология: сравнительный анализ, М., 2018:

[13] Տե՛ս **Золотухина-Аболина Е. В.** Философская антропология, 2-е изд., Ростов-на-Дону, Феникс, 2014, էջ 13-14:

Այդ իսկ պատճառով, ըստ երևույթին, նպատակահարմար է փիլիսոփայական մարդաբանության կարգավիճակի ըմբռնման առնչությամբ տարբերակել հետևյալ չորս տեսանկյունները. ա) պատմափիլիսոփայական, բ) ինստիտուցիոնալ, գ) թեմատիկ (մարդու թեման տարբեր մտածողների փիլիսոփայական հայեցակարգերում), դ) ըստ գիտական դպրոցների (XX դարի գերմանական փիլիսոփայական մարդաբանությունը) և ե) ներառական (մարդաբանական ուսմունքների համալիր և միջգիտակարգային բնույթը)[14]:

Դասական փիլիսոփայական մարդաբանության ավանդական թեմաներն են՝ մարդու ծագումը, նրա բնության և էության հիմնախնդիրները, մարդկային կեցության մոդուսները (կյանք-մահ, լինել-ունենալ) (Է. Ֆրոմ), ճակատագիր-ազատություն, միայնակություն-կապվածություն, մարմնականություն-ոգեղենություն, կյանքի իմաստ-«էկզիստենցիալ վակուում» (Վ. Ֆրանկլ), հոգու և մարմնի փոխհարաբերությունը, Ես-Դու-Ուրիշը հարաբերությունները (Մ. Բուբեր), անհատի, անձի և ինքնության հիմնախնդիրները, մարդու էկզիստենցիալ սուբյեկտիվության ձևերը (կարոտ, թախիծ, անտարբերություն, հուսահատություն, ամոթ, մեղք և այլն), մարդու էկզիստենցիալ գոյության օբյեկտիվացման ձևերը (խոստովանություն, օրագիր, մասնավոր նամակագրություն, հիշողություններ, ինքնակենսագրություն և այլն):

Այն փիլիսոփաները, ովքեր հերքում են փիլիսոփայական գիտելիքի շրջանակներում փիլիսոփայական մարդաբանության՝ որպես մարդու մասին մետաֆիզիկական հայեցակարգի գոյությունը, այդ հանգամանքը հիմնավորում են այն դիտարկմամբ, որ XX դարի վերջին քառորդից մինչ այսօր չի ստեղծվել մարդու մասին որևէ նոր, նշանակալի փիլիսոփայական ուսմունք: Ըստ այդմ ժամանակակից փիլիսոփայական մարդաբանությունը գոյություն ունի ոչ թե որպես փիլիսոփայական գիտելիքի առանձին, առաջատար ուղղություն, այլ միայն որպես մարդաբանական տարբեր հիմնախնդիրների ամբողջություն: Իսկապես, անցյալ դարի 90-ական թվականներից սկսած, փիլիսոփայական մարդաբանությունը կարծես «մշակութային դադար» է հայտարարել[15], իսկ նրա առարկան այլևս «ստվերում է»[16]: Փիլիսոփայական մարդաբանության խնդրակարգը «յուրացնում» են գիտության փիլիսոփայությունը, պոստմոդեռնիզմը, վիրտուալ ռեալության փիլիսոփայությունը: Ֆ. Դոլմեյրը, վերլուծելով այդ իրողության պատճառները առանձնացնում է երկու կարևոր որոշարկիչներ՝ փիլիսոփայական և աշխարհաքաղաքական: Պատճառների առաջին խմբին դասվում են նախորդ փիլիսոփայության և մշակույթի նկատմամբ ծայրահեղ նիհիլիստական և հա-

---

[14] Տե՛ս **Дорофеев В.** О статусе философской антропологии // Рефлексии, 2011, № 2(4), էջ 17:

[15] Տե՛ս **Смирнов С. Л.** Философская антропология // Человек, 2003, № 4:

[16] Տե՛ս **Долмейр Ф.** Возвращение философской антропологии: субъективные размышления // Человек., 2010, № 4, էջ 5:

կամարդասիրական վերաբերմունքով բնութագրվող «սուբյեկտի մահը», «հեղինակի մահը» և «մարդու մահը» պոստմոդեռնիստական գաղափարները: Մշակույթի տարբեր ոլորտներում պոստմոդեռնիզմի լայն տարածումը հանգեցնում է փիլիսոփայական մարդաբանության գիտակարգային կարգավիճակի արժեզրկմանը: Ժակ Դերիդան հռչակում է «հակահումանիստական և հակամարդաբանական տեղատվության» վերահաս դարաշրջանի հաղթարշավի մասին: Ֆ. Դոլմեյրի համոզմամբ՝ փիլիսոփայական մարդաբանության գիտակարգային կարգավիճակի արժեզրկման երկրորդ պատճառը համաշխարհայնացման տեմպերի աննախադեպ արագացումն է, ինչը հանգեցնում է «սպառողականության գլոբալ միօրինականացմանը»: Դրան նպաստում են նաև գիտությունների և գիտական աշխատակարգերի բուռն զարգացումը: Օրինակ, կենսաբժշկության և գենային ինժեներիայի գաղափարներով և պրակտիկաներով պայմանավորված՝ մարդու ըմբռնման կենսաբանական ռեդուկցիոնիզմը կամ տեղեկատվական ռեդուկցիոնիզմը, որը մարդուն մեկնաբանում է սոսկ որպես համացանցի կեղծ (քվազի) սուբյեկտ: Բայց Ուլրիխ Բեկի կողմից մանրամասնորեն հետազոտված քաղաքակրթական ռիսկերի ժամանակակից հասարակությունում փիլիսոփայական մարդաբանությունը մոռացության մատնելը անշնորհակալ գործ է: Օրավուր աճող տնտեսական, սոցիալական, ռազմաքաղաքական, տարածաշրջանային և աշխարհաքաղաքական, էկոլոգիական մարտահրավերներն ու փորձությունները մարդուն հասցնում են մարդկայինի գոյութենական եզրագծին, դրանից անդին իշխում են անմարդկայինը, ապակառուցողականը: Այս երևույթի մասին են վկայում թերիանտրոպիան[17] և տրանսհումանիզմը[18]: Թերիանտրոպիայի գաղափարախոսության համաձայն՝ մարդն իրեն նույնականացնում է որևէ կենդանու հետ և իր կյանքն ու կենսակերպը կազմակերպում տվյալ կենդանու գազանաբարո վարքին համապատասխան: Ն. Ս. Կուռեկը[19] տարբերակում է գազանաբարո հոգու և գազանաբարո վարքի հետազոտության երկու ուղղություն: Համանման վարքի ուսումնասիրության առաջին արդյունքները ներկայացրել է դեռևս Արիստոտելը: XIX դարում ձևավորվում են մարդու ֆիզիկական և հոգեկան վերասերմանը նվիրված որոշ գիտական տեսություններ, ո-

[17] Թերիանտրոպիա (հուն. «theríon» [θηρίον]- «վայրի կենդանի» կամ «գազան» (ուղղակի կաթնասուն) և «anthrōpos» [ἀνθρωπος]- «մարդ»): Թերիանտրոպիան համոզմունք է, որ մարդը մասամբ ոչ մարդկային կենդանի է: Ակադեմիական գրականության մեջ կարծիքները տարբեր են, թե դա հոգեկան հիվանդություն է, թե հոգևոր համոզմունք: Արևմուտքում այն գրեթե միշտ ուսումնասիրվում է հոգեբուժության ասպարեզում: Երբեմն դրա փոխարեն օգտագործվում է «զոոանտրոպիա» եզրույթը:

[18] Տրանսհումանիզմ (լատ. trans-միջոցով, հանուն և homo-մարդ) – մարդու մտավոր և ֆիզիկական հնարավորությունների բարելավումն ու կատարելագործումը քաջալերող փիլիսոփայական հայեցակարգ և միջազգային շարժում, որի նպատակը մարդկային գոյության անցանկալի ընթացակիցների (ցավ, տառապանք, հիվանդություն, անգամ մահ) վերացումն է:

[19] Տե՛ս **Курек Н. С.** Звероподобное поведение. Линии Аристотеля и Фрейда // Человек, 2009, № 1:

ռոնք այդ գործընթացը մեկնաբանում են որպես ինվոլյուցիայի անկասելի արդյունք: Զ. Ֆրոյդի կարծիքով, մարդու գազանաբարո վարքի պատճառը այլազան հոգեկան հիվանդություններն են (հոգեկան ռեգրեսիա դեպի զոոֆոբիա և տոտեմիզմ): Երկրորդ ուղղությունը տրանսհումանիզմն է: Այս ուղղության հիմնական գաղափարը և վերջնական նպատակը հետմարդու՝ որպես ոչ մարդկային սուբստրատով և ոչ մարդկային կենսասոցիալական գոյաձևով ապրող մարդկային նոր ցեղի ստեղծումն է[20]: Երկու ուղղություններն էլ անդառնալիորեն իրենց կապերը խզում են հումանիզմի հետ, այն հումանիզմի, որտեղ մարդն ընկալվում է որպես բարձրագույն արժեք և գերագույն նպատակ: Այս գաղափարախոսությունները մարդկային վարքի ապակառուցողականության բազմաթիվ դրսևորումների ոչ համարժեք պատասխանն են: Վերլուծելով մարդկային վարքի ապակառուցողականության դրսևորումները՝ Վ. Բուկրեևը[21] ներկայացնում է դրանց որոշ բնութագրական հատկանիշներ: Դրանք են՝ մարդկային բնության անկայունությունը, փոխադարձ օտարումը, սեռերի միջև բնական տարբերությունների կորուստը, վարքի ոչ համարժեքությունը, պատմական հիշողության կորուստը, հոգևոր կյանքի բարձրագույն ձևերի հանգեցումը վիտալ-մարմնական պարզունակ ձևերի, խոսքի ձևախեղումը, անձնական անկախության աստվածացումը և այլն: Թեև այս թվարկումը համակարգայնացված չէ և որևէ ընդհանուր հիմունքից զուրկ է, բայց, ցավ ի սիրտ, քաղաքակրթական փոխակերպումներին և բժշկատեխնոլոգիական զարգացումներին զուգընթաց՝ անընդհատ ընդարձակվելու հստակ միտում է դրսևորում: Ապամարդկայնացման չարաղետ գործընթացն սկսում է իր ավերիչ հաղթարշավը: Ահա թե ինչու վերոգրյալ հիմնախնդիրների պարզ թվարկումն իսկ բավարար է հասկանալու համար, որ սրանք մետաֆիզիկական լուրջ անդրադարձի կարոտ խնդիրներ են, ուստի համանման գաղափարախոսությունների և ժամանակակից մարդու ապակառուցողականության այլևայլ դրսևորումների հետազոտությունն այսօր փիլիսոփայական մարդաբանության ամենահրատապ և կարևորագույն խնդիրներից է: Ի վերջո, փիլիսոփայական մարդաբանության ամենամեծ ու վեհ կոչումը ապամարդկայնացումից մարդու՝ որպես առանձնահատուկ կենսասոցիալական տեսակի փրկությունն է:

Հետարդիական աշխարհում փիլիսոփայական մարդաբանության կարևորման նշանակալի մեկ այլ դրդապատճառ է շատ տարածված այնպիսի մի երևույթ, ինչպիսին **Էսկապիզմն**[22] է: Ժամանակակից աշ-

---

[20] Տե՛ս **Летов О. В.** Человек и «сверхчеловек»: этические аспекты трансгуманизма // Человек, 2009, № 1:

[21] Տե՛ս **Букреев В. С.** Проблема человека в современной философской антропологии // Вестник РФО, 2006, № 3(39):

[22] Էսկապիզմ (անգլ.՝ escape-«փախչել»)՝ խուսափում կյանքում տհաճ, ձանձրալի իրողություններից՝ հատկապես այլ՝ ավելի հետաքրքիր, բայց անիրական բաների մասին կարդալու, մտածելու միջոցով, տեղափոխություն առօրյա իրականությունից այլ գոյություն, այլ իրականություն, այլ աշխարհ, փախուստ իրականությունից:

խարհում գիտության և տեխնոլոգիաների բուռն զարգացմամբ պայմանավորված՝ օբյեկտիվ (բնություն) և մարդու կողմից ստեղծված սուբյեկտիվ (սոցիալական, գեղարվեստական և այլն) ռեալություններից զատ՝ ձևավորվում է նոր՝ կեղծսուբյեկտային համակարգչացանցային ինտերնետ-ռեալությունը, որտեղ մարդիկ ներկայացված են մարմնականությունից զուրկ՝ զուտ մտածողության ձևով (համացանցաբնակներ, հակերներ և այլն)։ Ժամանակակից աշխատակարգերի օգնությամբ կառուցարկված այդ ռեալությունն օրավուր ավելի ու ավելի շատ մարդկանց է ներքաշում իր միջավայր, զբաղեցնում նրանց մտքերը, ժամանակը, պարտադրում էսկապիստական ապրելակերպ, մարդկանց հեռացնում կյանքի իրական, բարդ խնդիրների մասին որոշումներ կայացնելուց։ Ըստ էության, սա ոչ այլ ինչ է, քան ազատությունից փախուստի նոր ձև։ Ինտերնետ-ռեալության թիկունքում կանգնած են ժամանակակից աշխարհի այնպիսի ազդեցիկ ու հզոր ուժեր, ինչպիսիք են համակարգիչներ և ինտերնետ ծրագրեր արտադրող ընկերությունները, տեղեկատվական ալիքների սեփականատերերը, տեղեկատվական հասարակության և համակարգչային-վիրտուալ աշխարհի մասին տարատեսակ տեսությունների հեղինակները և այլն։ Հետարդիական աշխարհում մինչև տառաճանաչ դառնալը երեխաները վաղուց արդեն հմտորեն օգտվում են smart սարքավորումներից, ժամանակի մի զգալի հատված տրամադրում են համակարգչային խաղերին։ Ձևավորվում է մարդու մի նոր տիպ՝ Homo virtualis-ը, նրա համար վիրտուալ աշխարհն ավելի ռեալ և անհրաժեշտ է, քան իրական աշխարհը. նա ուզում է ապրել իր նմանների միջավայրում, շփվել իր նմանների հետ։ Ուրիշներն իր համար եթե ոչ թշնամի, ապա առնվազն ոչ յուրային, օտար են, հետևաբար՝ պոտենցիալ առումով վտանգավոր։ Այս տիպի մարդիկ ունեն իրենց լեզուն, իրենց արժեքները, միմյանց հետ հաղորդակցվելու միայն իրենց բնորոշ եղանակները, բառապաշարը հարուստ չէ, հաճախ օգտվում են միայն իրենց հասկանալի հապավումներից։ Մարդկանցից օտարված Homo virtualis-ը հակասություններով լեցուն, դրամատիկ կեցության օտարված, խորթ զավակն է։ Անդրանցական վիրտուալ աշխարհն աստիճանաբար կլանում է ժամանակակից մարդուն։ «Դա փախուստ է սուբյեկտայնությունից և ազատությունից,-նկատում է Վ. Ա. Կուտիրևը,- ըստ էության, դա ոչ այլ ինչ է, քան փախուստ իրականությունից։ Իրականության անգիտակցական, իսկ գուցե արդեն գիտակցական մերժումն ազդարարում է վիրտուալի հաղթանակը ռեալի նկատմամբ։ Տեղեկատվական-նորարական քաղաքակրթությունը դառնում է

Homo virtualis-ի (ոչ)կյանքի կերպը»[23]։ Փաստորեն, մարդկանց հարաբերությունների մերձավոր ապագան ուրվագծվում է որպես (առանց օրգանների) մարմնի (Ժ. Դելյոզ) և առանց կենդանի խոսքի, ջերմ ու մտերմիկ անմիջական շփումների, սոսկ «ուղեղից- ուղեղ» վիրտուալ

[23] **Кутырев В. А**. Крик против небытия // Вопросы философии, 2008, № 8, с. 69.

համակեցություն: Մեռուկացված մարդու կաթվածահար այս հասարակությունը ցանցային հաղորդակցության ցանկալի իդեալն է:

Վտանգավոր այս իրավիճակը հաղթահարելու, Ես-ի ու Դու-ի և Ես-ի ու Մենք-ի հոգևոր- մարմնական, առավել ևս հոգևոր անմիջական, կենդանի շփումն ապահովելու առնչությամբ անփոխարինելի են փիլիսոփայական մարդաբանության դերն ու նշանակությունը: Կեղծ սուբյեկտային վիրտուալ ռեալությունը մարդկային իրական կյանքի նկատմամբ չպետք է ունենա որևէ բացառիկ մենաշնորհ, առավել ևս փոխարինի նրան: Մարդու մեջ կան այնպիսի դրական որակներ (այլասիրություն, հերոսականություն, նվիրում և այլն), որոնք զարգացնելով և որոնց վրա հենվելով՝ հնարավոր է կատարելագործել սոցիալական միջավայրը և միջանձնային հարաբերությունները, մարդու հոգեբանական պաշարներն ամրապնդելով՝ օգնել նրան՝ հարմարվելու կեցության նոր իրողություններին ու իրադարձություններին[24]: Դրա համար անհրաժեշտ է զարգացնել մարդու մասին հենց իր իսկ գիտելիքները, հաշվի առնել իրականացվող տնտեսական, սոցիալական և ինստիտուցիոնալ բարեփոխումների մարդաբանական տեսանկյունները, միշտ հիշել, որ կյանքը ո՛չ հանդիսախաղ է և ո՛չ էլ տոն. կյանքը դժվար զբաղմունք է, և նրա միակ չափանիշը պետք է լինի ոչ թե երկարատևությունը կամ հաճոյաշատ օրերի առատությունը, այլ այն, թե ինչպես է այն օգտագործվում: Նրանք, ովքեր յուրաքանչյուր արշալույս դիմավորում են որպես կյանքի սկիզբ, իսկ վերջալույսը՝ ավարտ, և այդ կարճատև կյանքերից յուրաքանչյուրը նշում որևէ բարի արարքով՝ ակնթարթն իսկ հագեցնելով մարդկային խորին բովանդակությամբ, ապրում են լիարժեք, իմաստավորված ու արժանապատիվ կյանքով:

Եվ այսու, քանի դեռ գոյություն ունի կենսասոցիալական մարդ տեսակը, նա միշտ էլ մետաֆիզիկական և էկզիստենցիալ անդրադարձի կարիք կունենա: Ուստի վաղ է մոռացության մատնել և հրաժարվել փիլիսոփայական մարդաբանության հետազոտական հարուստ գործիքակազմից: Օգնելու համար մարդուն, ով ապրում է տարատեսակ ռիսկերի ու սպառնալիքների, հոգսերի ու տագնապների ժամանակակից աշխարհում, փիլիսոփայական մարդաբանությունը հրատապ շատ խնդիրների լուծման համար կարող է ավելի քան օգտակար և արդյունավետ լինել:

ГАГИК СОГОМОНЯН – ***Научный статус философской антропологии.*** – Выбор человека всегда имеет эсхатологическую перспективу, исходя из того, по какому пути он пойдет- жизни или смерти – от этого зависит ход человеческой истории и ее завершение. Цивилизация постепенно приближается к чрезвычайно опасному пределу, полному соблазнов, за которым влияние неконтролируемых сил может оказаться фатальным для человека. Пришло время протрезветь. В этом отношении роль и значение философской антропологии неоспоримы.

[24] Տե՛ս **Гуревич П. С.** Антропологическая катастрофа // Своб. Мысль. 1997, № 11, էջ 44:

В философской антропологии выделяют два направления: философско-антропологический эссенциализм и экзистенциализм. Эссенциалистская философская антропология исследует отношения человека с природой, обществом и культурой, а экзистенциалистская философская антропология исследует отношения человека с Богом, с другими людьми и с самим собой. В статье представлены предмет, проблемы и научный статус философской антропологии и обосновывается мысль, что преждевременно отказываться от богатого исследовательского инструментария философской антропологии. В результате анализа автор приходит к выводу, что человек обладает такими положительными качествами, опираясь на которые, можно улучшить социальную среду и межличностные отношения. Для этого необходимо развивать знания о самом человеке, учитывать антропологические аспекты реализуемых экономических, социальных и институциональных реформ.

Ключевые слова: *философская антропология, антропологическая философия, философскоантропологический эссенциализм, философскоантропологический экзистенциализм, постмодернизм, философия виртуальной реальности, териантропия, трансгуманизм, дегуманизация, эскапизм*

GAGIK SOGHOMONYAN – ***Scientific Status of Philosophical Anthropology.*** – Man's choice always has an eschatological perspective, the course of human history and its completion depends on which path he takes: life or death - Civilization is gradually approaching a tempting but extremely dangerous limit, beyond which the influence of uncontrollable forces can be fatal for a person. It's time to sober up. In this regard, the role and importance of philosophical anthropology is undeniable.

Two directions are distinguished in philosophical anthropology: philosophical anthropological essentialism and existentialism. Essentialist philosophical anthropology examines man's relationship with nature, society, and culture, and existentialist philosophical anthropology examines man's relationship with God, others, and himself. The subject, problems and scientific status of philosophical anthropology are presented. The idea is that it is too early to forget and abandon the substantiated rich research toolkit of philosophical anthropology. As a result of analysis, the author comes to the conclusion that a person has some positive qualities, developing and relying on those it is possible to improve the social environment and interpersonal relationships. For this, it is necessary to develop the knowledge about the person himself, taking into account the anthropological aspects of the economic, social and institutional reforms being implemented.

Key words: *philosophical anthropology, anthropological philosophy, philosophical anthropological essentialism, philosophical anthropological existentialism, postmodernism, philosophy of virtual reality, therianthropy, transhumanism, dehumanization, escapism*

ԲԱՆԲԵՐ ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ. ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ, ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ
2023. № 3. 17-28 *Փիլիսոփայություն*
https://doi.org/10.46991/BYSU: E /2023.14.3.017

ԱՐՏԱՅՈԼՈ՞ՒՄ, ԹԵ՞ ՊԱՏՐԱՆՔ: ՕՆԼԱՅՆ ԵՎ ՕՖԼԱՅՆ ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ՄԻՋԱՆՁՆԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

ԱՐՄԱՆ ՂԱՐԱԳՈՒԼՅԱՆ

Թվային դարաշրջանում օնլայն և օֆլայն ինքնությունների փոխհարաբերության խնդիրը դարձել է միջանձնային հաղորդակցության հետազոտությունների կարևոր թեմաներից մեկը: Ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաները սոցիալական փոխազդեցությունների և հաղորդակցության նոր հնարավորություններ են տալիս մարդու սոցիալականացման բնատուր հակումներն առարկայացնելու համար: Սոցիալական մեդիա հարթակները և հեռավար կապի միջոցները փոխում են աշխատանքի, կրթության և ժամանցի մասին ավանդական ըմբռնումները՝ ստեղծելով միջանձնային հարաբերությունների նոր՝ վիրտուալ մոդել: Մարդիկ գնալով ավելի շատ ժամանակ են անցկացնում թվային աշխարհներում և այնտեղ իրենց ներկայացնելու համար ստեղծում են իրենց թվային կերպարները: Արդյունքում, ժամանակակից մարդը սկսում է միաժամանակ ապրել երկու աշխարհներում՝ ֆիզիկական (օֆլայն) և թվային (օնլայն): Սույն հոդվածում քննարկվում է այն հիմնահարցը, թե ինչ է իրենից ներկայացնում օնլայն ինքնությունը, ինչպես է այն հարաբերվում ֆիզիկական կյանքում դրսևորվող օֆլայն ինքնության հետ, և վերջապես՝ ինչ հեռանկարներ և խնդիրներ է ձևավորում օնլայն-օֆլայն երկատվածությունը միջանձնային հարաբերությունների համատեքստում: Հատուկ ուշադրության է արժանացել այն հիմնախնդիրների վերլուծությանը, որոնք կարող են առաջանալ ֆիզիկական կյանքի տարբեր հատվածներ թվային կյանքով փոխարինելիս, ներկայացված են խնդրահարույց իրավիճակների խորքային պատճառները, ուրվագծված են այն նոր հնարավորությունները, որոնք կարող է ընձեռել թվային տեխնոլոգիաների խելամիտ օգտագործումը:

Բանալի բառեր – *տեղեկատվական հասարակություն, սոցիալական ցանցեր, թվային աշխարհ, օնլայն ինքնություն, միջանձնային հաղորդակցություն, վիրտուալ մարդ*

Մարդը սոցիալական էակ է և, անկախ մշակույթից, անհատականությունից կամ խառնվածքից, ունի սոցիալական փոխազդեցությունների և հաղորդակցվելու բնածին ցանկություն: Ժամանակակից տեղեկատվական աշխարհում այս ցանկությունն առարկայանալու նոր եղանակներ է ստանում՝ հանձին համացանցի, սոցիալական ցանցերի և վերջիններիս հետ եկած հաղորդակցության թվային համակարգերի, որոնք հասանելի են հասարակության լայն շերտերին: Այսօր շատ երկրներում

համացանցը և մասնավորապես սոցիալական մեդիա հարթակները ծառայում են որպես հաղորդակցության և տեղեկատվության ստացման ու տարածման հիմնական գործիքներ։ Վիճակագրական տվյալների համաձայն՝ ներկայումս ամբողջ աշխարհում համացանցից օգտվողների թիվն արդեն հատում է 5 միլիարդը։ Միայն Facebook սոցիալական ցանցի ակտիվ օգտատերերի թիվը գրեթե 3 միլիարդ է։ ՀՀ-ում էլ թվայնացման բարձր միտումները տեսանելի են. 2023 թ. հունվարի դրությամբ՝ երկրի բնակչության 78,6%-ը կամ 2,18 միլիոն մարդ օգտվում է համացանցից, ընդ որում մեր բնակչությունն ամենից շատ օգտվում է հենց սոցիալական մեդիա հարթակներից՝ Facebook, Youtube, Instagram[1]։

2019 թվականից, երբ COVID 19-ի ի հայտ գալով ամենուր սկսեցին կիրառվել զանազան սահմանափակումներ, և մարդիկ անցան լոքդաունի ռեժիմի, թվային տեխնոլոգիաների և վիրտուալ պլատֆորմների օգտագործումը որակական նոր աճ ապրեց։ Ավելին, համաճարակը որոշ ոլորտների համար թվային տեխնոլոգիաների և վիրտուալ հարթակների կիրառումը դարձրեց պարտադիր։ Հեռավար աշխատանքի, կրթության և ժամանցի մասին նոր ըմբռնումները ստեղծեցին միջանձնային հարաբերությունների նոր՝ «վիրտուալ մոդել», որն իր հերթին սկսեց վերափոխել հաղորդակցության մասին նախկինում եղած ընկալումները։ Նոր մոտեցումները սկսեցին վերաիմաստավորել մարդու պատկերացումները արտաքին աշխարհում իր տեղի ու դերի մասին, երբ պարզվեց, որ հնարավոր են սոցիալական փոխազդեցությունները բազմաթիվ ոլորտներում՝ չլքելով սեփական տան հարմարավետության պայմանները։

Այսօր՝ COVID 19-ից հետո էլ, տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների քովիդյան իներցիան պահպանվում է։ Արդի թվային համակարգերը շարունակում են ուղղակիորեն ազդել մարդու առօրյայի վրա՝ որոշելով նրա աշխատանքի, կյանքի, հանգստի, ապրելու և նույնիսկ մտածողության կերպը։

Թվային հեղափոխությունը մեծապես ազդում է նաև մեր կապի և հաղորդակցման ավանդական ուղիների վրա։ Սոցիալական մեդիա հարթակները, հաղորդագրությունների հավելվածները և տեսակոնֆերանսի գործիքները անհատներին միմյանց են կապում՝ անտեսելով աշխարհագրական սահմանները։ Ժամանակակից մարդն այժմ ունի աշխարհի ցանկացած անկյուն տեսազանգեր կատարելու և ակնթարթային հաղորդագրություններ ուղարկելու անսահման հնարավորություն։ Կայքերը, ինչպիսիք են Facebook-ը և X-ը (նախկին Twitter), տարածք են տրամադրում համախոհներին՝ փոխանակելու ամենատարբեր գաղափարներ։

[1] Տե՛ս Digital 2023: Armenia, https://datareportal.com/reports/digital-2023-armenia (հասանելի՝ 20.09.2023)։

Այլոց հետ կապի մեջ գտնվելու նման արդիական հավելվածները փոփոխում են մարդու կյանքի համայնապատկերը՝ առաջարկելով վարքագծային նոր սկզբունքներ և մոտեցումներ: Այս նոր օրինաչափություններն ավելի ցայտուն են դառնում, քանի որ մարդիկ հետզհետե ավելի շատ ժամանակ են անցկացնում համացանցում և ցանցային սարքերում, քան միմյանց հետ: Շատ դիպուկ է նկատում Շ. Թարքլը. «Ոչ շատ վաղուց մարդիկ զբոսնում էին գլուխները բարձր՝ նայելով ջրին, երկնքին, ավազին և միմյանց ողջունելով: Այսօր նրանք հաճախ քայլում են գլուխները կախ՝ ինչ-որ բան գրելով: Նույնիսկ երբ մարդիկ իրենց ընկերների, ծնողների և երեխաների հետ են, միևնույնն է, յուրաքանչյուրը նայում է սեփական սարքին»[2]: Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման արդի մակարդակը թույլ է տալիս եզրակացնել «կոճակային մշակույթի», «վիրտուալ հաղորդակցության» և առհասարակ նոր «վիրտուալ մարդու» առաջացման մասին, որի համար տեղեկատվական տեխնոլոգիաների միջոցով այլ մարդկանց հետ փոխգործակցությունը ոչ թե պարզապես իրավիճակի թելադրանք է, այլ միջանձնային հարաբերությունների նախընտրելի տարբերակ: Տեխնիկական միջոցների օգնությամբ ստեղծված մերօրյա վիրտուալությունը իր ընձեռած հաղորդակցական հնարավորությունների շնորհիվ դարձել է մեր առօրեականության որոշիչ տարրերից մեկը, քանի որ թույլ է տալիս իր տիրույթ տեղափոխել մեր «կոլեկտիվ խաղը»՝ նոր մակարդակում թելադրելով սեփական կանոնները[3]: Ժամանակակից մարդը հետզհետե իրեն ավելի հարմարավետ է զգում թվային այս նոր աշխարհներում գործելիս, և, վերջին հաշվով, նույնիսկ այն մարդկանց կյանքը, որոնք անմիջական շփում չունեն համակարգչի կամ բջջային հեռախոսի հետ, կախված է տեղեկատվական տեխնոլոգիաներից, քանի որ դրանք են ընկած հասարակական կյանքի կազմակերպման և կառավարման արդի համակարգերի հիմքում: Ուստի պնդումները, որ մենք այսօր գործ ունենք ոչ թե պարզապես տեխնոլոգիական նոր կարգի, այլ ավելի շուտ սոցիալական նոր իրականության հետ, միանգամայն հասկանալի են[4]:

Սոցիալական այս նոր իրականությունը մղում է առցանց «համայնքների» և միջանձնային հարաբերությունների նոր ձևերի առաջացման, որոնցում էլ խմորվում է այնպիսի ֆենոմեն, ինչպիսին է օնլայն՝ թվային ինքնությունը: Թվային աշխարհում ներկայանալի լինելու համար անհատները մշակում և ներկայացնում են իրենց «վիրտուալ

---

[2] **Turkle Sh.,** The Flight From Conversation, https://www.nytimes.com/2012/04/22/opinion/sunday/the-flight-from-conversation.html (հասանելի՝ 20.09.2023):

[3] Տե՛ս **Яралян К.** Виртуальность как трансцендентная среда экзистирования // Բանբեր Երևանի համալսարանի. Փիլիսոփայություն, հոգեբանություն, 2016, № 2 (20), էջ 30:

[4] Տե՛ս **Иноземцев В.** Современное постиндустриальное общество: природа, противоречия, перспективы, М., Логос, 2008, էջ 88:

կերպարները», որոնք ձևավորվում են սոցիալական մեդիա հարթակներում կատարվող տարատեսակ գրառումների և թվային բովանդակության միջոցով: Ընդլայնվում են նաև ինքնարտահայտման եղանակները՝ սեփական օնլայն ինքնությունը ձևավորելով ըստ իրենց ցանկության:

Այս գործընթացն իր հերթին առաջ է քաշում թվային աշխարհում ներկայացվող օնլայն ինքնության և ֆիզիկական աշխարհում դրսևորվող օֆլայն ինքնության[5] միջև սահմանների և դրանցից բխող վարքագծերի փոխհարաբերության հիմնահարցը: Այդ համատեքստում առաջնային հարցերից մեկն այն է, թե որքանով են համահունչ մարդու օնլայն կերպարները օֆլայն «ես»-ի հետ. արդյո՞ք այն դերերը, որ մարդիկ որդեգրում են թվային տարածություններում, հարստացնում են «իրական կյանքում» նրանց ունեցած հարաբերությունները, թե՞ միգուցե բարդացնում և հակադրվում են դրանց: Այս հարցերին պատասխանելու համար նախ անհրաժեշտ է տարբերակել քննարկվող ինքնությունների հիմնական առանձնահատկությունները: Օֆլայն ինքնությունը բազմաշերտ կառույց է, որը զարգանում է աստիճանաբար, երկար ժամանակահատվածի ընթացքում՝ կրելով անհատի կյանքի սոցիալական և մշակութային համատեքստերի ազդեցությունը: Դա այն ընդհանրական արժեքների համախումբն է, որոնք ոչ միայն կատարում են մերձեցման ու նույնականացման, այլև նմանների ու մերձավորների միջև առանձին մարդու անկրկնելիության ձևավորման, այսինքն՝ ուրիշներից տարբեր լինելու և ինքն իրեն նույնական մնալու գործառույթ[6]: Օֆլայն ինքնությունը ձևավորվում է բազմաթիվ գործոնների ազդեցությամբ՝ վաղ տարիքում ընտանիքում սոցիալականացման փորձառությունից մինչև կյանքի ավելի հասուն փուլերում տեղի ունեցող գործընթացները: Ընտանիքը, կրթական հաստատությունները և սոցիալական շրջանակները նպաստում են մեր արժեքների, համոզմունքների և վարքագծի նորմերի ձևավորմանը, իսկ ավելի ուշ, մշակութային տարբեր ազդեցություններով պայմանավորված, այս ամենին ավելանում են մեր ինքնության այլ նրբերանգներ ևս՝ գենդերային դերեր, սոցիալական պարտականություններ, աշխարհայացքային հիմնադրույթներ և այլն: Այս տարաբնույթ ազդեցությունների միջոցով անհատները զարգացնում են բազմաշերտ մի ինքնություն, որն ընդհանուր առմամբ կայուն և հետևողական, բայցևայնպես փոփոխություններ ընդունող մի կառուցվածք է:

---

[5] «Օֆլայն ինքնություն» արտահայտությունն իմաստ ունի միայն այն դեպքում, երբ ֆիզիկական աշխարհի հարաբերություններում ձևավորվող մարդու ինքնությունը համեմատում ենք վերջին տասնամյակների վիրտուալ տարածություններում մարդու ինքնաներկայացումն ապահովող թվային կառուցվածքների հետ:

[6] Տե՛ս **Է. Հարությունյան,** Ազգային ինքնություն. «սերունդների աշխարհ» և «ժամանակակիցների աշխարհ» // Բանբեր Երևանի համալսարանի. Փիլիսոփայություն, Հոգեբանություն, 2019, № 2 (29), էջ 4:

Ի հակադրություն վերոնշյալի՝ օնլայն ինքնությունը շատ ավելի դինամիկ և փոփոխական է: Այն ոչ թե կյանքում ձեռք բերված փորձառությունների բյուրեղացման և իմաստավորման արդյունք է, այլ ավելի շուտ ցանկալի «ես»-ի կերպարով ներկայանալու հնարավորություն: Թվային հարթակները, մասնավորապես սոցիալական ցանցերը, անհատներին առաջարկում են մի տարածք, որտեղ նրանք կարող են գիտակցաբար որոշել, թե ինչպես են ուրիշներն ընկալելու իրենց: Ընդ որում, սոցիալական մեդիայի իրականությունում մարդը սահմանափակված չէ մեկ եզակի ինքնությամբ: Կարելի է առանց ջանքերի որդեգրել բազմաթիվ, երբեմն իրար հետ անմիջական կապ չունեցող դերեր կամ կերպարներ: Օրինակ՝ կարելի է լինել ակտիվիստ, որը X-ում (նախկին Twitter) քարոզչություն է ծավալում սոցիալական տարբեր խնդիրների լուծման համար, փիլիսոփա, ով անձնական բլոգում ներկայացնում է խելամիտ մտորումներ, և կատակերգու, որը հումորային բովանդակություն է ստեղծում TikTok-ում: Միաժամանակ գոյություն ունեցող օնլայն տարբեր կերպարներից յուրաքանչյուրը բավարարում է սոցիալական կամ հոգեբանական կարիքների մի որոշակի խմբի և նոր շերտեր ավելացնում շրջապատի կողմից անհատի ընկալմանը:

Եթե միջանձնային օֆլայն հարաբերություններում մարդկանց՝ միմյանց վրա թողած տպավորությունները կախված են վերահսկելի և պատահական բազմաթիվ հանգամանքներից, հաճախ ձևավորվում են վայրկյանների ընթացքում և պահպանվում տարիներով, ապա թվային տարածքները մարդկանց տալիս են գործիքներ՝ պարբերաբար վերախմբագրելու իրենց օնլայն կերպարները: Օրինակ՝ սոցիալական մեդիա հարթակներում հնարավոր է գիտակցված ընտրել, թե անձնական որ լուսանկարները կարող են «կիսվել», ինչ է գրվելու օգտատիրոջ «Իմ մասին» բաժնում, և կյանքի որ իրադարձություններն են հրապարակվելու: Առցանց ինքնության ձևավորման ճկունությունը հատկապես ակնհայտ է այն դեպքերում, երբ մարդիկ գիտակցաբար ընտրում են, թե իրենց կյանքի հատկապես որ կողմերն են հանրությանը ցուցադրելու, օրինակ, իրենց ճանապարհորդությունները, ձեռքբերումները կամ սոցիալական հավաքույթները՝ միաժամանակ սահմանափակելով կամ ամբողջովին բաց թողնելով կյանքի մնացած՝ իրենց կարծիքով ոչ նախընտրելի կողմերը: Այս ամենի համատեքստում լուրջ հարց է առաջանում, թե արդյո՞ք ցանկալի «ես»-ի մասին անհատի պատկերացումները բխում են նրա խորքային նպատակներից և ձգտումներից: Կարծում ենք, որ այստեղ կան մտահոգության լրացուցիչ առիթներ, որովհետև ժամանակակից թվային աշխարհում հետևողականորեն տարածվող նորմերը, «օրինակելի» կյանքի մասին պատկերացումները և արժեհամակարգերը արդեն կանխադրում են վիրտուալ տիրույթում ներկայացվող ցանկալի «ես»-ի պատկերացումները: Ընդ որում, յուրաքանչյուր

նոր օգտատիրոջ անհատականությունը ենթարկելով ակտիվորեն քարոզվող կերպարներին՝ այդ նորմերը դառնում են է՛լ ավելի կարծրատիպային և պարտադրող։

Նման իրավիճակում օնլայն և օֆլայն «ես»-երի միջև բարդ փոխազդեցությունը հաճախ հանգեցնում է երկատվածության։ Մի կողմից կարելի է մտածել, որ օնլայն ինքնությունների արհեստականորեն մշակված բնույթը հանգեցնում է որոշակի սոցիալական աններդաշնակության, երբ դիմացինի օնլայն և օֆլայն ընկալումների միջև առաջանում են բացեր, մյուս կողմից՝ կարելի է ենթադրել, որ այդ երկուսը կարող են գոյություն ունենալ որպես միմյանց փոխլրացնող ձևեր։ Օրինակ՝ թվային տարածությունը կարող է փորձադաշտ ծառայել ինքնության այն դրսևորումների համար, որոնք մարդը կզգուշանար անմիջականորեն ցուցադրել իրական կյանքում։ Օնլայն ինքնությունը կարող է նաև ծառայել որպես հարթակ «ես»-ի այն դրսևորումներն ուժեղացնելու համար, որոնք այլ կերպ իրական կյանքում կարող են և ընդգծված չդրսևորվել։ Այս գործոնը ակտուալ կարող է լինել հատկապես ավանդապաշտական միտումներ ունեցող հասարակություններում, որտեղ առօրյա կյանքում ինքնաարտահայտվելու հնարավորությունները կանոնակարգված են տարբեր բնույթի հասարակական նորմերով, և առկա է որոշակի կաշկանդվածություն հասարակական նոր դերեր փորձարկելիս։ Թեև այս թեմայով ՀՀ-ում չունենք հետազոտական ամբողջական տվյալներ, սակայն հոդվածում արծարծվող հիմնախնդիրը երիտասարդության հետ քննարկելիս ոմանք խոստովանել են, որ օնլայն կերպարներն իրենց օգնել են ընդհանուր առմամբ ավելի վստահ և ակտիվ կյանք վարել։

Գոյություն ունեն մի քանի գործոններ, որոնց շնորհիվ օնլայն կերպարը կարող է դրական ազդեցություն ունենալ անձի վրա։ Այսպես, օնլայն ինքնության կառուցումը կարող է նպաստել ռեֆլեքսիայի, ինքնաճանաչման և ստեղծագործական գործընթացների ակտիվացմանը, քանի որ այն դեպքերում, երբ օնլայն կերպարը զանգվածային կաղապարի պարզ վերարտադրություն չէ, անհատները գիտակցված կերպով սկսում են մտածել այն խնդրի շուրջ, թե ինչպես կուզենային ընկալվել ուրիշների կողմից։ Տարբեր համայնքների և գաղափարների հետ առցանց շփումը կարող է նպաստել մարդու անձնային աճին, սեփական աշխարհայացքի ընդլայնմանը, համայնքային այս կամ այն հարցի շուրջ ջատագովության տարբեր խմբերում ներառվելուն, որոնք որոշակիորեն կարող են փոխել նաև մարդու վարքագիծը ցանցից դուրս։ Սեփական ես-ի հետ փորձարկումները թվային աշխարհում թվում են նվազ ռիսկային, որովհետև ինչ-որ ոլորտում ձախողվելու դեպքում օգտատերը մտքում միշտ պահում է կոճակի մի սեղմումով համապատասխան վիրտուալ կյանքը ջնջելու հնարավորությունը։

Այսպիսով, օնլայն և օֆլայն ինքնությունները փոխազդում են միմյանց վրա՝ մի դեպքում հարստացնելով մարդու ներաշխարհը, մյուս դեպքում առաջացնելով կտրտվածություն և իրար հետ անմիջական կապ չունեցող բազմակի կյանքերով ապրելու իրավիճակ:

Օնլայն և օֆլայն կերպարների հնարավոր երկփեղկվածությունը կարող է առաջացնել հեռուն գնացող հետևանքներ նաև միջանձնային հաղորդակցության տեսանկյունից: Մի կողմից՝ սոցիալական ցանցերն առաջարկում են խմբի կողմից ընդունված լինելու և հավանություն ստանալու լայն հնարավորություններ՝ ցանցում «կիսվող» լուսանկարների, կարգավիճակի թարմացումների և հանրային զրույցների միջոցով, մյուս կողմից՝ այս հարթակները նաև վայրեր են, որտեղ կենսական խնդիրների ընկալումները լարվում և սրվում են՝ ծնելով միջանձնային հարաբերությունների լրիվ նոր մարտահրավերներ: Վերջիններիս շարքում նկատելի տեղ են զբաղեցնում թերընկալումը և էմպատիայի պակասը, այսպես կոչված՝ «համատեքստի փլուզումը» և անլիարժեքության աճը, որոնք էական ազդեցություն ունեն թե՛ օնլայն և թե՛ օֆլայն փոխազդեցությունների որակի և ամբողջականության ապահովման վրա:

Առցանց հաղորդակցություններում դիմացինին թերի ընկալելու ավելի մեծ հավանականությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ այստեղ բացակայում է դեմառդեմ շփումների բազմերանգությունը, որտեղ տոնայնությունը, ձայնի ելևէջումը, շարժուձևը և դեմքի արտահայտությունը օգնում են ասելիքը դարձնելու ավելի արտահայտիչ և ընկալելի: Թվային հաղորդակցության մեջ նման ոչ վերբալ ազդանշանների բացակայությունը նեղացնում է հաղորդակցության կապուղին, նվազեցնում է շփման մեջ հետադարձ կապերը օգտագործելու հնարավորությունը և հաղորդագրությունների ավելի ազատ ու սուբյեկտիվ մեկնաբանման պատճառ դառնում: Նման իրավիճակում առաջացող թյուրըմբռնումները հաճախ կարող են լարել միջանձնային հարաբերությունները: Ու թեև էմոջիները և «խոսակցության» տոնայնություն նշող որոշ սիմվոլներ նպատակ ունեն լրացնելու այդ բացը, այդուհանդերձ դրանք չեն կարող փոխարինել բոլոր այն նրբերանգային նշաններին, որոնք օգտագործվում են դեմառդեմ շփումներում: Ավելին, դրանց նշանակությունը կարող է տարբեր լինել տարբեր մշակույթներում և սոցիալական խմբերում, ինչն իր հերթին ավելացնում է դիմացինին թերի հասկանալու հավանակությունը:

Թվային դարաշրջանը, փոխակերպելով մեր հաղորդակցման ձևերը, լուրջ ազդեցություն է թողնում նաև մտերմության և կարեկցանքի զգացողությունների վրա: Թեպետ թվային կապերը կարող են ստեղծել զգացմունքային աջակցության որոշակի տպավորություն, սակայն իրական մտերմություն հաստատելու համար կան սահմանափակում-

ներ ֆիզիկական ներկայության և զգայական նշանների բացակայության պատճառով: Արդյունքում, հաղորդակցության ոչ վերբալ բաղադրիչների բացակայությունը օնլայն տիրույթում թուլացնում է էմպատիա ապրելու հնարավորությունը, որը հիմնված է ուրիշների զգացմունքները հասկանալու, նաև սեփականը արտահայտելու կարողության վրա[7]: Սա կարող է հետևողական ազդեցություն ունենալ օֆլայն հարաբերությունների վրա, քանի որ օնլայն տիրույթում էմպատիկ դրսևորումների նվազումը ի վերջո հանգեցնում է հուզական հետաճի (ատրոֆիա), որի դեպքում դեմառդեմ խորը և իմաստալից հաղորդակցության համար անհրաժեշտ հմտությունները սկսում են աստիճանաբար խամրել: Սա կարող է առաջացնել մի արատավոր շրջան, որտեղ մարդիկ ինչքան շատ են օգտվում միջանձնային փոխազդեցությունների թվային միջոցներից, այնքան ավելի նվազում է իրական կյանքում ավելի խորությամբ իրար հետ շփվելու նրանց կարողությունը:

Թվային աշխարհում հաղորդակցության մյուս կարևոր խնդիրը համատեքստի փլուզումն է: Իրական կյանքում մենք սովորաբար հարմարեցնում ենք մեր վարքագիծը մեր շրջապատին՝ ընտանիք, ընկերներ, գործընկերներ և այլն: Օնլայն հարթակները բոլոր այս խմբերը հաճախ միավորում են մեկ լսարանում, ինչը հանգեցնում է հաղորդակցության «համատեքստի փլուզման»[8]: Երբ աշխատանքային ղեկավարը, մանկության ընկերները և նոր ծանոթները նույն առցանց լսարանի մաս են, շատ դժվար է որոշել, թե ինչպես պետք է մարդը ներկայացնի ինքն իրեն: Դա կարող է հանգեցնել սոցիալական դերերի շփոթության, որտեղ անհասկանալի են դառնում մասնագիտականի և անձնականի, հանրայինի և մասնավորի սահմանները: Համատեքստի փլուզումը կարող է նպաստել տեղեկատվական գերծանրաբեռնվածությանը, քանի որ անհատները սկսում են արձագանքել տարբեր կարծիքների և փորձառությունների շատ ավելի լայն շրջանակի, քան դա կլիներ նրանց իրական կյանքում: Ու թեև դա կարող է լինել կենսափորձը հարստացնող գործոն, բայցևայնպես այն կարող է նաև հանգեցնել տեղեկատվական պղպջակների, որտեղ հակադիր կարծիքները անտեսվում կամ մարգինալացվում են անհատի աշխարհայացքում՝ նվազեցնելով դրա ամբողջականությունը և համակարգայնությունը: Արդեն քննարկված՝ թվային հարթակներում այսօր ներկայացվող ցանկալի «ես»-ի կերպարը ևս յուրահատուկ տեղեկատվական պղպջակ է՝ հիմնված առավելապես սպառողական հասարակության արդի արժեհամակարգի վրա: Համապատասխանաբար՝ սոցիալական մեդիա

[7] Տե՛ս **Small G., Vorgan G.,** IBrain: Surviving the Technological Alteration of the Modern Mind, Harper Collins e-books, 2008, էջ 117:

[8] Տե՛ս **Marwick A., Boyd D.,** I Tweet Honestly, I Tweet Passionately: Twitter Users, Context Collapse and the Imagined Audience. New Media & Society, 2011, 13, էջ 115: http://dx.doi.org/10.1177/1461444810365313

հարթակներում մարդկանց կյանքը հաճախ ավելի դյութիչ է, հուզիչ և հաջողակ: Մարդիկ այնտեղ անհամեմատ ավելի շատ գրառումներ են կատարում իրենց հաջողությունների, քան խնդիրների մասին: Խնամքով մշակված նման պատկերների հետ համեմատվելու մղումը գրեթե ինքնաբուխ է, իսկ արդյունքում ձևավորվող անլիարժեքության զգացումը՝ չափազանց հավանական: Սա հաճախ ստեղծում է մշտական լարվածություն՝ կարգավորելու սեփական կյանքը՝ առցանց տիրույթի արտաքին «փայլին» համապատասխանությունն ապահովելու համար:

Հասարակական կյանքի այսպիսի «բեկումը» մարդկանց մղում է մտածելու, որ ուրիշներն ապրում են ընդհանուր առմամբ ավելի երջանիկ, ավելի հաջողակ կյանքով: Սեփական անձի հանրաճանաչությունը այլոց հավանումների, մեկնաբանությունների, հետևորդների քանակական չափորոշիչներով գնահատելու մոտեցումը ձևավորում է սոցիալական համեմատության նոր եզրեր[9]: Օգտատերը, իր ինքնագնահատականը նույնացնելով այդ ցուցանիշների հետ, ցածր համապատասխանության դեպքում է՛լ ավելի է խորացնում սեփական անլիարժեքության զգացումը, քանի որ սկսում է մտածել, որ չի համապատասխանում հաջողության ընդունված ցուցանիշներին: Օնլայն հարթակներում ներկայացվող այլոց իդեալականացված պատկերների և ապրելակերպի մշտական ազդեցությունը ժամանակի ընթացքում կարող է առհասարակ քայքայել մարդու ինքնագնահատականը:

Առցանց հարաբերությունների մակերեսայնությունը սրում է նաև միայնության և մեկուսացման զգացողությունները: 2018 թ. ԱՄՆ-ում կատարված ուսումնասիրությունները ցույց են տվել, որ այն դեռահասները, ովքեր համեմատաբար երկար ժամանակ են անցկացնում սոցիալական մեդիա կայքերում, ավելի հաճախ են ունենում դեպրեսիայի ախտանշաններ, քան նրանք, որոնց էկրանային ժամանակը ավելի քիչ է (ըստ այս հետազոտության՝ սոցիալական մեդիային հատկացվող ժամանակը օրական 30 րոպեով սահմանափակելը նկատելիորեն լավացնում է մարդու ինքնազգացողությունը)[10]: Նման դեպրեսիայի առաջացումը հիմնականում պայմանավորված է անբավարարության զգացումով և հասակակիցներին չհամապատասխանելու վախով, ինչը հատկապես սուր է ընկալվում դեռահաս աղջիկների շրջանում: Այսօր ԱՄՆ-ում յուրաքանչյուր 5 դեռահաս աղջիկներից 3-ը ունեն տխրության երկարատև զգացողություններ[11]:

---

[9] Տե՛ս **Gara T.,** Why Our Online Persona Is Needier Than Our Real One. https://www.wsj.com/articles/BL-234B-3249 (հասանելի՝ 20.09.2023):

[10] Տե՛ս **Melissa G. Hunt, Rachel Marx, Courtney Lipson, Jordyn Young,** No more FOMO: limiting social media decreases loneliness and depression // Journal of social and clinical psychology, dec 2018, vol. 37, issue 10, էջ 751-768, https://doi.org/10.1521/jscp.2018.37.10.751

[11] Տե՛ս Teen Girls Report Record Levels of Sadness, C.D.C. Finds, https://www.nytimes.com/2023/02/13/health/teen-girls-sadness-suicide-violence.html (հասանելի՝ 20.09.2023):

Սոցիալական համեմատությունների և անլիարժեքության զգացողության հիմնախնդիրները նոր չեն, սակայն թվային դարաշրջանը դրանք ընդլայնել է աննախադեպ չափերով: Թարմացումների, ծանուցումների և հրավերների մշտական տարափը ստեղծում է նաև առցանց գործունեությունը բաց թողնելու վախ (FOMO – fear of missing out)[12]: Սա կարող է հանգեցնել թվային կապի մեջ մնալու ստիպողական անհրաժեշտության՝ ի հաշիվ երես առ երես հարաբերությունների կրճատման: Որոշ դեպքերում ուրիշներին համարժեք կյանք ունենալու ներքին ճնշումը կարող է հանգեցնել նույնիսկ ֆիզիկական առողջության հետ կապված այնպիսի խնդիրների, ինչպիսիք են անքնությունը և սնվելու խանգարումները: Զարմանալի չէ, որ ի հակադրումն վերոնշյալ իրողությունների՝ ներկայումս ձևավորվում է մեկ այլ միտում. թվային տեխնոլոգիաներով գերհագեցած միջավայրում սկսել են վերաարժևորվել բացօթյա զբոսանքը, ընկերների հետ երես առ երես զրուցելը կամ բնության գրկում ժամանակ անցկացնելը: Ավելին, ֆեյսբուքի օգտահաշիվ չունենալը կամ բջջային ինտերնետի գործածումից ձեռնպահ մնալը դառնում են հպարտանալու առիթներ և կամային բարձր որակների նոր ցուցիչներ[13]:

Այսպիսով, միջանձնային հարաբերություններում ինքնության առցանց-օֆլայն փոխազդեցությունները պարուրված են բազմաթիվ նրբերանգներով: Ակնհայտ է մի բան, որ ներգրավվածության կանոնները այսօր հիմնովին փոխվել են, և դրանցում կողմնորոշվելը պահանջում է տեսական նոր հարացույցներ և թվային գրագիտության նոր ձևեր: Օրինակ, թեև այսօր (և հենց այս հոդվածում) այդքան քննարկվում է միջանձնային հարաբերություններում էմպատիայի պակասի հիմնախնդիրը, բայց որոշ դեպքերում ունենք նաև իրավիճակներ հակառակ արդյունքով. դեռահասների կողմից բջջային կապի օգտագործման հետազոտությունները ցույց են տալիս, որ փոքր խմբերի ներսում տեքստային հաղորդագրությունների քանակի ավելացումը նպաստում է ներխմբային համախմբվածության ուժեղացմանը[14]: Սա իր հերթին նշանակում է, որ օնլայն-օֆլայն աշխարհների տարանջատման մասին ժամանակակից պատկերացումները դեռևս իրենց ձևավորման փուլում են, և դրանք առավել ամբողջական դարձնելու համար հետևողական վերլուծությունների կարիքը ապագայում նկատելի է լինելու:

Ամեն դեպքում կարևոր է ամրագրել, որ օնլայն և օֆլայն ինքնութ-

---

[12] Տե՛ս **Jon D. Elhai, Jason C. Levine, Robert D. Dvorak, Brian J. Hall,** Fear of missing out, need for touch, anxiety and depression are related to problematic smartphone use, Computers in Human Behavior, Volume 63, 2016, էջ 510, https://doi.org/10.1016/j.chb.2016.05.079.

[13] Տե՛ս **Jurgenson N.,** The IRL Fetish, https://thenewinquiry.com/the-irl-fetish/ (հասանելի՝ 20.09.2023):

[14] Տե՛ս **Farman J.,** The Myth of the Disconnected Life, https://www.theatlantic.com/ technology/archive/2012/02/the-myth-of-the-disconnected-life/252672/ (հասանելի՝ 20.09.2023):

յունների փոխազդեցությունը ժամանակակից միջանձնային հարաբերությունների ծայրամասային բաղադրիչ չէ: Ուսումնասիրելով այս փոխազդեցությունը՝ մենք կարող ենք ավելի հստակ պատկերացում կազմել, թե ինչպիսի նրբերանգներ են հաղորդում ժամանակակից սոցիալական ցանցերը միջանձնային հարաբերություններին: Այս ըմբռնումը կենսական նշանակություն ունի ոչ միայն անհատական բարեկեցության, այլև հասարակության համախմբվածության տեսանկյունից՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ թվային դարաշրջանը գնալով ավելի մեծ ազդեցություն է թողնում և թողնելու է մեր կյանքում: Վիրտուալ կյանքը արդեն իրողություն է, այն շատ բազմաշերտ է, և որևիցե փիլիսոփայական գնահատական ի զորու չէ այն չեղարկելու: Հետևաբար, տեսական վերլուծության կարևոր նպատակներից է բացահատել այն հնարավորությունները, որոնց շնորհիվ հնարավոր կլինի ուժեղացնել նոր տեխնոլոգիաների ընձեռած՝ անձի զարգացման հնարավորությունները՝ միաժամանակ հնարավորինս նվազեցնելով այս ոլորտում ապակառուցողական ռիսկերը և կողմնակի ազդեցությունները:

АРМАН КАРАГУЛЯН – ***Отражение или мираж? Проблема соотношения онлайн и офлайн идентичностей в контексте межличностной коммуникации***. – Взаимосвязь между онлайн и офлайн идентичностями в современной цифровой эпохе является одним из ключевых в области исследования межличностной коммуникации. По мере быстрого развития современных технологий появляются новые, беспрецедентные пути социального взаимодействия, усиливая врожденное человеческое стремление к общению и социализации. Платформы социальных сетей, вместе с современными средствами дистанционного общения, меняют наши традиционные представления о работе, образовании и досуге. Эта трансформация вводит новую «виртуальную» модель межличностных отношений. Сегодня люди все больше погружаются в эти цифровые пространства, создавая уникальные онлайн-персоны для представления их виртуального «я». В результате люди теперь живут одновременно в двух параллельных мирах: реальном и цифровом. В этой статье рассматриваются тонкости онлайн идентичности, ее взаимодействие с нашей офлайн личностью. Статья изучает, как наши цифровые следы сочетаются или иногда расходятся с нашими реальными образами, новые вызовы и возможности современной динамики онлайн – офлайн идентичностей в контексте межличностных отношений. Кроме того, в данной работе предлагается системный обзор потенциальных проблем, возникающих при приоритете цифрового над реальным, а также освещаются возможные преимущества разумного использования цифровых технологий.

Ключевые слова: *информационное общество, социальные сети, цифровой мир, онлайн идентичность, межличностное общение, виртуальный человек*

ARMAN GHARAGULYAN – ***Reflection or Mirage? The Problem of the Relationship between Online and Offline Identities in the Context of Interpersonal Communication.*** – The relationship between online and offline identities in modern digital era is a pivotal in the realm of interpersonal communication research. As modern technology rapidly evolves, it brings forth unprecedented avenues for social interactions, amplifying inherent human need to connect and socialize. Social media platforms, along

with modern remote communication tools, are reshaping our conventional notions of work, education, and leisure. This transformation introduces a contemporary "virtual" framework for interpersonal relations. Nowadays individuals increasingly immerse themselves in these digital realms, crafting unique online personas to represent their virtual selves. Consequently, people now navigate two parallel universes: the tangible and the digital. This article delves into the nuances of online identity, its interplay with our real-world persona. It examines how our digital footprints mesh with, or at times diverge from, our real-world personas and the emerging challenges and opportunities of this online-offline dynamic within interpersonal relationships. Moreover, the piece offers a comprehensive review of potential issues stemming from prioritizing the digital over the physical, while also highlighting the possible advantages that prudent digital technology usage can bring.

Key words: *information Society, Social Networks, Digital World, Online Identity, Interpersonal Communication, Virtual Man*

ԲԱՆԲԵՐ ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ. ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ, ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ
2023. № 3. 29-39 *Փիլիսոփայություն*
https://doi.org/10.46991/BYSU: E /2023.14.3.029

Մ. Մ. ԲԱԽՏԻՆԻ ԵՐԿԽՈՍԱՅՆՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՄՇԱԿՈՒՅԹՆԵՐԻ ՓՈԽԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՁԵՎ

ՀՌԻՓՍԻՄԵ ԶԱՔԱՐՅԱՆ

Նորագույն ժամանակներում երկխոսության խնդիրը լայնորեն դիտարկվում է փիլիսոփաների, գրականագետների, լեզվաբանների, մշակութաբանների, արվեստաբանների և հասարակական մտքի պատմության այլ գիտաճյուղերի ներկայացուցիչների կողմից:

Ռուս փիլիսոփա, արվեստի տեսաբան, մշակութաբան Մ. Մ. Բախտինի երկխոսայնության տեսությունը 1960-ականների վերջից իր զգալի ազդեցությունն ունեցավ արևմտյան գրաքննադատական ու փիլիսոփայական մտքի զարգացման հարցում: Բախտինյան ընկալումներում երկխոսությունը կեցության հիմքն է. լինել նշանակում է երկխոսականորեն հաղորդակցվել: Համաձայն Մ. Բախտինի՝ ստեղծագործողը նոր ձևերի որոնումների ճանապարհին մշտապես երկխոսություն է ծավալում ավանդական ու նորարարական գեղարվեստական ստեղծագործությունների հետ: Նրա դատողությունների ելակետային հիմքը Ֆ. Մ. Դոստոևսկու հերոսների առանձնահատուկ երկխոսական հարաբերություններն են: Ֆ. Դոստոևսկին բախտինյան սահմանումներում իր բազմաձայն կերպարների հարստությամբ համաշխարհային գրականության մեջ ձևավորել է նորարարական հնարք՝ «բազմաձայն վեպի» սկզբնավորումը: Վերլուծելով Ֆ. Դոստոևսկու վեպերում ծավալված երկխոսությունների առանձնահատկությունները, պատկերելով մարդուն երկխոսության տարածության մեջ կերտելու հնարանքը՝ ցույց է տալիս երկխոսությունից դուրս մարդու լինելիության անհնարինությունը:

«Մշակութային երկխոսություն» հասկացությունը, որն առաջին անգամ կիրառվել է Մ. Բախտինի կողմից, ընկալվում է որպես մշակութային տարբեր շերտերի սերտ հարաբերակցություն մշակութային անցյալի հետ: Երկխոսական հարաբերություն, համաձայն նրա, կարող է դրսևորվել տարբեր նշանային համակարգերի միջև: Հետևապես՝ երկխոսությունը նաև մշակութաբանական երևույթ է:

Հոդվածը նվիրված է Մ. Բախտինի փիլիսոփայական հասկացությունների ձևավորման գործընթացի ուսումնասիրությանը, որը երկխոսությունը դիտարկում է որպես գոյաբանական կատեգորիա: Բախտինյան հայեցակարգերում երկխոսությունն ընկալվում է որպես «ես»-ի և «դու»-ի «հաղորդակցում» («ես» և «մյուս»), այսինքն՝ այն իր էությամբ նախ և առաջ սոցիալական բնույթի է:

Հոդվածի նպատակն է դիտարկել Մ. Բախտինի «երկխոսայնության» տեսության զարգացման ու դրսևորման առանձնահատկությունները, ցույց տալ երկխոսության գաղափարական և տեսական նախադրյալները, գաղափարների զարգացումը բախտինյան իմացաբանության մեջ՝ որպես մենախոսությունից տարբերվող մեթոդաբանական սկզբունք:

Բանալի բառեր – *երկխոսություն, մենախոսություն, բազմաձայնություն, մշակույթ, փիլիսոփայություն, տեքստ, գեղարվեստական կերպար, մշակութային երկխոսություն, միջտեքստայնություն, բազմաձայն վեպ*

Մշակութային փոխհարաբերակցության խնդրին անդրադարձել են իտալացի փիլիսոփա Ջ. Վիկոն, գերմանացի փիլիսոփա, ժամանակակից մշակույթի փիլիսոփայության հիմնադիրներից Օ. Ա. Ք. Շպենգլերը, ռուս սոցիոլոգ, մշակութաբան Ն. Յ. Դանիլևսկին, բրիտանացի պատմաբան, փիլիսոփա, մշակութաբան և սոցիոլոգ Ա. Թոյնբին, ինչպես նաև Լ. Ս. Վիգոտսկին, Մ. Ս. Կագանը, Լ. Ա. ֆոն Ֆոյերբախը և այլք:

XX դարում առանձնանում են հատկապես Մ. Բուբերի «Ես»-ի և «Դու»-ի, Կ. Յասպերսի էկզիստենցիալային հաղորդակցության հայեցակարգերը և Յու. Հաբերմասի խոսույթը (դիսկուրսը): Միխայիլ Բախտինը, կարելի է ասել, վերակառուցեց մշակութային հարաբերակցությունների մասին դիտարկումների զարգացման ընթացքը: XX դարավերջի եվրոպական ապաանհատականացված մշակութային ճգնաժամի համապատկերում ռուս փիլիսոփա, մշակութաբան, եվրոպական մշակույթի և արվեստի տեսաբան Մ. Բախտինն առաջինն առաջարկեց մշակույթը դիտարկել մենախոսական և երկխոսական փոխլրացնող-փոխպայմանավորող փոխհարաբերակցության դաշտում: Նա զարգացրել է միանգամայն նոր հայեցակարգ, համաձայն որի՝ պատմականորեն տարբեր մշակույթներ փոխազդեցությունների անսահման հնարավորություններով համագոյակցում են «Մեծ ժամանակի» անընդգրկելի տարածության մեջ և մշտապես երկխոսություն ծավալում: Մ. Բախտինի հայեցակարգերը լայն հեռանկարներ ունեն իրենց նորովի բացումների մեջ. բախտինյան երկխոսության հայեցակարգը մշակույթի ժամանակակից տեսությունների վրա էական ազդեցություն է թողել՝ իմաստավորվելով Վ. Ս. Բիբլերի, Յու. Մ. Լոտմանի և այլոց ուսումնասիրություններում: Միջտեքստայնության տեսության հիմքում Մ. Բախտինի կողմից առաջադրված «երկխոսայնություն» և մշակույթների «մեծ ժամանակի» («մակրոերկխոսության»)[1] հասկացություններն են, որի հիմնադրույթները հեղինակը ձևակերպել է դեռևս 1924 թ., մասնավորապես՝ «Բովանդակության, նյութի և ձևի խնդիրը բանավոր գեղարվեստական ստեղծագործության մեջ» աշխատությունում: «Երկխոսության» գաղափարը հեղինակը զարգացրել է «Դոստոևսկու ստեղծագործության հիմնախնդիրները» (1929 թ.) և «Դոստոևսկու պոետիկայի խնդիրները» (1963 թ.) ուսումնասիրություններում: Մ. Բախտինի երկխոսայնության գեղարվեստափիլիսոփայական տեսությունը, որը, ինչպես արդեն նշվեց, հիմնաքարային էր միջտեքստայնության տեսության ձևավորման հարցում, XIX դարի 60-70-ական թթ. ռուս մեծ գրող Ֆ. Մ. Դոս-

[1] Տե՛ս **Бахтин М. М.** К методологии гуманитарных наук // **Бахтин М. М**. Эстетика словесного творчества. М.: Изд. Искусство 1979, էջ 373.

տոևսկու հեղինակած նոր՝ «բազմաձայն վեպ» գեղարվեստական մեթոդի համապարփակ տեսական իմաստավորումն է: Շարունակելով նախորդած գրական ավանդույթները՝ Ֆ. Դոստոևսկին համաշխարհային գրականություն է բերում նորարարական հնարք՝ «բազմաձայն վեպը». «Ինքնակա և անմիաձուլելի ձայների ու գիտակցությունների, լիարժեք ձայների իսկական բազմաձայնությունն իրապես Ֆ. Դոստոևսկու վեպերի հիմնական առանձնահատկություններն են: Նրա ստեղծագործություններում ոչ թե բազում կերպարներ ու ճակատագրեր են զուգակցվում միասնական օբյեկտիվ մի աշխարհում՝ հեղինակային միասնական գիտակցության լույսի ներքո, այլ հենց իրավահավասար գիտակցությունների բազմավորությունն է իրենց աշխարհներով այստեղ զուգակցվում՝ միասնության մեջ պահպանելով սեփական անմիաձուլելիությունը»[2]: Փիլիսոփայական, գեղագիտական մեկնակետային նման տարողությամբ էլ, ինչպես հավաստում է հեղինակը, Ֆ. Դոստոևսկին նոր էջ է բացում համաշխարհային գրականության պատմության մեջ: Ամբողջության մեջ նրա ստեղծագործական երևույթը, գեղարվեստական համակարգը կենսական, հոգեբանական ու ոճական բացառիկ հայտնագործություն են: Ֆ. Դոստոևսկու երկերում երկխոսությունն ընթանում է տեքստից դեպի իրականություն տարածության մեջ, ինչը ստեղծագործողին թույլ է տալիս իմաստավորել իրականությունը: Հեղինակը որոշակի ու հստակ, իմաստային և արտահայտչական տեսակետից տարողունակ բառակիրարկումներով հասել է հերոսների գեղարվեստական շարժունակ կերպարայնության: Այդ հերոսները մեր մտապատկերում առարկայանում-կերպարանավորվում են շոշափելիության աստիճանի պատկերային, դիտողական և մինչև իսկ լսողական զուգորդություններով:

«Լինել նշանակում է երկխոսականորեն հաղորդակցվել»[3], -գրում է Մ. Բախտինը: Հիմնված լինելով բազմաձայնության տեքստային երևույթի վրա՝ բախտինյան հասկացակարգերում «երկխոսություն» (հուն. dialogos (Διάλογος) - «խոսակցություն», «զրուցակցություն») հասկացությունը ձեռք է բերում խորքային նշանակություն՝ ներառելով բառի ներքին երկխոսությունը, մտածողության երկխոսությունը, միջանձնային հաղորդակցությունը, միջմշակութային երկխոսությունը, քրոնոտոպների փոխհարաբերությունը, երկխոսությունը հեղինակի ու ընթերցողի միջև, բառի ու արտահայտության, ձևի ու իմաստի միջև փոխհարաբերությունը, մասի և ամբողջի, տեքստի ու համատեքստի, բառի ու համատեքստի փոխադարձ կապերը (քանի որ յուրաքանչյուր բառ, իր իմաստային աստիճանական ընդարձակումով հանդերձ, իմաստավորվում է համատեքստում) և այլն: Ըստ հեղինակի՝ Ֆ. Դոստոևսկու վեպերը գրվել

[2] **Бахтин М. М.** Проблемы поэтики Достоевского. М.: Изд. Художественная литература. 1972, с. 114.

[3] Նույն տեղում, էջ 45:

են «բազմաձայնային» (պոլիֆոնիկ) շարադրանքով, իսկ Ֆ. Դոստոևսկու «բառի» բնույթը «երկխոսական» է: Ֆ. Դոստոևսկու վեպերն այսպիսով կատարյալ են նաև «բառի մեջ ամփոփված էությունը ճանաչելու» գեղագիտական խնդրի յուրացման և այդ հիմքով հոգեբանական բազմաշերտ ընդհանրացումների ու բազմաձայնության իմաստով:

Միջտեքստային փոխհարաբերությունների էությունը, համաձայն Մ. Բախտինի, հեղինակի և ընթերցողի մտքի, «միջսուբյեկտիվության», անցյալի, ներկայի ու ապագայի «ձայների» երկխոսությունն է: Քանի որ հաղորդակցումն անհնար է առանց լեզվի, խոսքը բախտինյան դիտարկումներում ընկալվում է որպես լեզվական միավոր, լեզվական «կենսական» միավոր՝ հաղորդակցման գործառույթում, խոսքային գործունեության շարժունակ համակարգում՝ «իր կենդանի ամբողջության մեջ» (Մ. Բախտին): Այսպիսով, բախտինյան երկխոսականության գաղափարը տեսական կառույց է, որը միջմշակութային փոխազդեցություն-փոխհարաբերությունը դիտարկում է լեզու-մշակույթ հարաբերակցության տեսանկյունից, «մշակույթների և լեզուների դարավոր բարդ պայքարում»[4]: Տեքստը, ինչպես լեզուն, իր գոյաբանական բնույթով երկխոսական է: Այն երկխոսական ամբողջություն է, որն ապահովում է հեղինակի և ընթերցողի համատեղ գործունեության հնարավորությունը, հեղինակ-ընթերցող երկխոսության միջոցով ընդհանրական իմաստ արարելու ներուժը: Տեքստի իմաստը հանդես է գալիս որպես համընդհանուր սկիզբ, որն ընկալվում է երկխոսության մեջ: Տեքստի կարևորագույն գործառույթներից են միավորել հեղինակին և ընթերցողին, տեղափոխել նրանց կարգավորված-համակարգված փոխազդեցության երկխոսական դաշտ:

Համաձայն Մ. Բախտինի՝ բառը երկխոսական բնույթի է, քանի որ պատկանում է միաժամանակ և՛ հասցեատիրոջը (ռեցիպիենտին), և՛ խոսքային սուբյեկտին[5]: Բառը ոչ միայն լեզվական նշան և լեզվի հիմնական միավոր է, այլև կենդանի հնչերանգ, ձայն, որն իր հորձանուտում տարրալուծում է տարածությունն ու ժամանակը: Բառ-ձայն համաձուլվածքն է արժևորում յուրաքանչյուր արտահայտության տեղն ու ժամանակը: «Ձայն» հասկացությունը բախտինյան ձևակերպումներում բովանդակային առումով շատ ավելի լայն է. այն ներառում է «և՛ աշխարհայացքը, և՛ մարդու ճակատագիրը: Մարդը, որպես ամբողջական ձայն, մտնում է երկխոսության մեջ: Նա դրան մասնակցում է ոչ միայն իր մտքերով, այլ իր ճակատագրով, իր ողջ անհատականությամբ»[6] ու

---

[4] **Бахтин М. М.** Формы времени и хронотопа в романе // Вопросы литературы и эстетики. М.: Изд. Художественная литература, 1975, с. 446.

[5] Տե՛ս **Кристева Ю.** Бахтин, слово, диалог и роман // Французская семиотика: От структурализма к постструктурализму. Пер. с франц., сост., вступ. ст. Г. К. Косикова. М.: ИГ Прогресс, 2000, էջ 429:

[6] **Бахтин М. М.** Собрание сочинений. Т 5. Работы 1940-х - начала 1960-х годов. М.: Изд. Русские словари, 1997, с. 351:

էությամբ։ Երկխոսությունը բախտինյան ընկալումներում նախ և առաջ գիտակցությունների երկխոսությունն է, որը թույլ է տալիս բազմաձև առնչություններով ու համանմանություններով «ես»-ի և «դու»-ի տարբերակված էությունների փոխազդեցությունների միջակայքում հասկանալ «իրեն» և «մյուսին», ընկալել նրանցից յուրաքանչյուրի ներսում ու դրսում ծավալվող աշխարհն ամենաբազմազան առնչություններով ու փոխակերպության ընթացքով։ Այս ամենը հիմք է տալիս խոսելու նաև հեղինակի հոգևոր աշխարհի ու մղումների մասին։ Դեռևս 1920-ական թթ. գրված «Հեղինակը և հերոսը գեղագիտական գործունեության մեջ» փիլիսոփայական տրակտատում գրում է. «Աստծուց անդին, բացարձակ այլության հանդեպ վստահությունից այն կողմ ինքնագիտակցությունն ու ինքնարտահայտումն անհնար են»[7]։ «Ես»-ի և անտես ու անձև «Այլ»-ի սկիզբները համաձուլված են մարդկային գիտակցության ու մտքի տրամաբանական խորքերում, հուզական-զգայական շերտերում։ «Ես»-ի և «Այլ»-ի այդ համընդհանրությամբ ու անքակտելիությամբ է պայմանավորված մարդկային գոյության ամբողջականությունը։

Երկխոսության առանձնահատուկ բնույթից ելնելով՝ հարկ ենք համարում առանձնացնել երկխոսության երկու տեսակ՝ ինքնակա (մենախոսություն) և կախյալ (երկխոսություն)։

Երկխոսության ինքնակա տեսակը կամ մենախոսությունը կարելի է ամբողջ ստեղծագործության համար ելակետային սկիզբ ընդունել այն տրամաբանությամբ, որ դա այս կամ այն չափով անկախ է, թեև ողջ տեքստը ուղղակիորեն թե անուղղակիորեն հարաբերակցված է վերջինիս հետ։ Այս մոտեցումը պայմանավորված է նախ այն հնարավոր ընկալումով, թե որոշ մենախոսություններ հնարավոր է դիտարկել ու իմաստավորել ընդհանրական համատեքստից դուրս։ Մենախոսությունն անկախ է պայմանականորեն, որովհետև դա ևս, որպես կանոն, հարկ է՝ իր մեջ կրի իմաստային կամ խորքային այնորակ մի շերտ, որի առանցքային էությունը հնարավոր կլինի տեքստի մեջ ընդլայնել ու զարգացնել, որով կապահովվի տեքստի բովանդակային շարժումը, հակառակ դեպքում այդ ինքնորենությունն ընդհանուրի հարաբերությամբ կմնա իմաստային կրավորական-ածանցյալ դիրքում։

Երկխոսության առանձնահատկություններից է նաև նրա իմաստաբովանդակային շարժունակությունը (դինամիկան)։ Երկխոսության մեջ է, ընդհանուր առմամբ, պատկերվում և դրա միջոցով է առաջ մղվում գեղարվեստական տեքստի իմաստային «շարժումը»։ Հենց այստեղից էլ սկիզբ է առնում այն, որ յուրաքանչյուր փոքրիշատե ամբողջական ու ավարտուն ձևավորված երկխոսություն, հաղորդելով էական կամ երբեմն նաև, այսպես ասած, «էպիզոդական» տեղեկույթներ, ընդհանուր առմամբ ունենում է իր թեմայի ընդարձակման ու զարգաց-

[7] **Бахтин М. М.** Эстетика словесного творчества. М.: Изд. Искусство, 1979, с. 126.

ման հեռապատկերը: Նախ ձևավորվում են համապատասխան միջավայրը, հանգամանքները, ուր զարգանալու է գործողությունն ու երկխոսությունը, տեղի են ունենալու որոշակի դեպքեր ու իրողություններ: Այլ կերպ ասած՝ հեղինակը նախ հերոսներին ներքաշում է որոշակի դրության, իրավիճակների, բնականոն հարաբերակցության մեջ՝ սրանցով գեղարվեստական միասնական համակարգում պայմանավորելով վերջիններիս բարդ ու բազմաշերտ էութենական շարժումն ու գործողությունների տրամաբանությունը:

Ըստ թեմատիկ-գաղափարական կողմի՝ երկխոսությունը պայմանականորեն կարելի է բաժանել երեք տեսակի՝ բնութագրական, պատկերագրական ու պատմողական (նարատիվ): Առաջին տեսակում բնութագրվում են որևէ գաղափար, իրողություն, հանգամանք և այլն, երկրորդում պատկերվում է, երրորդում՝ պատմվում: Մեր այս տարբերակումը, անշուշտ, ենթադրական բնույթի է, քանզի երկխոսությունը, ըստ էության, կարող է նաև պարունակել դրանցից միայն մեկը, երկուսը կամ բոլորը և այլն: Ընդհանուր առմամբ՝ առավել հաճախ զուգադրաբար դրսևորվում են առաջին երկու տեսակները՝ բնութագրականն ու պատկերագրականը: Այս պարագայում երկխոսության մեջ պատկերվող երևույթը զուգահեռաբար նաև բնորոշվում-ընդհանրացվում է: Որոշակիորեն ուրվագծվում են նաև հեղինակային հայեցակետն ու խոհերը, հոգեմտակերտվածքը, անհատական աշխարհընկալման այն ամբողջությունը, որն ինչ-որ չափով արտացոլում է նաև ընդհանրականը:

Մ. Բախտինը գիտակցությունների երկխոսության մասին իր դիտարկումներում առանձնակիորեն եզրագծել է «գիտակցություն» ու «ենթագիտակցություն» երևույթների սահմանները՝ որոշ իմաստով նաև հակադրվելով ֆրոյդյան ենթագիտակցության ամենակարող ուժի տիրապետությանը: Ի տարբերություն գիտակցության՝ ենթագիտակցությունը ենթադրում է բազմակերպ տեղեկույթների գերզգայական տիրապետում, ինչը կարող է դրսևորվել բնազդի, նախազգացության կամ ներըմբռնողական ենթադրումների կերպով: Մ. Բախտինը, ի հակակշիռ ընդունված ավանդական ընկալման, ենթադրում է, որ ենթագիտակցականը, անգիտակցականը, գերգիտակցականն ու գիտակցությունից վեր ծավալվող այլ «ուժային կենտրոնները» սահմանափակում են գիտակցության ազատ ծավալումներն ու «կազմաքանդում» անհատականությունը[8]:

«Երկխոսություն» հասկացությունն ունի մտածողության, ընկալման երկխոսական բնույթ, որը միաժամանակ գտնվում է ամենուր, թևածում է ներկայում, ճեղքում է անցյալի ու ապագայի կրավորական սահմանները: Ստեղծագործությունը «ապրում է դարերով, այսինքն՝ մեծ ժամանակում, ընդ որում հաճախ (իսկ մեծ ստեղծագործությունե-

[8] Առավել մանրամասն տե՛ս **Волошинов В. Н.** («Бахтин под маской» (1)). Фрейдизм. М.: Изд. Лабиринт, 1993:

ը մշտապես) առավել բուռն ու հագեցած կյանքով, քան սեփական արդիականության մեջ»[9]: Մ. Բախտինը կարևորում է հիշողությունների և ընդհանուր անցյալի կամ անցյալների մասին պատկերացումների, «անցյալի անվերջ կերպափոխման» նշանակությունը: «Միայն հիշողությունը կարող է առաջ գնալ, ոչ թե մոռացությունը»[10],- գրում է նա: «Ամենայուրօրինակն ու նորը կրում են ամենաշատ հիշողությունը, թարմացնում են անցյալի առավելագույնը, բացահայտում այն, ինչով պտղավորված էր»[11], ինչը հանգեցնում է նոր համատեքստում մտքի անվերջ նորացման: Այս տեսանկյունից Մ. Բախտինի երկխոսության կաղապարատիպը կապված է սեփական հայեցակարգի ու մեծ ժամանակի՝ մշակութային ավանդույթի հետ:

Ֆ. Դոստոևսկու գրական ստեղծագործություններում հերոսները ոչ թե նույնանում են հեղինակին, այլ հեռանում են նրանից՝ ապրելով սեփական ինքնուրույն կյանքով, և հեղինակը, տեղակայվելով սեփական գեղարվեստական աշխարհի տիրույթներից դուրս ծավալվող սահմաններում, գեղարվեստորեն կերպավորված հերոսների հետ հարաբերվում է իբրև առանձին անհատականությունների: Առաջ է քաշվում հերոսի ինքնադրսևորման ազատության խնդիրը: Հերոսը դրսևորվում է կոնկրետ միջավայրում, գործողության/շարժման ընթացքում, մյուս հերոսների հետ հարաբերության մեջ, և հեղինակը, մնալով հարակից իր դիրքում, թույլ է տալիս հերոսին ինքնուրույնաբար դրսևորել սեփական վարքագիծը, էությունը, խոհերն ու բնութագրումները՝ թողնելով հերոսներին գեղարվեստական աշխարհի «մեծ երկխոսության» մեջ ազատորեն հաղորդակցվելու միմյանց հետ՝ այդկերպ ձևավորելով բազմաձայնություն: Այսպիսով, հեղինակը, որը ձևավորում և ուղղորդում է տեքստում երկխոսությունը, հանդես չի գալիս երկի կենտրոնական դիրքում, այլ շարժվում է դեպի «բազմաձայն երկխոսության» տարածություն՝ բազմաթիվ տեքստային աշխարհների «հատման կետ»: Չնայած այն հանգամանքին, որ հեղինակը դիտում է գեղարվեստական իրադարձություններն ավելի ամբողջական չափագծով, քան ցանկացած կերպար, նա դադարում է լինել ստեղծագործության միակ «ելման կետը», և հեղինակային ձայնը ներակայորեն միահյուսվում է հերոսների ձայներին՝ ձևավորելով բարդ «բազմաձայնային» ամբողջություն:

Երկխոսությունը բախտինյան ընկալումներում մշակութաբանական երևույթ է: Այն, նրա կարծիքով, դուրս է գալիս անմիջական (ուղղակի) հաղորդակցության սահմաններից, և երկխոսություն է ձևավորվում տարբեր նշանագիտական համակարգերի միջև: Երկխոսական

---

[9] **Бахтин М. М.** Эстетика словесного творчества, 1979, с. 331.

[10] **Бахтин М. М.** Творчество Франсуа Рабле и народная культура средневековья и Ренессанса. М.: Изд. Художественная литература, 1990, с. 533.

[11] **Бахтин М. М.** Собрание сочинений. Т. 5, М., 1997, с. 424.

հարաբերությունները ներթափանցում են նաև առանձին ստեղծագործության, խոսքի և բառի խորքերը. լեզվական նշանները կարող են լավագույն կերպով պատկերել մարդկային մտածողության, ինչպես և հաղորդակցության առանձնահատկությունները: Երկխոսական հարաբերություններ կարող են ծավալվել տարբեր նշանային համակարգերի՝ գիտական, գրական, երաժշտական, գեղանկարչական ստեղծագործությունների միջև, երբ արվեստների պատկերները հաղորդակցորեն կապված են: Երկխոսական են նաև մարդկային գիտակցությունը, լինելիությունն ընդհանրապես: Այլ կերպ ասած՝ երկխոսությունն իր էությամբ ի սկզբանե սոցիալական բնույթ ունի:

Մ. Բախտինի բնորոշմամբ՝ «օտար մշակույթին մենք նոր հարցեր ենք առաջադրում, որպիսիք նա ինքն իր առջև չի դրել, մենք նրա մեջ մեր այդ հարցերի պատասխաններն ենք փնտրում, և օտար մշակույթը պատասխանում է մեզ՝ բացելով մեր առջև իր նոր կողմերը, նոր իմաստային խորքերը»[12]: Անցյալի, ներկայի ու գալիքի ներքին կապը, ներկա իրականության և հեռանկարի ընկալումը մշակութային երկխոսության մեջ, ուր ժամանակը գերխիտ է, տարածությունը՝ լուսանցիկ, թույլ են տալիս նվաճել գեղարվեստական նոր աշխարհներ, բացել նոր հորիզոններ՝ լայնացնելով մշակութային հունը նոր սոցիոմշակութային համընդհանրական տարածության համապատկերում: Համաշխարհային և ազգային հին ու նոր մշակութային ավանդների ոսկեթելերն են հյուսում գեղարվեստական որոնումների ուղեծիրը: Մշակույթի հարատև հոսքը մշտապես իր մեջ է առնում նոր հոսանքներ: Մշակույթի ակունքներն անհատնում են, հարստացուցիչ հոսանքները շարունակ նորացող ու հավերժական են:

Մ. Բախտինի հիմնադրույթներից կարևորագույնը գեղարվեստական երկի բովանդակության ընթացքն ու կառուցվածքային ձևերի միասնությունը կազմակերպող միջոցների առանձնահատուկ բնույթի խնդիրն է, գեղարվեստական իմաստի յուրահատկությունը, շարժումը ժամանակի և տարածության մեջ, որը որոշակիորեն նրբերանգվում կամ վերակառուցվում է «մեծ ժամանակներում», մշտապես ներթափանցում ու ամրակայվում է մշակութային հիշողության խորքերում: 1970-ականների սկզբին գրում է. «Իմաստը ներունակորեն անսահման է, բայց այն կարող է արդիականանալ միայն մեկ այլ (օտար) իմաստի հետ հաղորդակցվելով…»[13], կամ, ինչպես Նարեկացին է ասում. «Հնի լրումն ու սկիզբն էր նորի» («Մատյան ողբերգության», ԺԴ: Գ): Այս պարագայում Մ. Բախտինն ակամա անդրադառնում է նաև գրական ավանդույթի և նորարարության խնդրին՝ այն դիտարկելով որպես «երկխոսություն» անցյալի մշակույթի հետ: Ավանդույթների գեղարվեստական յուրացումն իմաստավորված է այն պարագայում, երբ կապված է

[12] **Бахтин М. М.** Эстетика словесного творчества, 1979, с. 335.
[13] Նույն տեղում, էջ 350:

արդիականության պահանջներին և որոշակի իմաստով էլ ածանցվում է դրանցից: Մշակութային փորձի և գրական ավանդների ստեղծագործական յուրացման խնդիրն էր առաջադրում Մ. Բախտինը: Համաձայն նրա՝ հեղինակը մշտապես գտնվում է անցյալի ու ժամանակակից գրական ժառանգության հետ երկխոսական գործընթացում: Ժամանակի շարժումը զգալու համար հեղինակը պետք է վեր կանգնի դրանից և «ընդգրկի» անցյալն ու ապագան մեկ ակնթարթի մեջ:

«Երկխոսություն» երևույթը Մ. Բախտինն ընկալում է որպես հաղորդակցության ու արվեստի այնօրինակ կաղապարատիպ, որի առանցքային նախապայմանը երկու գիտակցությունների փոխազդեցության առկայությունն է. «Արտահայտության գոյությունը երկկողմանի է. այն իրականացվում է միայն երկու գիտակցությունների («ես»-ի և «մյուս»-ի) փոխազդեցության մեջ. փոխներթափանցում՝ պահպանելով հեռավորությունը: Սա երկու գիտակցությունների հանդիպման դաշտն է, նրանց ներքին շփման գոտին»[14]:

Այսպիսով, բախտինյան երկխոսության հասկացակարգն ուղղված էր նախ և առաջ միջանձնային փոխհարաբերակցության հիմնավորմանը: Համաձայն Մ. Բախտինի՝ ստեղծագործողը, սեփական գեղարվեստական արվեստը հարաբերակցելով այլ տեքստերի հետ, լայնահուն երկխոսություն է ծավալում ներկա ու նախորդ տեքստերի հետ՝ դրանով իսկ զարգացնելով իր գեղագիտական ու գաղափարական դիրքորոշումը և գեղարվեստական այն ձևերը, որոնք թույլ են տալիս նրան դրսևորվել ավելի լիարժեքորեն: Այս սկզբունքը յուրացվել ու լայնորեն կիրառվել է Յու. Կրիստևայի տեսական կառույցներում, որը զարգացրեց, ինչ-որ առումներով որոշակիացրեց ու նորովի մեկնաբանեց այդ ելակետային մեթոդաբանական սկզբունքը: Տրամաբանորեն զարգացնելով ու խորացնելով բախտինյան մեթոդաբանական սկզբունքը՝ տեքստերի փոխազդեցության գաղափարը, որը Յու. Կրիստևան սահմանել է «միջտեքստայնություն», խտացված-արտահայտված է աշխարհայացքային ու մեթոդաբանական-փիլիսոփայական կարգի բախտինյան հետևյալ բանաձևման մեջ. «Տեքստն ապրում է միայն հաղորդակցվելով մեկ այլ տեքստի (համատեքստի) հետ: Միայն տեքստերի այս շփման կետում է լույս առկայծում՝ լուսավորելով և՛ առաջ, և՛ հետ՝ կցելով տվյալ տեքստը երկխոսությանը»[15]: Այս ամենով հանդերձ՝ Մ. Բախտինը շեշտում է հատկապես այն գաղափարը, որ տեքստը նույնիսկ իր զարգացման բարձրագույն աստիճանում թեև նման է լինում նախատեքստին, սակայն, միաժամանակ, ըստ էության բերում է նորագույն որակ: Միջտեքստայնության տեսության զարգացման ներքին տրամաբանության տեսանկյունից միանգամայն արդիական է հնչում

[14] **Бахтин М. М.** К философским основам гуманитарных наук // **Бахтин М. М.** Автор и герой. К философским основам гуманитарных наук. СПб.: Изд. Азбука, 2000 с. 228–229.

[15] **Бахтин М. М.** Эстетика словесного творчества, с. 364.

նաև Մ. Բախտինի մեթոդաբանական բնույթի այն ձևակերպումը. «Երկխոսական հարաբերությունը <…> գրեթե համապարփակ երևույթ է, որը ներթափանցում է մարդկային խոսքի և մարդկային կյանքի բոլոր հարաբերությունների ու դրսևորումների, ընդհանրապես այն ամենի մեջ, ինչ իմաստ ու նշանակություն ունի <…>: Որտեղ սկսվում է գիտակցությունը, այնտեղ ... սկսվում է և երկխոսությունը»[16]: Երկխոսականությունը յուրաքանչյուր ճանաչողական գործընթացի անհրաժեշտ երևույթ է, մշտնջենական ընթացքով խոսք, որ արտացոլում է մարդկային կյանքի հավիտենական շարժումը: Իսկ այդ շարժումը Մ. Բախտինի հայեցակարգերում հավերժական հիմնահարցերի միևնույն ուղեծրով ընթացող համընդհանրական աշխարհընկալում է, որով ուրվագծվում է աշխարհի դիալեկտիկան:

РИПСИМЕ ЗАКАРЯН – ***Диалогическая теория М. М. Бахтина как форма взаимодействия культур.*** – В последнее время проблема диалога широко рассматривается философами, литературоведами, лингвистами, культурологами, искусствоведами и представителями других научных направлений истории общественной мысли.

Особое влияние на развитие западного литературоведения и философской мысли с конца 1960-х гг. оказала теория диалогизма русского философа, теоретика искусства, культуролога М. Бахтина. В бахтинских представлениях диалог — основа существования: быть означает общаться диалогически. По М. Бахтину, творец постоянно ведет диалог с традиционными и новаторскими произведениями искусства в поисках новых форм. Исходным пунктом его суждений служат особые диалогические отношения героев Достоевского. Достоевский, в бахтинских определениях, с его богатством полифонических персонажей, образовал новаторский прием в мировой литературе-начало «полифонического романа». Анализируя особенности диалогов в романах Достоевского, изображая прием создания человека в пространстве диалога, он показывает невозможность существования человека вне диалога.

Понятие «культурный диалог», впервые использованное М. Бахтиным, понимается как тесная соотнесенность разных культурных пластов с культурным прошлым. Диалогические отношения, по его мнению, могут проявляться между разными знаковыми системами. Исходя из этого, диалог также является культурным феноменом.

Статья посвящена изучению процесса формирования философских концепций Бахтина, рассматривающего диалог как онтологическую категорию. В бахтинских концепциях диалог воспринимается как «общение» между «я» и «ты» («я» и «другой»), то есть носит преимущественно социальный характер.

Цель статьи - рассмотреть особенности развития и проявления бахтинской теории «диалога», показать идейно-теоретические предпосылки диалога, развития идей в гносеологии Бахтина как методологического принципа, отличного от монолога.

Ключевые слова: *диалог, монолог, полифония, культура, философия, текст, Литературный герой, культурный диалог, интертекстуальность, полифонический роман*

---

[16] **Бахтин М. М.** Проблемы поэтики Достоевского, 1972, с. 71.

HRIPSIME ZAKARYAN – *The Dialogical Theory of M. M. Bakhtin as a Form of Interaction of Cultures*. – Recently, the problem of dialogue has been widely considered by philosophers, literary critics, linguists, culturologists, art historians and representatives of other scientific areas of the history of social thought.

The theory of dialogism of the Russian philosopher, art theorist, and culturologist M. Bakhtin had a particular influence on the development of Western literary criticism and philosophical thought since the late 1960s. In Bakhtin's ideas, dialogue is the basis of existence: to be means to communicate dialogically. According to M. Bakhtin, the creator is constantly in dialogue with traditional and innovative works of art in search of new forms. The starting point of his judgments is the special dialogical relations of Dostoevsky's heroes. Dostoevsky, in Bakhtinian definitions, with his wealth of polyphonic characters, formed an innovative device in world literature - the beginning of the "polyphonic novel". Analyzing the features of dialogues in Dostoevsky's novels, depicting the method of creating a person in the space of dialogue, he shows the impossibility of a person's existence outside of dialogue.

The concept of "cultural dialogue", first used by M. Bakhtin, is understood as a close correlation of different cultural layers with the cultural past. Dialogical relations, in his opinion, can manifest themselves between different sign systems. Therefore, dialogue is also a cultural phenomenon.

The article is devoted to the study of the process of formation of Bakhtin's philosophical concepts, who considers dialogue as an ontological category. In Bakhtin's concepts, dialogue is perceived as "communication" between "I" and "you" ("I" and "other"), that is, it is predominantly social in nature.

The purpose of the article is to consider the features of the development and manifestation of the Bakhtinian theory of "dialogue", to show the ideological and theoretical prerequisites for dialogue, the development of ideas in Bakhtin's epistemology as a methodological principle that is different from a monologue.

Key words: *dialogue, monologue, polyphony, culture, philosophy, text, fictional character, cultural dialogue, intertextuality, polyphonic novel*

ԲԱՆԲԵՐ ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ. ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ, ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ
2023. № 3. 40-49 *Փիլիսոփայություն*
https://doi.org/10.46991/BYSU: E /2023.14.3.040

ԱՊԱԿԱՌՈՒՑՈՂԱԿԱՆ ՎԱՐՔԻ ՍՈՑԻՈՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

ՕՎՍԱՆՆԱ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ

Ժամանակակից աշխարհում ծավալվել են փոխակերպման արագընթաց և հակասական գործընթացներ, որոնք ազդում են մարդու կյանքի բոլոր ոլորտների վրա: Այդ գործընթացները խորհելու այնքան նյութ են տալիս, որքան երբևէ չի տվել և ոչ մի ժամանակաշրջան: Որքան էլ որ դարաշրջանը գերհագեցած է գիտական հայտնագործություններով, չենք կարող չնկատել, որ հոգևորից (բարոյականից) դեպի սնանկ ռացիոնալության բացարձակացումն անհեռանկար և կործանարար է մարդկության համար: Միտքն առանց բարոյական ամբողջական վերահսկողության բավարարում է անհատի ֆիզիկական գոյության ապահովմանն ուղղված կարիքները (հիմնականում կենսաբանական), և դա կարող է հանգեցնել անհատի բարոյահոգեբանական հետընթացի: Հետարդյունաբերական հասարակություններում կործանարարության ծավալի աճը թերևս այն գինն է, որը մարդը վճարում է ավանդական նորմերի մերժման, բարոյական և էթիկական ուղենիշների անտեսման համար: Պատերազմները, ահաբեկչություններն ու հեղափոխությունները, հանցավորության աճը և էկոլոգիական աղետները վկայում են, որ ներկայիս քաղաքակրթության բնութագրիչներն են դարձել **ապակառուցողականությունն ու ագրեսիան**: Անվիճելի է, որ այս ճգնաժամի աղբյուրը, շարժիչ ուժը և արդյունքը մարդն է: Այս պարագայում անհրաժեշտ է հասկանալ, թե ինչպես է հնարավոր մի իրավիճակ, երբ մարդը՝ որպես ակտիվ գործող ստեղծագործական էակ, դառնում է կործանարար և զրոյացնում է սեփական գոյության հնարավորությունը: Եթե ապակառուցողական մշակույթ որդեգրած մարդը կանգ չառնի և չկարողանա գտնել «բանալի», որը հնարավորություն կտա մնալու ներկայում, ինչպես նաև բացելու մոտ ապագայի դուռը, ապա կարող է կործանել ոչ միայն իրեն, այլև ողջ մարդկությանը:

Բանալի բառեր – *կյանքի մշակույթ, ապակառուցողական մարդ, ապակառուցողական վարք, ապակառուցողական շփում, մարդ-գազան, սոցիալական անմեղսունակություն*

Ինչ-որ բան հիմնովին փոխվել է մեր կյանքի պատմամշակութային համատեքստում, և մեր սոցիոմշակութային ինքնությունը ասես զրկվել է ավանդականի սահմաններում պարփակվելու և սեփական կեցության հետ նույնականանալու երբեմնի հնարավորություններից: Բոլորովին էլ պատահական չէ, որ մեր ժամանակներում բարեկեցիկ կյանք ապահովելը կախված է ոչ միայն նյութական ու հոգևոր բարիքների, այլև «**կայունության»** արտադրության որակից ու աստիճանից: Ա-

ռավել ևս, որ ժամանակակից մարդուն պաշարած իրականությունը ասես զրկվել է հոգևոր միասնականությունն ապահովող մետապատումներից և վերաճել է պատահական հանդիպումների սոցիալական մի թատերաբեմի, որտեղ կյանքի դրաման ներկայացնող խառնամբոխի համար այլևս էականը ոչ թե կրթվածությունն է, այլ տեղեկացվածությունը, ոչ թե տնական հարաբերություններն են, այլ հպանցիկ հանդիպումները, ոչ թե ավանդական ընտանիքն է, այլ «էմանսիպացիան» յուրովի հասկացած անդեմ սեռերի քաղաքացիական համակեցությունը: Մի խոսքով՝ գրոտեսկային մի իրականություն, որը միջին վիճակագրական մարդուն խոստանում է «հեշտ թռիչքներ», արժանահիշատակ արկածներ և ապակառուցողական գործողությունների անսահմանափակ հնարավորություններ:

Առաջին հայացքից կարող է թվալ, թե մարդու ժամանակակից տեսակն ապրում է հենց իր կողմից ճարտարակերտած և իրեն հնազանդ այն աշխարհում, որի մասին իր նախնիները երազում էին: Բայց արդյո՞ք այդպես է: Արդյո՞ք մեր կամքով կերտած այս աշխարհի մշակութային համատեքստը համապատասխանում է մեր նախնիների պատկերացումներին ու ակնկալիքներին: Ու թեև անցյալի ու ներկայի օրգանական կապն ու շարունակականությունը ընդգծելու նպատակով հաճախ «պնդում ենք, որ մեր արժեքները նախնիներից փոխանցված ժառանգություն են, մինչդեռ միակ բանը, որը մեզ թույլ է տալիս այդպես ասել, այն է, որ մեր նախնիներն այլևս չկան և չեն կարող մեզ առարկել»[1]:

Հայտնի փաստ է, որ, ի տարբերություն կենդանական աշխարհի, մարդկային հասարակությունը ձևավորվել է ոչ միայն կենսաբանական, այլև սոցիալ-մշակութային էվոլյուցիայի ընթացքում: Այս առումով կարելի է ասել, որ մարդը մշտապես եղել է, կա և մնում է բնության, մշակույթի և ինքն իր խնդիրը: Նա մի կողմից բնական-կենսաբանական կազմավորում է, մյուս կողմից, սակայն, ոգեղեն ու սոցիալական մարմնավորում է ստանում մշակութային համատեքստում և իրեն կարող է փնտրել ու գտնել միայն ուրիշների և իր մեջ: Մշակույթը մարդկայնացված կեցության այն ինքնատիպ կազմավորումն է, որը միաժամանակ ունի ինչպես սահմանող, այնպես էլ սահմանագծող ու սահմանազանցող գործառույթներ: Այլ կերպ ասած՝ թեև արտաքին աշխարհի հետ մարդկանց փոխհարաբերություններն ու երկխոսության հնարավորություններն ածանցյալ են նրանց կարողությունների ու ընդունակությունների չափից, բայց այդ չափը սահմանողը նորին մեծություն մշակույթն է, և հենց նա է կանխորոշում բնության և հասարակության օրենքների և օրինաչափությունների մեջ խորանալու մարդու հնարավորությունների սահմանները: Բայց եթե ավանդական հասարակությունում մշակույթն ընկալվում էր որպես համակեցության օր-

[1] **Ց. Հարարի,** XXI դարի 21 դասերը, Եր., 2020, էջ 128:

գանականությունն ապահովող ընդհանուր հիշողության և ինքնության մեկ ամբողջական համատեքստ, ապա մեր օրերում կյանքի կազմակերպման մշակութային համայնապատկերը ասես խառնածին արժեքների մի աննկարագրելի խճանկար լինի, ինչը խիստ սահմանափակում է մշակույթի սահմանող, սահմանազատող ու սահմանազանցող, ուղղորդող ու վերահսկող երբեմնի գործառույթների շրջանակները և սողանցքներ բացում մարդու ապակառուցողական գործունեության ու վարքի արմատական դրսևորումների համար:

Այսպիսով, սխալված չենք լինի, եթե արձանագրենք, որ ապակառուցողականությունը որոշակի սոցիոմշակութային փոխակերպումների, կյանքի կազմակերպման ու կանոնակարգման ավանդական կարգի, մարդկային փոխհարաբերություններում ազատության ու պատասխանատվության հարաբերակցության ձևախեղումների հետևանք է: Իբրև արտաքին աշխարհի կամ սեփական անձի հանդեպ ագրեսիվ հակումների դրսևորման ձև՝ ապակառուցողականությունը կարելի է բնութագրել որպես կա՛մ սեփական անձին ուղղված (ինքնասպանություն, ինքնաօտարում և այլն), կա՛մ այլոց ուղղված (ահաբեկչություն, բռնություն, մշակութային արժեքների ոչնչացում և այլն) մի գործունեություն, որի կործանարար ներունակությունը կարող է պարպվել ինչպես իրականության մետաֆիզիկական բացասման, այնպես էլ ստեղծարար-վերափոխիչ նպատակներով: Կարևոր մի հանգամանք, ինչը մարդու ապակառուցողական վարքի կեցութային հիմքերի (մշակութաբանական և կենսաբանական) և անձնային որակների (խառնվածք և բնավորություն) բացահայտումը ներկայումս դարձրել է փիլիսոփայության թերևս ամենահրատապ և կարևոր խնդիրներից մեկը, քանզի դրա լուծումից են կախված հասարակության ու անհատի կենսունակությունը, ներդաշնակ զարգացումն ու ոգեղենությունը:

Խնդիրն այն է, որ հետարդիականության արժեհամակարգում կյանքի կազմակերպման ու կանոնակարգման հայեցակարգի հիմքում ընկած է ապագաղափարականացված ազատական այնպիսի մի համօրինակ, որի էությունը երկրային արժեքների գերակայությունն է բարոյական ու կրոնական, մի խոսքով՝ հոգևոր արժեքների նկատմամբ: Նման արժեհամակարգի շրջանակներում **ապակառուցողական վարքը կարելի է սահմանել որպես սոցիալական և մշակութային միջավայրի ազդեցությամբ ձևավորված, վարքի հանրայնորեն ընդունելի կենսափիլիսոփայական նորմերից շեղված, գոյություն ունեցող սոցիալական կարգին ու կառույցներին, ինքն իրեն և ուրիշներին վնաս պատճառող (կործանարար) արարք:**

Հարկ է նկատել, որ մասնագիտական գրականության մեջ վարքի ագրեսիվ և ապակառուցողական տարատեսակները հաճախ նույնացվում են, այն դեպքում, երբ ապակառուցողականությունը առավելապես **մշակութային** (**մտավոր**) գործընթացներից ածանցյալ վարքագծի ձև է,

մինչդեռ ագրեսիվությունը արտաքին օբյեկտներին ուղղված **առարկայական** վարքագիծ է: Առավել ևս, որ վարքի ագրեսիվ և ապակառուցողական դրսևորումների միջև կան էական տարբերություններ: Մասնավորապես, եթե մարդու կարիքները բավարարելու ճանապարհին ի հայտ եկած ագրեսիվությունը վերանում է նպատակին հասնելուն պես, ապա ապակառուցողականությունը սոցիոմշակութային ու կենսաբանական տարբեր հիմունքներից ածանցյալ և մարդու էությանը բնորոշ կենսակերպ է հենց այն պատճառով, որ նա ի վերուստ օժտված է աշխարհը վերափոխելու, իր պահանջմունքներին ու շահերին հարմարեցնելու, բնական ու սոցիալական գործընթացներին միջամտելու առաքելությամբ: Բացի այդ, եթե ագրեսիվությունը բնորոշ է ինչպես մարդուն, այնպես էլ կենդանական աշխարհին, ապա ապակառուցողականությունը կամ, ինչպես ասում են, «լուսանցքային» լինելը բնորոշ է միայն մարդուն: Այս իմաստով կարելի է ասել, որ բնական ու սոցիալական աշխարհի վերափոխման նպատակով ծավալված ցանկացած գործունեություն ապակառուցողական է, քանի որ դրա արդյունքում գործող բնական ու սոցիալական կարգն է փոխվում: Հարկ է նկատել նաև, որ կյանքը մշտապես ստեղծագործ աշխատանք է, և արարումն անհնար է առանց ոչնչացման: Արարման և ոչնչացման այս անխուսափելի հակամարտությունն էլ հենց «ապրել նշանակում է ոչնչացնել» արտահայտության իմաստն է[2]:

Ու թեև մարդու ապակառուցողական վարքը շատ հաճախ ընկալվում է բացասական հետևանքների համատեքստում, պետք է ընդունել նաև, որ կյանքն ու նրա դրվածքը վիճարկող մարդու ապակառուցողական ներուժը կարող է ունենալ նաև դրական մղումներ, քանի որ, իբրև սեփական կյանքի արարիչ ու ճարտարապետ, նա կյանքի հանդեպ մշտապես «դիրքավորված» է և ոչ միայն համակերպվում է իրեն պարտադրված հանգամանքներին, այլև փորձում է այն վերափոխել ու ենթարկել իր կամքին, քանի որ արտաքին-բնական աշխարհը ինքնին չի բավարարում նրա նվիրական ձգտումները, «և նա ստիպված է առանց ձեռքերը ծալելու տքնել ու արարել, որպեսզի այն փոխի, լիովին ձեռք բերի և դարձնի «ապրված» աշխարհ»»[3]: Հարցին այս դիտանկյունից նայելիս կարելի է ասել, որ մարդուն ներքնապես բնորոշ **արարչական ապակառուցողականությունը դրական-ստեղծագործական երանգավորում ունի**, քանի որ այն ուղղված է իր և հասարակության առջև ծառացած մարտահրավերների վերլուծությանը, կյանքի կազմակերպման նոր ու արդյունավետ ռազմավարության մշակմանը և վերջապես՝ կենսական խնդիրների լուծման անսովոր և ինքնատիպ ուղիների որոնմանը: Սա կարևոր է, քանի որ մասնագիտական վերլուծություններում ապակառուցողականությունը շատ դեպքերում մեկնաբանվում է իբրև բացասական երևույթ:

---

[2] Տե՛ս **Назаретян А. П.** Антропология насилия и культура самоорганизации, М., 2008, էջ 13-14:

[3] **Էդվարդ Հարությունյան,** Մարդկային կեցության այլակերպումները, Եր., 2018, էջ 9:

Ինչ խոսք, մարդկային գործունեության ու վարքի դրսևորումները հնարավոր չէ միայն սոցիոմշակութային շարժառիթներով բացատրել: Խնդիրն այն է, որ մարդը բնույթով առմիշտ երկատված է, և **նրա սոցիոմշակութային վարքագծի մեջ այստեղ ու այնտեղ երբեմն սպրդում են անգիտակցականում պահպանված նախամշակութային կենդանու վայրի բնազդներն ու «գոյատևման կռվի» ռդիսականում ձեռք բերված ոչնչացնելու և բռնանալու ներունակությունը:** Գոյի հիմքը հաստատ սատանայական է, կասեր Էմիլ Սիորան, և ավերման ախորժակն ասես մեզանից յուրաքանչյուրի կառուցվածքի մաս է կազմում[4]: Բռնություն գործադրելու, ամեն ինչ ոչնչացնելու և մետաֆիզիկական բացասման ենթարկելու մարդու նման վարքագիծը Է. Ֆրոմը բնութագրում էր որպես «չարորակ ագրեսիվության» հակում, ինչը կարող է ունենալ կենսաբանական դրդապատճառներ: «Մարդը յուրահատուկ է նրանով, որ զանգվածային մարդասպանների տեսակ է և միակն է, ով պիտանի չէ հասարակությանը»[5]: Նա գիտակցաբար կարող է ֆիզիկական և բարոյական վնաս պատճառել՝ միաժամանակ ունենալով բավարարվածության և սեփական արդարության զգացում: Բայց ոչ միայն:

Մարդու ապակառուցողական գործունեությունն ու վարքը միայն կենսաբանական բնազդներով բացատրել կնշանակի կանխավ մարդուն հռչակել բարոյական ու սոցիալական իմաստով անմեղսունակ կենդանի, ում ինքնահաստատման ջանքերը, կասեր Ն. Բերդյաևը, կարող են ավարտվել իր իսկ տեսակի ոչնչացումով: Եվ եթե հետարդիականության շրջանի մարդու վարքագծում նման միտումներ են ուրվագծվում, կնշանակի սոցիալականության կազմակերպման ու կանոնակարգման արդի քաղաքակրթության սոցիոմշակութային հիմունքներում ձևախեղումներն այնքան արմատական են, որ մարդն ասես «վերածվել է իր կենսունակության մետաֆիզիկական ավելցուկը անիմաստ մսխելու ցանկությունների անհագուրդ մեքենայի»[6]:

Այս առումով կարելի է ասել, որ ապակառուցողականությունը տարբեր, երբեմն նաև իրարամերժ հանգամանքներից ածանցյալ գործունեության ու վարքի ագրեսիվ դրսևորման այն ձևերից է, որը մի դեպքում կարելի է դիտարկել իբրև արտաքին աշխարհի հետ հարաբերությունները մեկընդմիշտ խզած, բոլոր կարգի սրբություններն ուրացած, բարոյական ու հոգևոր հենարաններից զրկված, զուտ կենսաբանական բնազդներով ղեկավարվող **մարդու ինքնանպատակ ընդվզում,** մեկ այլ դեպքում՝ իբրև ավանդականությունից (բարոյականություն, հավատ, ընտանիք, սրբություն և այլն) հեռացող ու հրաժարվող՝ այս նոր խմորվող **սոցիալականության դեմ ապստամբած մարդու ինքնապաշտպանական հուսահատ ճիգ:**

---

[4] Տե՛ս **Էմիլ Սիորան,** Ծնված լինելու անհարմարության մասին, Եր., 2008, էջ198:

[5] **Tinbergen N.,** On War and Peace in Animals and Man, in: Science, Washington, 1968, p. 1412.

[6] **Է. Հարությունյան,** նշվ. աշխ., էջ 15:

Սոցիալ-հոգեբանական մակարդակում ապակառուցողական գործունեության շարժառիթների շարքում որոշիչ են հատկապես մարդկային բնական կապերի խզումը, կենսական շահերի ոտնահարումն ու չբավարարված բոլոր նյութական և հոգևոր այն պահանջմունքները, որոնց հետևանքով մարդն աստիճանաբար օտարվում է իրեն շրջապատող սոցիալական աշխարհից, հայտնվում է «անհաջողակների», «չկայացածների» ու «մերժվածների» համար նախատեսված լուսանցքում, որի սոցիոմշակութային մթնոլորտի հիմնական ախտանիշներ են համարվում տագնապայնության, լքվածության, թերարժեքության, զայրույթի ու վրեժի պարբերաբար ուժգնացող զգացումները: Այս տեսակետից կարելի է ասել, որ ապակառուցողականությունը, որպես «չապրած կյանքի արդյունք», որպես ընդունված նորմերից շեղված վարքագիծ[7], մի հուսահատ փորձ է, ավելի ճիշտ՝ հանրորեն չխրախուսվող մտածելակերպ ու գործելակերպ է, որի օգնությամբ մարդու լուսանցքային տեսակը փորձում է հաղթահարել աշխարհի հետ իր հակադրությունը, միայնության ու անզորության զգացումը և «ինքնահաստատվել ցանկացած, նույնիսկ բարբարոսական կործանման գնով»[8]:

Արդի համաշխարհայնացող աշխարհը ձևավորել ու ձևավորում է քաղաքակրթական ու մշակութային առումով մի այնպիսի գերբարդ համակարգ, որի շրջանակներում կյանքի կազմակերպման միասնական կարգը առավելապես խարսխված է մակերեսային ու պարզունակ, մշակութային բազմազանություն չենթադրող, առերևույթ ռացիոնալ ու տրամաբանական մի այնպիսի արժեհամակարգի վրա, որը որքան միավորում, նույնքան էլ պառակտում է մարդկային կյանքի ամբողջականությունը, քանի որ այն, ինչ ոմանց համար ազատության և ինքնահիրացման նոր հնարավորությունների դռներ է բացում, մյուսներին զրկում է համակեցության և սերունդների միջև հաստատված փոխըմբռնման ավանդական արժեհամակարգերից և արդարություն հաստատելու հնարավորություններից[9]: Այս առումով ապակառուցողականությունը երբեմն մեկնաբանվում է որպես իր դարն ապրած «անարդար կարգը» կազմաքանդելու և նրա ավերակների վրա առավել ազատ ու արդար հասարակարգ կառուցարկելու համար ծավալված ռացիոնալ գործունեության մի տեսակ, ինչի շարժառիթներն իրականում «այստեղ և հիմա» նյութական պահանջմունքները բավարարելն է:

Եվ իրոք, սպառողական հասարակության նյութապաշտական ոգին մարմնավորող մարդու անկշտում այդ տեսակը ասես անցյալի և ապագայի միջև անցումային փուլում հայտնված մահապարտ լինի, որին զրկել են սեռից, ազգային պատկանելությունից, հավատից ու ամեն կարգի սրբություններից: Նա, հավանաբար, հասկանում է, որ **իրեն**

---

[7] Տե՛ս **Дюркгейм Э.** Самоубийство: Социологический этюд, М., 1994, էջ 399:
[8] Տե՛ս **Фромм Э.** Анатомия человеческой деструктивности, М., 1994, էջ 316:
[9] Տե՛ս **Камю А.** Бунтующий человек, М., 1990, էջ 122:

տրված ազատություններն ու անձեռնմխելի հռչակված «անձնական տարածությունը» ընդամենը ցանկապատված ու վերահսկելի քաղաքակրթական մի գաղութ են, բայց կանգ առնելու անհնարինությունը նրան առաջ է մղում, և նա աշխարհը կործանելու վերջին հուսահատ փորձերն է անում՝ «թույլ չտալու համար, որ աշխարհն էլ իրեն կործանի»[10]: Նրա կյանքը ձեռք է բերել հստակ կողմնորոշված նյութական կարգավիճակ: Մարդը ոչ միայն նոր ուղիներ է հորինում իր ֆիզիկական կարիքները բավարարելու համար, այլ նաև հորինում է խիստ ցանկալի նոր «կարիքներ»՝ վերածվելով «մասնագետի» կամ «հաճախորդի», որը ենթարկվում է սպառողական հասարակության, զանգվածային մշակույթի և կորպորատիվ գաղափարախոսության չափանիշներին: Պարզ գիտակցելով կյանքի վերջավորությունը և որդեգրելով «կյանքից վերցնել հնարավոր ամեն ինչ» կարգախոսը՝ նա իր կյանքի մշակույթը կառուցում է պրագմատիկ հաջողության հիմքի վրա, որի ցուցանիշը սոցիալական և ֆինանսական բարձր դիրքն է:

Ապակառուցողականության ոչ պակաս կարևոր շարժառիթներից է նաև գիտատեխնիկական առաջընթացը: «Անընդհատ և շարունակական տեխնոլոգիական հեղափոխությունը, ձեռք բերված գիտելիքներն ու յուրացված սովորությունները բարիքից վերածվում են բեռի՝ արագ կրճատելով օգտակար հմտությունների կյանքի տևողությունը, որոնք, ի տարբերություն իրենց յուրացման և ծախսված համալսարանական ժամանակի, հաճախ շատ ավելի կարճ ժամանակահատվածում կորցնում են կիրառելիությունն ու օգտակարությունը»[11]: Ողջ աշխարհում գիտատեխնիկական առաջընթացը, ի հակակշիռ բոլոր ձեռքբերումների և ապագայի զարգացման հնարավորությունների, վտանգավոր է դարձել ինչպես առանձին մարդկանց, այնպես էլ ողջ մարդկության համար թերևս այն պարզ պատճառով, որ մարդու և տեխնիկայի միջև փոխհարաբերության հաստատումը հնարավորությունների միայն պարզ բյուրապատկում չէր: Տեխնիկան ի զորու եղավ փոխակերտելու ինչպես աշխարհի պատկերը, այնպես էլ մարդու ներաշխարհը, գործունեության կառուցվածքը, արժեհամակարգը և համակեցության չափորոշիչները: Տեխնիկան կարողացավ սերտաճել մարդու մարմնին և հարկադրել նրան գործելու իր եղանակներով:

Պետք է նկատել, որ սպառողական հասարակության մեջ հատկապես կարևորվում է տեղեկատվական մշակույթի դերը: Ժամանակակից հեռահաղորդակցման միջոցները հնարավորություն տվեցին, որ ցանկացած տիպի կործանարար, կազմաքանդիչ տեղեկությունները և լուրերը անարգելք մուտք գործեն յուրաքանչյուրի տուն: Համացանցը անպատժելիության և հեռավարության պատճառով մեծ հնարավորություններ ստեղծեց ապակառուցողական վարքագծի հնարավոր տարբե-

---

[10] **Фромм Э**. Бегство от свободы, М., 1989, с. 154.

[11] **Бауман З.** Индивидуализированное общество, М., 2005, с. 164.

րակներ կիրառելու համար: Ճիշտ է, այն թույլ է տալիս մարդկանց հեշտորեն շփվել, տեղեկություններ ստանալ, սակայն նաև կարող է դառնալ բռնության, ատելության, ագրեսիայի և ապակառուցողականության տարածման վտանգավոր միջոց: Հասարակական կյանքի տոտալ վիզուալիզացիայի կործանարար հետևանքներից են նաև վերացական ու վերլուծական մտածողության աստիճանական թուլացումը և հոլովակային գիտակցության ձևավորումը: Հոլովակային մտածողության ի հայտ գալն ինքնատիպ արձագանքն է փոխանցվող տեղեկատվության ավելացված քանակությանը, ինչը հանգեցրել է հիպերտեղեկատվական անկայունության և քաոսի:

Ամփոփելով ասվածը՝ կարելի է եզրակացնել, որ այսօր առավել, քան երբևէ, անհրաժեշտություն կա ձևավորելու սոցիալական և մշակութային աջակցող միջավայր, որը կարող է օգնել կանխելու և բուժելու մարդու կործանարար վարքը: «Ժամանակակից մարդկությունը խոսում է տարբեր ձայներով, և մեզ համար պարզ է, որ դեռ երկար ժամանակ այդպես է լինելու: Նոր ժամանակների գլխավոր խնդիրն այն է, թե ինչպես կարելի է բազմաձայնությունը ներդաշնակության վերածել և թույլ չտալ, որ այն վերածվի կակոֆոնիայի: Ներդաշնակությունը միատարրություն չէ, ներդաշնակությունը տարբեր մոտիվների միահյուսումն է, որոնցից յուրաքանչյուրն ունի սեփական հնչողությունը, և բոլորը միասին ստեղծում են ընդհանուր մեղեդին»[12]: Մարդը պետք է գիտակցի, որ ապակառուցողականությունն իր գոյության անբաժանելի մասն է, որն անհրաժեշտ է հաշվի առնել աշխարհի հետ և ինքն իր հետ հարաբերվելիս: Մարդը պետք է կառավարի սեփական կործանարար էներգիան և ձգտի այդ էներգիայի կառուցողական օգտագործման՝ դրական արդյունքների հասնելու և իր կյանքն ու շրջապատող աշխարհը բարելավելու համար: Վերջին ժամանակներում շատ հետազոտողներ նշում են ստեղծագործականության և ապակառուցողականության միջև կապի մասին: Երկուսի դեպքում էլ անհատն առաջնորդվում է ինքնաիրացման մղումներով՝ ազատորեն վերափոխելով շրջապատող իրականությունը և բավարարելով սեփական պահանջմունքները: Ստեղծագործական ներուժը նրան դրդում է գործունեության՝ անկախ այն բանից, այդ գործունեությունը կառուցողական է, թե ապակառուցողական: Ապակառուցողական մարդն ունակ է լինելու ստեղծագործ այնքանով, որքանով կարող է գտնել խնդիրների լուծման անսովոր և ինքնատիպ ուղիներ, որոնք ունեն օգտակարություն տարբեր իրավիճակներում: Նա կարող է վերլուծել բարդ իրավիճակները և գտնել խնդիրների պատճառները, ինչը նրան օգնում է մշակելու նոր ռազմավարություններ և մոտեցումներ: Եվ վերջապես՝ ապակառուցողական մարդը կարող է ունենալ վճռականության և հաստատակամության

[12] **Бауман З.,** նշվ.աշխ., էջ 118:

բարձր աստիճան, ինչը նրան կօգնի իր նպատակներին հասնելու գործում: Ուստի կարևոր է օգնել նման մարդկանց՝ այդ էներգիան ուղղորդելու կառուցողական նպատակների և գործունեության, քանի որ կործանարար վարքագծի և հարաբերությունների վերացման աղբյուրը հասարակության բարոյական առողջացումն է, որը ստեղծվում է բացառապես յուրաքանչյուր սերնդի բարոյական գործունեությամբ:

Ի՞նչ է սպասվում մարդուն. ինքնահիրացման աննախադեպ հեռանկարնե՞ր, անհատականության զարգացո՞ւմ, ինքնավստահության և ինքնագնահատականի ա՞ճ, թե՞ ճիշտ հակառակը: Մարդն իրավամբ չի կարող ամեն ինչ անել, բայց կարող է շատ բան անել և միևնույն ժամանակ հաճախ հավատում է, որ ի վիճակի չէ ինչ-որ բան անելու, քանի որ դա դուրս է իր հնարավորություններից, հետևաբար ոչինչ չի անում: Սեփական ուժերը այդ կերպ թերագնահատելը կապված է անհնարինը հնարավորից տարբերելու անկարողության հետ և սովորաբար արտացոլում է գիտելիքների պակասը, կյանքի նկատմամբ ստեղծագործական վերաբերմունքի սահմանափակումները՝ պայմանավորված նաև կրթության առանձնահատ-կություններով: Անշուշտ, սոցիումի գոյությունը պայմանավորված է որոշակի ծրագրի առկայությամբ, որի իրագործումն ապահովում է հասարակության լինելիությունը: Այս համատեքստում անհրաժեշտ է հստակ ձևակերպված պետական և ազգային գաղափարախոսություն, որպեսզի հասարակության յուրաքանչյուր անդամ պատկերացում ունենա, թե ինչ անել և ինչին ձգտել: Մարդը պետք է վերականգնի իր գերակայությունը հասարակության մեջ: Նա չպետք է դառնա գործիք ինքն իր և ուրիշների ձեռքում: Պետք է վերջ դրվի մարդու կողմից մարդու շահագործմանը, և տնտեսությունը պետք է ծառայի միայն մարդու զարգացմանը, կապիտալը՝ աշխատանքին, իսկ իրերը՝ կյանքին[13]:

Արդարև, որպեսզի մարդը չդադարի լինել մշակույթի և պատմական գործողությունների իրական սուբյեկտ և չվերածվի սոցիալական ռեսուրսի ու քաղաքական շահարկման օբյեկտի, ապա ճանապարհը մեկն է՝ կա՛մ հոգևոր և բարոյական վերածնունդ, կա՛մ ընթացք դեպի կործանում:

ОВСАННА НАГАПЕТЯН – ***Социокультурные основы деструктивного поведения.*** – Современный мир переживает быстрые и противоречивые процессы трансформации, затрагивающие все сферы жизни человека. Эти процессы дают больше пищи для размышлений, чем любой другой период. Несмотря на то, что эпоха перенасыщена научными открытиями, мы не можем не заметить, что абсолютизм от духовного (морального) к несостоявшейся рациональности безнадежен и губителен для человечества. Без полного нравственного контроля разум удовлетворяет потребности человеческой личности в физическом существовании (преимущественно биологические) и может привести к психологическому регрессу личности. Рост деструктивности в постиндустриальных обществах — это, пожалуй, цена, которую платит человек за отказ от традиционных норм, игнорирова-

[13] Տե՛ս **Фромм Э.** Здоровое общество, М., 2011, էջ 397:

ние морально-этических ориентиров. Происходящие в мире войны, террористические акты и революции, рост преступности и экологические катастрофы являются свидетельством того, что деструктивность и агрессия стали характерными чертами современной цивилизации. Бесспорно, что источником, движущей силой и результатом этого кризиса является человек. В этом случае необходимо понять, как возможна ситуация, когда человек как активное творческое существо становится разрушителем, сводящим на нет возможность собственного существования. Если человек, принявший деструктивную культуру, не остановится и не сможет найти «ключ», который позволит ему остаться в настоящем, а также открыть дверь в ближайшее будущее, то он может разрушить не только себя, но и также все человечество.

Ключевые слова: *культура жизни, деструктивный человек, деструктивное поведение, деструктивное общение, человек-зверь, социальное безумие*

OVSANNA NAHAPETYAN – *Sociocultural Foundations of Disruptive Behavior*. – The modern world is experiencing rapid and contradictory processes of transformation that affect all areas of human life. These processes provide more food for thought than any other period has ever provided. Despite the fact that the era is oversaturated with scientific discoveries, we cannot help but notice that absolutism from the spiritual (moral) to failed rationality is hopeless and destructive for humanity. The mind without complete moral control satisfies the needs of the human individual for physical existence (mainly biological) and can lead to the psychological regression of the individual. The increase in destructiveness in post-industrial societies is perhaps the price that man pays for rejecting traditional norms, ignoring moral and ethical guidelines. The wars going on in the world, the terrorist acts and revolutions, the increase in crime and the ecological disasters are the evidence that destructiveness and aggression have become the characteristics of the current civilization. It is indisputable that the source, driving force and result of this crisis is man. In this case, it is necessary to understand how a situation is possible when a person, as an active creative being, becomes a destroyer who nullifies the possibility of his own existence. If a person who has adopted a destructive culture does not stop and cannot find a "key" that will enable him to remain in the present, as well as to open the door to the near future, he can destroy not only himself, but also the entire humanity.

Key words: *culture of life, destructive person, destructive behavior, destructive communication, man-beast, social insanity*

ԲԱՆԲԵՐ ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ. ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ, ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ
2023. № 3. 50-61 *Հոգեբանություն*
https://doi.org/10.46991/BYSU: E /2023.14.3.050

ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿՐԹԱԿԱՆ ՈՒ ՏԱՐԻՔԱՅԻՆ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ*

ԱՍՏՂԻԿ ՍԵՐՈԲՅԱՆ, ԷԴԻՏԱ ԱՌԱՔԵԼՅԱՆ

Ուսանողների ակադեմիական ներգրավվածությունը կարևոր նշանակություն ունի կրթական գործընթացի կազմակերպման և արդյունավետության համար: Դրա ուսումնասիրությունը այսօր բարձրագույն կրթության արդիական հիմնախնդիրներից է: Այդ տեսանկյունից կարևոր է հետազոտել ուսանողների կյանքի ուսումնական և ոչ ուսումնական այն դժվարությունները, որոնց սովորաբար նրանք բախվում են իրենց տարիքային զարգացման տվյալ փուլում, և որոնք ազդում են ներգրավվածության աստիճանի վրա: Հոդվածի նպատակն է վեր հանել ուսանողների ակադեմիական ներգրավվածությանը նպաստող ու խանգարող գործոնները՝ պայմանավորված տարիքային առանձնահատկություններով և ուսումնառության դժվարություններով: Հետազոտության ընտրանքը ՀՀ տարբեր բուհերի, բակալավրիատի և մագիստրատուրայի 18-25 տ. 180 ուսանողներ են, որոնց 61%-ը իգական սեռի ներկայացուցիչ են: Համաձայն ստացված արդյունքների՝ ակադեմիական ներգրավվածության համար նշանակալի են ձևավորվող հասունության գործոններից ինքնակենտրոնացումը, իսկ սոցիալական ներգրավվածության համար՝ կյանքի դժվարություններից բացասական հույզերը, ոչ արդիական կրթական միջավայրը, հաղորդակցման դժվարությունները: Ե՛վ ակադեմիական, և՛ սոցիալական ներգրավվածության համար կանխորոշիչ նշանակություն ունի ուսանողների ՄՈԳ-ը: Հետազոտության արդյունքները օգտակար կլինեն բուհերի կրթական քաղաքականության մշակման գործընթացում, ինչպես նաև նոր կրթական պրակտիկաների ներդրման արդյունավետությունը գնահատելու համար:

Բանալի բառեր – *ակադեմիական ներգրավվածություն, սոցիալական ներգրավվածություն, կյանքի դժվարություններ, ձևավորվող հասունություն, ուսումնական դժվարություններ*

Ակադեմիական ներգրավվածություն

Ուսանողների ներգրավվածության ուսումնասիրությունը այսօր բարձրագույն կրթության արդիական հիմնախնդիրներից է, որն ուշադրության կենտրոնում էր դեռ 20-րդ դարի երկրորդ կեսից: «Ակադեմիական ներգրավվածություն» հասկացությունը փորձել են սահմանել տարբեր հետազոտողներ, որոնցից ավելի տարածված է Ասթինի հայե-

* Հետազոտությունը իրականացվել է ՀՀ ԳԿ-ի 20RF-164 և ՀՀՌՀ (ՌԴ) 20-513-05014 գիտական ծրագրի շրջանակներում:

ցակարգային մոտեցումը[1]: Ներկայումս հետազոտողների մեծ մասը այն մեկնաբանում է որպես ուսանողների կողմից ակադեմիական փորձի ձեռք բերման վրա ծախսած ժամանակի և էներգիայի քանակ, ինչպես նաև այն հոգեբանական ջանքը, որը ուսանողը ներդնում է սովորելու, հասկանալու, գիտելիքներ, հմտություններ ձեռք բերելու համար: Տվյալ երևույթը կրթական, ուսումնական արդյունավետ աշխատանքի կարևոր մասն է[2]: Բազմաթիվ հետազոտություններ վկայում են, որ ակադեմիական ներգրավվածության բարձր մակարդակ ունեցող ուսանողները ապահովում են բարձր առաջադիմություն, ավելի մոտիվացված են և գրանցում են ավելի լավ արդյունքներ, քան նրանք, որոնց ներգրավվածության մակարդակը ցածր է[3]: Ուսանողների ներգրավվածությունը սերտորեն կապված է ուսման մոտիվացիայի հետ: Այնուամենայնիվ, Աստինը տարբերակում է այս երկու տերմինները՝ նշելով, որ ուսանողների ներգրավվածության հայեցակարգում վարքային ասպեկտը կարևոր տեղ է զբաղեցնում: Ըստ նրա՝ այնքան էլ կարևոր չէ, թե ինչ է մտածում կամ զգում անձը, այլ կարևոր է այն, թե նա ինչ է անում, ինչպես է իրեն պահում. դա է, որ սահմանում և ներկայացնում է ներգրավվածությունը[4]: Փեյսը կիրառում է «ջանքի որակ» տերմինը «ուսանողների ներգրավվածություն» բառի փոխարեն: Իր հայեցակարգում ուսանողի կողմից վերապատրաստման համար ծախսված ջանքերը և դրանց ժամանակային արտահայտությունը կարելի է համարել որակի գնահատման հիմնական չափանիշ[5]: Ըստ Նյումանի՝ ուսանողական ներգրավվածությունը նշանակում է ավելին, քան պարզապես առաջադրանքները կատարելը և դասախոսների ու կուրսընկերների կողմից բարձր գնահատականներ ու սոցիալական ճանաչում ստանալը: Շատ ուսումնասիրություններ ցույց են տվել, որ ուսանողները մեծ քանակությամբ հոգեբանական էներգիա են ներդնում՝ հետևելով տարբեր ընթացակարգերի և կատարելով առօրյա առաջադրանքներ՝ առանց նյութը հասկանալու և նշանակալի հմտությունների զարգացման[6]:

Ուսանողների ներգրավվածությունը կարևոր խնդիր է կրթության ոլորտում, քանի որ այն օգնում է հաստատելու համալսարանի՝ որպես

---

[1] Տե՛ս **Astin A.** (1984), Student Involvement: a Developmental Theory for Higher Education // Journal of College Student Development. Vol. 25. No. 4, էջ 518-529:

[2] Տե՛ս **Малошонок Н.** Студенческая вовлечённость: почему важно изучать процесс обучения, а не только его результат? // Мониторинг университета. № 6, էջ 11–21:

[3] Տե՛ս **Alexander W. A.** (1999), Student Involvement: A Developmental Theory for Higher Education, Journal of College Student Development, Vol 40 No. 5, September/October, էջ 518-529, **Jang H**., Supporting students' motivation, engagement and learning during an uninteresting activity. Journal of Educational Psychology, 208, էջ 798-811, **Малошонок Н**., նշվ. հոդվածը:

[4] Տե՛ս **Astin A**., նշվ. հոդվածը:

[5] Տե՛ս **Pace R.** (1984), Measuring the Quality of College Student Experiences. An Account of the Development and Use of the College Student Experience Questionnaire. Los Angeles: Higher Education Research Institute Graduate School of Education University of California, էջ 4-21:

[6] Տե՛ս **Малошонок Н.,** նշվ. հոդվածը:

ինստիտուցիոնալ միջավայրի և ուսանողի վարքագծի, ուսումնառության արդյունքների միջև կապը, ինչպես նաև բնութագրելու ուսանողների վերաբերմունքը իրենց ուսմանը[7]:

Ձևավորվող հասունության տարիքային զարգացման փուլ

2000–ականների սկզբին Ջ. Արնետը հրատարակեց տարիքային զարգացման մասին հոդվածներ, որտեղ առաջին անգամ գիտական կիրառման հայեցակարգում մտցվեց «ձևավորվող հասունություն» տերմինը: Այժմ այս հայեցակարգն ունի լայն մատենագիտություն: Արնետն առաջարկել է այս շրջանը դիտարկել անցումային: Առաջին հրապարակման մեջ Արնետը պնդում էր, որ այս ժամանակաշրջանը կարելի է անվանել «վաղ հասունության» կայուն շրջան[8]:

Իր հոդվածում Արնետը նշում է, որ ձևավորվող հասունությունը չի մտնում ոչ՝ դեռահասության և ո՛չ էլ երիտասարդության տարիքային զարգացման փուլի մեջ, այլ տեսականորեն և էմպիրիկորեն տարբերվում է երկուսից էլ ու գտնվում է դրանց մեջտեղում[9]: Ձևավորվող հասունության տարիքն առանձնանում է սոցիալական դերերից և նորմատիվ ակնկալիքներից հարաբերական անկախությամբ: Սա մի փուլ է, երբ անձը դուրս է եկել մանկության և պատանեկության կախվածությունից, սակայն դեռևս չի մտել հասուն տարիքին բնորոշ պարտականությունների մեջ: Ձևավորվող հասունության փուլում գտնվող անձանց բնորոշ է կյանքի մի շարք ոլորտների ուսումնասիրումը, ինչպիսիք են սերը, աշխատանքը, աշխարհայացքը: Տարիքային այս փուլում ապագայի մասին քիչ բան է որոշված, տեղի են ունենում փորձարկումներ տարբեր ոլորտներում, կան բազմաթիվ հնարավորություններ ինքնադրսևորման և ինքնաարտահայտման, քան կյանքի ցանկացած այլ ժամանակահատվածում[10]:

Ըստ Արնետի՝ «ձևավորվող հասունություն» տարիքային զարգացման փուլը բնութագրվում է 5 տարբերակիչ հատկանիշներով.

- Ինքնության ուսումնասիրման տարիք: Գլխավոր առանձնահատկությունն այն է, որ դա այն ժամանակն է, երբ երիտասարդներն ուսումնասիրում են իրենց կյանքի հնարավորությունները տարբեր ոլորտներում, հատկապես սիրո և աշխատանքի, և այդ ընթացքում ա-

---

[7] Տե՛ս **Малошонок Н., Геннадьевна Н**. «Студенческая вовлеченность» как социальное явление: теория и методология исследования тема диссертации и автореферата по ВАК РФ 22.00.01, էջ 25:

[8] Տե՛ս **Поливанова К. Н.** (2016), Детство в меняющемся мире // Современная зарубежная психология. Том 5, № 2. doi: 10.17759/jmfp.2016050201, էջ 7:

[9] Տե՛ս **Arnet J.J**. (2007), Emerging Adulthood: What Is It, and What Is It Good for? // Journal compilation, Society for Research in Child Development Volume 1 Number 2, էջ 68–73:

[10] Տե՛ս **Arnett J.J.** (2000), Emerging Adulthood: A theory of Development from the late teens through the twenties. American Psychologist, 55 (5), էջ 18-25, **Arnett J.J**. (2004), Emerging Adulthood: The winding road from the late teens through the twenties. New York: Oxford University Press, էջ 20:

վելին են իմանում այն մասին, թե ովքեր են իրենք և ինչ են ուզում կյանքից[11]:

▪ Անկայունության տարիք: Փոփոխությունները տեղի են ունենում շատ արագ: Այդ պատճառով այս փուլում երիտասարդները գիտեն, որ մշտապես պետք է ունենան պլան Բ, և այն ծրագրերը, որոնք որ կազմվել են, ենթակա են վերափոխման մոտակա տարիներին[12]:

▪ Ինքնակենտրոնացման տարիք: Սկսում են ապրումակցել այլ անձանց, հասկանալ այլոց հույզերն ու մտքերը և այդ կերպ նաև ավելի լավ են ճանաչում իրենց, կարողանում կենտրոնանալ իրենց անձի, հույզերի վրա: Սեփական անձի վրա կենտրոնանալով և ազատվելով ծնողների ու հասարակության կողմից առաջնորդվող առօրյայից՝ երիտասարդները փորձում են որոշել, թե ինչ են ուզում անել, ուր են ուզում գնալ և ում հետ են ուզում շփվել, նախքան այդ ընտրությունները կսահմանափակվեն ամուսնությամբ, երեխաների հետ կապված խնդիրներով և կարիերայով[13]:

▪ Միջակայքում զգալու տարիք: Ձևավորվող հասունության փուլում գտնվող շատ անձինք ասում են, որ իրենք իրենց վրա են վերցնում պատասխանատվությունը, բայց դեռևս իրենց լիովին չափահաս չեն զգում: Այսինքն՝ նրանք այլևս դեռահասներ չեն, սակայն լիովին չափահաս և հասուն էլ չեն: Մինչ ինքնավստահ դառնալը, պատասխանատվություն ընդունելը, որոշումներ կայացնելը և ֆինանսապես անկախ դառնալը երիտասարդները իրենց զգում են միջանկյալ դիրքում պատանեկության և չափահասության միջև[14]:

▪ Հնարավորությունների տարիք[15]: Տարիքային այս փուլում լավատեսություն է տիրում: Նրանց մեծ մասը կարծում է, որ լավ հնարավորություններ ունի ապրելու «ավելի լավ, քան իրենց ծնողները» և ունենալու ավելի մեծ ձեռքբերումներ: Աշխատանքի հնարավորությունները, սոցիալական ներգրավվածությունը, անձնական հարաբերությունները նրանց համար թվում են հասանելի[16]:

Արնետը նշում է, որ ձևավորվող հասունության փուլը համընդհանուր մեկ տարիքային զարգացման փուլ չէ, որը կարող է գոյություն ու-

---

[11] Տե՛ս **Konstam V.** (2007), Emerging and young Adulthood Multiple Perspectives, Diverse Narratives, Springer Science+Business Media, LLC, 2007, **Reifman A., Arnett, J. J., Colwell M. J.,** (2007), Emerging Adulthood: Theory, assessment, and application. Journal of Youth Development, 2 (1), էջ 1-12:

[12] Տե՛ս **Arnett J.J**. (2006), Emerging Adulthood: Understanding the new way of coming of age. In J. J. Arnett & J. L. Tanner (Eds.), Emerging adults in America: Coming of age in the 21st century, DC: APA Books, Washington, էջ 3–19, **Arnett J.J**. (2000), նշվ. հոդվածը, **Hornblower M.** (1997), Great expectations. Time, 129(23), June 9, էջ 58-68:

[13] Տե՛ս **Arnett J.J.** (2006), նշվ. հոդվածը, **Arnett J.J**. (2000**),** նշվ. հոդվածը:

[14] Տե՛ս նույն տեղը: **Reifman A., Arnett, J. J.**, **Colwell M. J.** (2007), Emerging Adulthood: Theory, assessment and application. Journal of Youth Development, 2 (1), էջ 469-480:

[15] Տե՛ս նույն տեղը:

[16] Տե՛ս **Arnett J.J.** (2000), նշվ. հոդվածը, **Reifman A., Arnett, J. J., Colwell M. J.** (2007), նշվ. հոդվածը, **Hornblower M**. (1997), նշվ. հոդվածը:

նենալ բոլոր մշակույթներում: ուստի, ձևավորվող հասունության փուլը հավանական է բարձր զարգացած արդյունաբերական կամ հետարդյունաբերական երկրներում: Նման երկրները պահանջում են բարձր մակարդակի կրթություն: Իսկ այն երկրներում, որտեղ ավելի վաղ տարիքում են ամուսնանում, սովորաբար երիտասարդները չեն շարունակում իրենց կրթությունը կամ կիսատ են թողնում: Այսպիսով, ըստ Արնետի, հնարավոր է, որ մինչև 21-րդ դարի վերջը ձևավորվող հասունության տարիքը լինի նորմատիվ շրջան ամբողջ աշխարհում, թեև այն ամենայն հավանականությամբ տարբեր կլինի ինչպես երկրների ներսում, այնպես էլ երկրների միջև[17]:

Արնետը նշում է, որ ձևավորվող հասունության տարիքում կրթությունը ձեռք է բերում բոլորովին նոր նշանակություն: Ըստ նրա՝ այս տարիքի անձինք պետք է մտածեն այն մասին, թե այդ կրթությունը ինչպես կպատրաստի իրենց աշխատանքի[18]:

Հիմնվելով Արնետի մոտեցման վրա՝ կարող ենք նշել, որ ձևավորվող հասունության փուլի անձանց համար կրթական համակարգում ներգրավվածությունը կարող է կարևոր լինել նաև նոր շփումների և հարաբերությունների հաստատման առումով, այսինքն՝ նրանց ակադեմիական ներգրավվածության վրա կարող է ազդել կրթական համակարգում սոցիալական ներգրավվածությունը:

Հետազոտության կազմակերպում և մեթոդների ընտրություն

Հետազոտության ընտրանքում 180 ուսանողներ են, որոնք սովորում են ՀՀ տարբեր բուհերի (ԵՊՀ, ՀՊՏՀ, ԵՊԲՀ, ՀՊՃՀ, ՀՊՄՀ, ՀՖԿՍՊՀ) բակալավրիատում և մագիստրատուրայում: Ընդհանուր հետազոտական ընտրանքում ներառվել են 18-25 տարեկան 110 իգական և 70 արական սեռի ներկայացուցիչներ:

Հարցարանային փաթեթը ներառում է 3 մեթոդիկա: Առաջին հարցարանը *ուղղված է ակադեմիական ներգրավվածությանը:* Դրանում նկարագրված են 20 պնդումներ, որոնք վերաբերում են ուսանողների՝ ուսումնական գործընթացում ներգրավվածությանը: Յուրաքանչյուր մասնակից պետք է նշի, թե դրանցից որը որքանով է բնութագրական իրեն: Գնահատումը իրականացվում է 1-5 բալային սանդղակով:

Ակադեմիական ներգրավվածությունը վեր հանող հարցարանը հնարավորություն է տալիս առանձնացնելու ներգրավվածության մի քանի սանդղակներ.

- Ակադեմիական ներգրավվածության,
- Օնլայն ներգրավվածության,
- Կոգնիտիվ ներգրավվածության,
- Սոցիալական ներգրավվածության,

[17] Տե՛ս **Arnett J.J.** (2000), նշվ. հոդվածը:
[18] Տե՛ս նույն տեղը:

- Արտալսարանային ներգրավվածության,
- Հասակակիցների հետ ներգրավվածության:

Այս սանդղակները ամբողջացրել ենք երկու գործոնների խմբի մեջ՝ ակադեմիական ներգրավվածության և սոցիալական ներգրավվածության: Առաջինում միավորվել են ակադեմիական, կոգնիտիվ և օնլայն ներգրավվածությունների սանդղակների հարցերը: Սոցիալականի մեջ միավորվել են դասախոսների հետ ներգրավվածության, հասակակիցների հետ ներգրավվածության, հուզական ներգրավվածության և արտալսարանային ներգրավվածության սանդղակների հարցերը[19]: ԵՊՀ «Անձ և սոցիալական միջավայր» լաբորատորիայում մեթոդիկաները մշակվել, տեղայնացվել և վալիդացվել են, չափվել են հոգեմետրիկ պարամետրերը, և իրականացվել է գործոնային վերլուծություն, որը ցույց է տվել, որ բոլորը գործոնները միավորվել են երկուսի մեջ:

Հաջորդ հարցարանը ուղղված է ձևավորվող հասունության տարիքային զարգացման փուլին, որում հետազոտվողները պետք է մտածեն իրենց կյանքի այս փուլի մասին: «Այս փուլ» ասելով՝ նկատի ունենք ներկա ժամանակահատվածը՝ գումարած մի քանի տարի առաջ և մի քանի տարի հետո: 1-4 միավորանոց սանդղակով պետք է գնահատվեն ստորև բերված արտահայտությունները՝ նշելով իրենց անհամաձայնության/համաձայնության աստիճանը տվյալ արտահայտությանը, որը նկարագրում է իրենց կյանքի այս փուլը: Օրինակ, եթե որոշ չափով համաձայն են, որ կյանքի այս փուլը իրենց համար «ուսումնասիրության և որոնումների փուլ է», ապա պետք է ընտրեն 3 միավորը՝ «ավելի շուտ համաձայն եմ» տարբերակը, և այդպես շարունակ: Ներկայացված են 31 պնդումներ[20]:

Երրորդ մեթոդիկան կյանքի դժվարություններին ուղղված հարցարանն է: Վերջինս բաղկացած է 42 պնդումից, որոնք նկարագրում են կյանքի և կրթական գործընթացի տարբեր ասպեկտներին առնչվող դժվարություններ: Ուսանողները պետք է նշեն, թե որ դժվարություններին են բախվել ուսումնառության տարիներին՝ տալով «այո» և «ոչ» պատասխաններ («այո» պատասխանի համար տրվում է 1 միավոր, «ոչ»-ի համար՝ 0): Առանձնացվել են 6 բաղադրիչներ՝

1. բացասական ապրումներ և հույզեր,
2. կրթական սթրես,
3. ոչ արդիականցված կրթական միջավայր,
4. սթրեսային իրականություն,
5. միջանձնային հաղորդակցության դժվարություններ,

---

[19] Տե՛ս **Karen C. H. Z., Beverley J. W., Ronnel B. K., Johnson C. H. Li, Tony S. H. Ch.** (2018), Higher Education Student Engagement Scale (HESES): Development and Psychometric Evidence, Springer Science+Business Media, LLC, part of Springer Nature 2018, Springer Science+Business Media, LLC, part of Springer Nature, էջ 219-244:

[20] Տե՛ս **Reifman A., Arnett, J. J., Colwell M. J.** (2007), նշվ. հոդվածը:

6. ընդհանրական կոմպետենցիաների պակաս [21]:

Անդրադառնանք ձևավորվող հասունության և ակադեմիական ներգրավվածության հարցարաններից ստացված տվյալներին *(տե՛ս աղյուսակ 1 և 2)*:

Ձևավորվող հասունության հարցարանը, ինչպես արդեն նշել ենք, բաղկացած է 6 բաղադրիչներից, որտեղ միջին թվաբանական ամենաբարձր ցուցանիշները ապահովել են փորձարկումների/հնարավորությունների բաղադրիչը (M=3,33, n=180, SD=0,52) և ինքնակենտրոնացման բաղադրիչը (M=3,29, n=180, SD=0,58): Կարող ենք նշել, որ մեր հետազոտական ընտրանքի համար ձևավորվող հասունության տարբեր բաղադրիչներից հատկապես այս երկու բաղադրիչներն են ավելի ակտուալ իրենց տարիքային զարգացման փուլի համար: Ամենացածր ցուցանիշը գրանցվել է նշված հարցարանի անկայունության բաղադրիչի ցուցանիշների դեպքում (M=2,48, n=180, SD=0,66):

Աղյուսակ 1

Նկարագրական վիճակագրություն. ձևավորվող հասունության բաղադրիչներ

	Միջին	Ստ. շեղում
Ինքնության ուսումնասիրում	3,29	0,54
Փորձարկումներ/ հնարավորություններ	3,33	0,52
Անկայունություն	2,48	0,66
Այլոց վրա կենտրոնացում	2,85	0,70
Ինքնակենտրոնացում	3,27	0,58
Մեջտեղում լինելու զգացողություն	3,07	0,64

Աղյուսակ 2

Նկարագրական վիճակագրություն. ակադեմիական ներգրավվածության բաղադրիչներ

	Միջին	Ստ. շեղում
Ակադեմիական ներգրավվածություն	3,62	0,85
Սոցիալական ներգրավվածություն	2,94	0,92

Ակադեմիական ներգրավվածության հարցարանի դեպքում ակադեմիական/կոգնիտիվ ներգրավվածության միջին թվաբանական ցուցանիշները ավելի բարձր են (M=3,62, n=180, SD=0,85), քան սոցիալական ներգրավվածության ցուցանիշները (M=2,94, n=180, SD=0,92): Կարող ենք

[21] Տե՛ս **Ա. Գրիգորյան, Ա. Մերոբյան, Ն. Խաչատրյան**, Ուսանողների կյանքի դժվարությունների ուսումնասիրման հարցարանի մշակում և հոգեչափողական բնութագրերի վերլուծություն, «Բանբեր Երևանի համալսարանի. Փիլիսոփայություն, հոգեբանություն», 2022, № 2, էջ 63-74:

նշել, որ մեր հետազոտական ընտրանքում ներառված ուսանողները ավելի շատ ներգրավված են կրթության ակադեմիական/կոգնիտիվ մասում, քան սոցիալական շփումներում: Ուսումնառության ժամանակ ուսանողները բախվում են ակադեմիական և ոչ ակադեմիական մի շարք խնդիրների, դժվարությունների, որոնք ազդում են նրանց առաջադիմության, ուսումնական գործընթացում ներգրավման վրա:

Աղյուսակ 3

Նկարագրական վիճակագրություն. կյանքի դժվար իրավիճակների բաղադրիչներ

	Միջին	Ստ. շեղում
Բացասական հույզեր և ապրումներ	4,31	2,01
Կրթական սրթես	3,38	1,56
Ոչ արդիականացված կրթական միջավայր	3,71	2,25
Սթրեսային իրականություն	3,97	2,02
Կոմպետենցիաների պակաս	2,66	1,67
Հաղորդակցման դժվարություններ	0,65	0,97

Ինչպես երևում է աղյուսակ 3-ից, մեր հետազոտական ընտրանքում կյանքի դժվարություններից ամենաբարձր ցուցանիշներ են գրանցել բացասական հույզերն ու ապրումները (M=4,31, n=180, SD=2,01) և սթրեսային իրականությունը (M=3,97, n=180, SD=2,02): Ինչպես արդեն նշեցինք, առաջին խմբի մեջ են մտնում հավասարակշռության, ինքնակարգավորման պահպանման դժվարությունները, և այն բոլոր դժվարությունները, որոնք հանգեցնում են կրթական սթրեսի: Իսկ սթրեսային իրականության մեջ առանձնացնում ենք և՛ ուսումնական գործունեության, և՛ կյանքի այլ ոլորտների վրա դրա ազդեցությունը, ինչպես օրինակ՝ պատերազմ, համավարակ, մտերիմ մարդկանց հիվանդություններ, կորուստ և այլն: Ամենացածր ցուցանիշները առկա են հաղորդակցման դժվարությունների բաղադրիչում (M=0,65, n=180, SD=0,97), ինչի վրա հիմնվելով՝ կարող ենք նշել, որ մեր հետազոտական ընտրանքում ուսանողները ավելի շատ բախվում են նշված մնացած դժվարություններին և ավելի քիչ ունենում են հաղորդակցման դժվարություններ:

Ուսանողների ակադեմիական ներգրավվածության վրա կրթական և տարիքին բնորոշ դժվարությունների գործոնները պայմանավորող նշանակությունը պարզելու համար իրականացրել ենք հիերարխիկ ռեգրեսիոն վերլուծություն: Մոդելում ընտրել ենք անկախ փոփոխականների հետևյալ հաջորդականությունը. առաջին մակարդակում՝ ժողովրդագրական որոշ ցուցանիշներ՝ որպես վերահսկվող փոփոխականներ, և ՄՈԳ-ը (սեռը, աշխատանքի առկայությունը, ուսման նպատակով տանից հեռանալու հանգամանքը), երկրորդ մակարդակում՝ կյանքի դժվարությունները, երրորդում՝ ձևավորվող հասունությունը:

Որպես կախյալ փոփոխական ընտրվել են ակադեմիական և սոցիալական ներգրավվածությունները (*տե՛ս աղյուսակ 4*):

Վերլուծության արդյունքների համաձայն՝ ակադեմիական ներգրավվածության ռեգրեսիոն մոդելի բացատրական նշանակությունը 25% է (F=4.727; p<0,0001)։ Ակադեմիական ներգրավվածության համար վիճակագրորեն նշանակալի կանխորոշիչ դեր է ունեցել ՄՈԳ-ը (B=0,094; p<0,001), տարիքային զարգացման գործոններից՝ ինքնակենտրոնացումը (B=0,435; p<0,05), կյանքի դժվարությունների գործոնները մոդելի համար նշանակալի չեն եղել։ Ընդ որում՝ ՄՈԳ-ը և ինքնակենտրոնացման գործոնը դրականորեն են պայմանավորում ակադեմիական ներգրավվածությունը, վերջինս մեծանում է, երբ ձևավորվող հասունության փուլում գտնվող անձի ինքնակենտրոնացման մակարդակը բարձր է, և նա ունի բարձր ուսումնական առաջադիմություն, բարձր միջին որակական գնահատական:

Աղյուսակ 4

Ակադեմիական և սոցիալական ներգրավվածությունը պայմանավորող գործոնների վերհանում

Քայլ	Անկախ փոփոխականներ	Կախյալ փոփոխականներ					
		Ակադեմիական ներգրավվածություն			Սոցիալական ներգրավվածություն		
		B	*SE*	*Beta*	*B*	*SE*	*Beta*
1	Սեռ	,127	,159	,072	,090	,143	,047
	Կրթ. տանից հեռու	-,100	,148	-,056	,062	,136	,032
	ՄՈԳ	,094	,022	,375***	,059	,020	,214***
	Աշխատանք	-,105	,143	,060	,095	,129	,050
2	Բացասական հույզ.	-,027	,049	-,062	-,104	,044	-,218**
	Կրթական սթրես.	-,066	,050	-,120	,042	,044	,071
	Ոչ արդի. կրթ. միջ.	-,012	,038	-,031	-,106	,034	-,255**
	Հաղորդակցման դժվ.	,014	,041	,033	,006	,038	,157**
	Սթրես. իրական.	,129	,079	,146	,151	,070	,012
	Կոմպետ. պակաս	,008	,045	,015	-,015	,041	-,026
3	Ինքնության ուսում.	-,049	,205	-,031			
	Փորձարկումներ	,182	,223	,109			
	Անկայունություն	-,067	,118	-,051			
	Այլոց վրա կենտր.	,001	,120	,001			
	Ինքնակենտրոնացում	,435	,207	,291**			
	Մեջտեղում զգաց.	,099	,143	,073			
	Adjusted R Square	*,255*			*,137*		
	F change	*4,729****			*4,093****		

p<0.05, p**<0.01, p***<0.001*

Ըստ վերլուծության արդյունքների՝ ռեգրեսիոն մոդելի բացատրական նշանակությունը սոցիալական ներգրավվածության դեպքում 16% է (F=1,795; p>0,10)։ Տարիքային զարգացման գործոնները նշանակալի չեն

եղել մոդելի համար, նշանակալի են միայն ժողովրդագրական տվյալները և կյանքի դժվարությունները, այդ պատճառով մեկնաբանել ենք այն մոդելը, որտեղ տարիքային զարգացման գործոններն ընդգրկված չեն: Ռեգրեսիոն մոդելի բացատրական նշանակությունը տվյալ մոդելի դեպքում 14% է (F=4,093; p=0,001): Համաձայն ստացված տվյալների՝ սոցիալական ներգրավվածության համար նշանակալի կանխորոշիչ դեր է ունեցել ՄՈԳ-ը (B=0,059; p<0,05), կյանքի դժվարությունների գործոններից՝ բացասական հույզերը և ապրումները (B=-0,104; p<0,05), ոչ արդիականացված կրթական միջավայրը (B=-0,106; p<0,05) և հաղորդակցման դժվարությունները (B=0,151; p<0,05), տարիքային զարգացման գործոնները նշանակալի չեն եղել: Ընդ որում՝ բացասական հույզերն ու ապրումները և ոչ արդիականացված կրթական միջավայրը հակադարձ ազդեցություն ունեն սոցիալական ներգրավվածության վրա, այսինքն՝ ինչքան քիչ են արտահայտված այս գործոնները, այնքան բարձր է ուսանողների սոցիալական ներգրավվածությունը: Իսկ հաղորդակցման դժվարությունները դրականորեն են պայմանավորում սոցիալական ներգրավվածությունը, այսինքն՝ որքան շատ են արտահայտված լինում ուսանողի հաղորդակցման դժվարությունները, այնքան ավելի է նա փորձում սոցիալապես ներգրավվել համալսարանում: Ինչպես ակադեմիական, այնպես էլ սոցիալական ներգրավվածության դեպքում ՄՈԳ-ը ունի դրական ազդեցություն, այսինքն՝ որքան բարձր է լինում այն, այնքան ավելի բարձր է ուսանողների սոցիալական ներգրավվածությունը:

Այսպիսով, ամփոփելով ստացված տվյալները, կարող ենք ասել, որ ակադեմիական ներգրավվածության համար նշանակալի են ձևավորվող հասունության տարիքային գործոնը, և նշանակալի չեն կյանքի դժվարությունները: Սա նշանակում է, որ տարիքային առանձնահատկությունները կանխորոշիչ են եղել ակադեմիական ներգրավվածության համար, ընդ որում՝ դրականորեն: Ընդհակառակը՝ տարիքային զարգացման այս ամբիվալենտության մեջ նշանակալի են տվյալ տարիքային փուլին բնորոշ դրական՝ զարգացմանը միտված գործոնները, օրինակ՝ ինքնակենտրոնացումը, և դա նշանակում է, որ ուսանողին, երիտասարդին պետք է տալ տարածություն, ժամանակ և հնարավորություն ինքնաճանաչման, ինքնահասկացման, ինքնագնահատման ու ինքնաարժևորման համար: Կարևոր է ընդգծել, որ այս տարրերը անձնային զարգացման աճի մեջ ունեն կարևոր դեր և նպաստում են ակադեմիական ներգրավվածությանը, ինչը էական պայման է ուսումնական առաջադիմության համար: Սրանով էլ կարող ենք բացատրել անձնային զարգացման այս գործոնների և ուսումնական, մասնագիտական կրթության ստացման կապի կարևորությունն ու որոշիչ լինելը:

Ի տարբերություն ակադեմիական ներգրավվածության՝ սոցիալական ներգրավվածության դեպքում նշանակալի են կյանքի դժվարությունները, և նշանակալի չեն ձևավորվող հասունության տարիքային

գործոնները: Սա նշանակում է, որ միջավայրում ընդգրկվելու, սոցիալական ներգրավվածության համար, որի էությունը ուսանողի կողմից սոցիալական վարքագծի գրված և չգրված օրենքերին հետևելն է, դասաժամերին և արտալսարանային խմբակներին, միջոցառումներին ակտիվորեն մասնակցելը, հասակակիցների և դասախոսների հետ հաղորդակցվելն ու փոխգործակցելը, էական են այն դժվարությունները, որոնց բախվում է երիտասարդը, ուսանողը, մասնավորապես՝ իր բացասական ապրումներն ու հույզերը և ոչ արդիականացված կրթական միջավայրը: Բացասական հույզեր և ապրումներ ասելով նկատի ունենք ուսանողի հուզական տարբեր դժվարությունները՝ ներառյալ հուզական հավասարակշռությունը, ինքնատիրապետումը, ինչպիսիք են, օրինակ, քննությունների, առաջադիմության հետ կապված տագնապը, սթրեսային ապրումները, ինչպես նաև էկզիստենցիալ խնդիրները՝ պայմանավորված մասնագիտության հանդեպ հիասթափությամբ, անիմաստության զգացմամբ, մոտիվացիայի թուլացմամբ: Փաստորեն, այս խմբի դժվարությունները մարտահրավերային են ուսանողների հոգեկան առողջության պահպանման առումով: Իսկ ոչ արդիականցված կրթական միջավայրը ենթադրում է ուսումնական գործընթացի վատ կազմակերպումը, ոչ արդիական մասնագիտական գիտելիքը և գրականությունը, ոչ այնքան կոմպետենտ դասախոսները, վատ դասավանդումը, գնահատման չափանիշների անորոշությունը և այլն: Հետևաբար, նշված դժվարությունները բացասաբար են ազդում սոցիալական ներգրավվածության վրա: Իսկ մեկ այլ դժվարություն՝ հաղորդակցման դժվարությունը, դրականորեն է պայմանավորում ուսանողի սոցիալական ներգրավվածությունը, այսինքն՝ նման դժվարության բախվելիս ուսանողը փորձում է, ձգտում է սոցիալապես ներգրավվել համալսարանում:

Հիմնվելով ստացված տվյալների վրա՝ կարող ենք ասել, որ ուսանողների ներգրավվածությանը նպաստում են մի շարք գործոններ: Այսպես, ակադեմիական ներգրավվածության համար կարևոր են անձնային և տարիքային զարգացմանը բնորոշ առանձնահատկությունները, մասնավորապես՝ ինքնակենտրոնացման բարձր մակարդակը և միջին որակական գնահատականի բարձր լինելը: Ինչ վերաբերում է սոցիալական ներգրավվածությանը, ապա այստեղ, բացի ՄՈԳ-ից, կարևոր է կյանքի դժվարությունների, այլ ոչ թե տարիքային առանձնահատկությունների դերը: Բացասական հույզերն ու ապրումները, ոչ արդիական կրթական միջավայրը խանգարում են, որ ուսանողը սոցիալապես հնարավորինս ներգրավված լինի ակադեմիական միջավայրում: Հետաքրքրական է, որ հաղորդակցման դժվարությունները նպաստում են սոցիալական ներգրավվածության բարձր մակարդակին, ինչը բացատրվում է նրանով, որ տվյալ դժվարությունը հաղթահարելու համար ուսանողը հնարավորինս ընդլայնում ու բարելավում է իր սոցիալական շփումները բուհում:

АСТХИК СЕРОБЯН, ЭДИТА АРАКЕЛЯН – ***Академическая вовлеченность студентов: влияние образовательных и возрастных трудностей.*** – Академическая вовлеченность студентов важна для организации и эффективности образовательного процесса. Исследование студенческой активности – одна из актуальных проблем высшего образования сегодня, которая находится в центре внимания со второй половины XX века. С этой точки зрения важно рассмотреть академические и неакадемические трудности в жизни студентов, с которыми они обычно сталкиваются на данном этапе своего возрастного развития и которые влияют на степень вовлеченности. Цель статьи - выявить факторы, способствующие или препятствующие учебной вовлеченности студентов в силу возрастных особенностей и трудностей в учебной деятельности. Выборку исследования составили 18-25-летние учащиеся различных вузов РА, имеющие степень бакалавра и магистра (180 студентов, 61% из которых женщины). Согласно полученным результатам, факторы становления взросления, а именно самофокус, значимы для академической вовлеченности, а жизненные трудности, конкретно негативные эмоции, несовременная образовательная среда, трудности общения – для социальной вовлеченности. Оценки имеют определяющее значение как для академической, так и для социальной вовлеченности студентов. Результаты исследования будут полезны в процессе разработки образовательной политики вузов, а также при оценке эффективности внедрения новых образовательных практик.

Ключевые слова: *академическая вовлеченность, социальная вовлеченность, жизненные трудности, становящаяся взрослость, учебные трудности*

ASTGHIK SEROBYAN, EDITA ARAKELYAN – ***Students' Academic Engagement in Higher Education: The Role of Age and Education-Related Challenges.*** – The academic engagement of students is important both for the organization and for the effectiveness of the educational process. The purpose of the article is to identify the role of the factors that promote or prevent the educational activity of students. The main factors that are taken into consideration are age characteristics and difficulties in educational activities. The study sample consisted of 18-25-year-old students of various universities of the RA with bachelor's and master's degrees (180 students, 61% of whom are women). According to the results, Self-Focus is positively significant for academic engagement. Negative emotions in a non-modern educational environment are positive predictors and Communication difficulties are predictors for social engagement. Grades are crucial for both the academic and social engagement of students. The results of the study will be useful in the process of developing the educational policy of universities, as well as in assessing the effectiveness of the introduction of new educational practices.

Keywords: *academic engagement, social engagement, life difficulties, emerging adulthood, academic difficulties*

ԲԱՆԲԵՐ ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ. ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ, ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ
2023. № 3. 62-77 *Հոգեբանություն*
https://doi.org/10.46991/BYSU: E /2023.14.3.062

ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԳՈՎԱԶԴԱՇՈՒԿԱՆ ՄԵԴԻԱՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՑՔՈՒՄ

ՍԱԹԵՆԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Ներկայումս շուկայում առկա է ապրանքների լայն ընտրանի, ուստի ապրանքի իրացման հարցում գովազդը լավագույն լուծումն է: Ազդեցիկ գովազդ ստեղծելու համար օգտագործվում են հոգեբանական զանազան հնարանքներ, ինչպիսիք են՝ ապրանքի՝ որպես բրենդի ճանաչումը, գունային մարտավարությունը, շրջանառության հաճախականությունը, թիրախային խմբի ընտրությունը, դիպուկ և տեղին կարգախոսի գործածումը, այլընտրանքային մեթոդների կիրառումը և այլն: Այս հանգամանքով պայմանավորված՝ աշխատանքի նպատակը գովազդի տարանջատ քննությունն է անհատի և նրա արժեհամակարգի վրա ունեցած ազդեցության տեսանկյունից:

Մեր օրերում մեդիան, որը լի է բազմաժանր տեղեկատվությամբ, մեր ենթագիտակցություն է ներմուծում բազում գաղափարներ ու արժեքներ: Գովազդատուները միմյանց հերթ չեն տալիս՝ ստեղծելու մոդելներ, սահմանելու կյանքի նորմեր, որոնց մենք կամա թե ակամա ենթարկվում ենք: Մշտադիտարկելով հայաստանյան մեդիան՝ նկատում ենք, որ արևմտյան արժեքները մեզանում արմատավորված են, և բավականաչափ ժամանակ է պահանջվում, որ կարողանանք կոտրել դրանք ու նորերը ստեղծել: Հաճախ գովազդաշուկան որոշակի քաղաքականություն է վարում առանց հստակ մարտավարությունների, որտեղ գլխավորը մրցակցությունն է: Այդ պայքարում երբեմն անտեսվում են գովազդային արտադրանքի գործառութային, հոգեբանական, արժեհամակարգային, բարոյաէթիկական և օրենսդրական կողմերը:

Բանալի բառեր - *գովազդ, ներազդում, փրայմ-թայմ, ձայնի ազդեցություն, հայտնի անձինք, խաղադրույքի ռիսկեր, արժեքաստեղծ գործոններ, թաքնված գովազդ, գենդերային կարծրատիպեր, ՆԼԾ հնարանքներ*

Գովազդային գործունեությունն ուսումնասիրվել է գիտության տարբեր ճյուղերի առաջատար մասնագետների կողմից, առաջարկվել են ծառացած խնդիրների լուծման տարբեր հայեցակարգեր: Այնուամենայնիվ, խնդրի արդիականությունն ու դրա զարգացման նախադրյալները թելադրում են առավել մանրակրկիտ ուսումնասիրության անհրաժեշտություն տարբեր տեսանկյուններից:

Առաջադրված հիմնախնդրի արդիականությունը կարևորում են Ռ. Մոկշանցևը, Ե. Պրոնինան, Ե. Պեսոցկին, Ա. Կարմինը, Ռ. Չալդինին, Ռ. Բենդլերը և Դ. Գրինդերը, Մ. Լյուշերը, Հ. Բայադյանը և այլք: Համապատասխան աշխատություններում քննություն են բռնել այնպի-

սի կարևոր թեմաներ, ինչպիսիք են գովազդի կառուցման օրինաչափությունները, առանձնահատկությունները, ժամանակակից մարտահրավերները և արժեհամակարգային փոխակերպումները, ներազդման տարաբնույթ հնարանքները, մեթոդաբանական հիմքերը, այլընտրանքային գործիքակազմի կիրառությունը և այլն:

Գովազդաշուկան շարունակ զարգացում է ապրում՝ իր հետ բերելով ինչպես նորարարական մոտեցումներ ու ստեղծարար լուծումներ, այնպես էլ մարտահրավերներ: Ժամանակի հետ գործիքները փոխվում են, իսկ գովազդը նոր գեղագիտություն է պահանջում: Բազմազանությունն այնքան մեծ է, որ գովազդ դիտելը հաճախ նույնիսկ բավականություն է պատճառում: Հասկանալի է, որ խոսքը ճիշտ կառուցված գովազդային բովանդակության մասին է, որը, կոմերցիոն միտումներից զատ, նաև արդիական լուծումներ է ստանում՝ թրենդային մոտեցումներ, հայտնի մարդկանց դերակատարություն, սյուժետային անցումներ, գունային խաղ, անիմացիոն հավելումներ, հումոր և այլն:

Այսօր գովազդային գործունեությունը կարելի է դասել կիրառական գիտությունների շարքին, որի վարկանիշն օրեցօր աճում է, սակայն վերջինիս տեսական և մեթոդաբանական հիմքերը ժամանակակից գիտական գրականության մեջ դեռևս հստակ սահմանված չեն: Հատկապես հստակ չեն դրա առարկան և խնդիրները, ինչն անխուսափելիորեն անդրադառնում է մասնագետների հետազոտական մեթոդների ընտրության վրա:

Հայաստանյան գովազդաշուկայի արդի պատկերը հասկանալու համար մեդիահոգեբանական վերլուծության են ենթարկվել հայկական հեռուստաշուկայի ցայտուն օրինակները, մասնավորապես՝ փրայմ-թայմի ժամանակահատվածում (18:00-23:59): Հարցմանը մասնակցել է արական և իգական սեռերի 18-35, 36-50 և 51-65 տարիքային տիրույթի 249 ներկայացուցիչ, որոնք ունեն տարբեր կրթական մակարդակներ և մասնագիտություններ: Հետազոտության հիմնավորվածությունն ապահովվել է նաև տարիքային տարբեր խմբերի հետազոտվողների լայն ընդգրկմամբ, կատարված հետազոտությունների մեծ ծավալով և տևականությամբ, դիտարկվել են 2012-2023 թթ. հայաստանյան գովազդները: Մեր առջև դրված խնդիրների առավել մանրակրկիտ ուսումնասիրության և արդյունքների վերլուծության համար կիրառվել են համեմատության և համադրության, համակարգային, կառուցվածքային, բովանդակային վերլուծության, մշտադիտարկման և որակական գնահատման մեթոդները, ինչպես նաև անցկացվել են հանրային հարցումներ, որոնց միջոցով փորձել ենք պարզել, թե ազդեցության ինչ լծակներ է կիրառում գովազդատուն՝ ուժեղացնելով գովազդային արտադրանքի ներգործությունը լսարանի վրա:

Գաղտնիք չէ, որ հայաստանյան հեռուստաարտադրանքի զգալի մասը ողողված է թաքնված գովազդով, և այն առավել հաճախ հանդիպում է եթեր հեռարձակվող ամենավարկանիշային հեռուստանախագ-

ծերում: Մարդիկ չեն սիրում, երբ իրենց բացահայտ մղում են որևէ գործողության, առավել ևս՝ երբ խոսքը վերաբերում է գնումներ կատարելուն: Ուստի թաքնված գովազդները լավագույն միջոցն են ենթագիտակցորեն ազդելու իրական սպառողի վրա, իսկ հեռուստանախագծերը դրանք քողարկված մատուցելու անփոխարինելի հարթակ են: Միաժամանակ պետք է նշել, որ թաքնված գովազդները հեռուստանախագծերի համար հարկերը թաքցնելու լավագույն միջոց են:

Թաքնված գովազդի ամենաշատը կարելի է հանդիպել հումորային հեռուստանախագծերում, որոնցում գովազդվող ապրանքների թիվը հատում է 20-ը: Օրինակ՝ «Ֆուլ հաուս» սիթքոմի յուրաքանչյուր սերիայում 20 և ավելի թաքնված գովազդ կարելի է նկատել: Յուրաքանչյուր սերիայում խոսվում է «Լոռա» լվացքի հեղուկի մասին, բոլոր հերոսները գնումներ են կատարում «ՍԱՍ» սուպերմարկետից, օգտվում «Յուքոմի» կապից, բոլորը խմում են «Ռոյալ Արմենիա» սուրճ և խրախուսում են «Վիվառոյում» խաղադրույք կատարելը:

Հեռուստատեսային գովազդն ամենամեծ ծածկույթով և զանգվածայնությամբ գովազդի տեսակն է: Այն ապահովում է անմիջական կապ գովազդատուների ու հեռուստադիտողի միջև, ունի հաղորդակցման ալիքներ, որոնք հասանելի են հասարակության լայն շերտերին: Վարկանիշային կախվածության առումով առաջատար է «Արմենիա» հեռուստաընկերությունը, որը, կարծես, կայացրել է գովազդամետ քաղաքականության որոշում՝ գերհագեցնելով եթերը տարբեր, այդ թվում նաև թաքնված գովազդի տեսակներով:

Որքան բարձր է վարկանիշը, այնքան թանկ է գովազդի արժեքը, հետևաբար և՝ ստացվող եկամուտները: Իսկ այդ եկամուտների բնականոն մուտքը պարզապես կենսական անհրաժեշտություն է հեռուստաալիքի գործունեության համար: Այս մեխանիզմը կիրառելի է և՛ միջազգային, և՛ հայաստանյան շուկայում:

Հայտնի մարդկանց ներգրավվածությունը գովազդում

Տեսաբանները փաստում են, որ հայտնի մարդկանց դերակատարությունը գովազդում վստահություն է ներշնչում: Մեր հետազոտության ընթացքում պարզ դարձավ, որ հայ հեռուստադիտողին հայտնի մարդկանց դերակատարությունը գովազդում վստահություն չի ներշնչում, թեև շատերը մեծ հետաքրքրությամբ դիտում են, հատկապես երբ դրանք հագեցած են հումորային տարրերով: Այսպես, «Ռոսգոսստրախ Արմենիա» ապահովագրական ընկերության գովազդում նկարահանվել է Հենրիխ Մխիթարյանը[1]: Գովազդում սիրված ֆուտբոլիստի մայրը զանգում է որդուն և հայտնում, որ մեքենան վնասել է, իսկ Մխիթարյանը հանգստացնում է մորը և սկսում գովաբանել «Ռոսգոսստրախ» ըն-

[1] Տե՛ս Ռոսգոսստրախ Արմենիա / Հենրիխ Մխիթարյանի գովազդային հոլովակը, Apr 17, 2015, հասանելի է՝ 18.03.2023, https://www.youtube.com/watch?v=5GrtLGiEa4A

կերությունը՝ ասելով, որ անհանգստանալու կարիք չկա. մեքենան «Ռոսգոսստրախում» է ապահովագրվել, նրանք ամեն ինչ շատ արագ ձևակերպում են: Մայրն առաջարկում է զանգահարել «Ռոսգոսստրախ». «Որ քեզ ճանաչեն, ավելի լավ կվերաբերվեն»: Իսկ ֆուտբոլիստը պատասխանում է, որ նրանք բոլորին էլ շատ լավ են վերաբերվում, լուրջ կազմակերպություն է, 100 տարի է՝ այդ գործով են զբաղվում և այլն: Շատերը կարծում են, որ եթե աշխարհահռչակ ֆուտբոլիստը վստահում է այդ ապահովագրական ընկերությանը, ուրեմն այն, իրոք, լավն է:

Հետազոտության շրջանակի հաջորդ գովազդը «Էվոկաբանկի» գովազդն է, որի գլխավոր հերոսուհին հայտնի երգչուհի Իվետա Մուկուչյանն է[2]: Բուն գովազդին անդրադառնալուց առաջ հարկ է նշել, որ «Էվոկաբանկը» նախկինում կոչվում էր «Պրոմեթեյ», որը ռեբրենդինգի է ենթարկվել, և բանկի գովազդային արշավի դեմքն է դարձել Իվետա Մուկուչյանը:

Մոտ կես րոպե տևողությամբ գովազդը լի է ՆԼԾ (նյարդալեզվաբանական ծրագրավորում)* հնարանքներով: Առաջին տեսարանում Իվետա Մուկուչյանի սիլուետն է, որտեղ իր երգի ներքո հաղորդում է հետևյալ միտքը. «Աշխարհը շատ արագ է փոխվում, յուրաքանչյուր նոր օր բերում է նոր իրականություն»: Երգչուհին հորդորում է հաղթահարել դժվարությունները, տոնել ապագա հաղթանակները և վստահեցնում, որ հաճախ մարդուն հաղթանակից ընդամենը մեկ հպում է բաժանում, և դա բանկի կողմից ստեղծված Evoca Touch բջջային հավելվածն է: Բանկի կարգախոսն է՝ «Դեպի նոր իրականություն»: Կարգախոսն արդեն իսկ սպառողին ենթագիտակցական ազդակ է տալիս և տպավորություն ստեղծում, որ դա ապագայի բանկն է: Գովազդում ընտրված մանուշակագույնը ևս հոգեբանական հնարք է, երբ նույնիսկ երգչուհու աչքը մանուշակագույն է դառնում, և տպավորություն է ստեղծվում, թե նա վարակվում է «ապագայով»: Մանուշակագույնը և արծաթագույնը կրեատիվության ու ապագայի գույներ են, որոնց ընտրությունը թերևս ռիսկային էր բանկային ոլորտում, բայց տվյալ դեպքում՝ լավագույնս արդարացված:

Գովազդի ընթացքում կիրառվել է սուբմոդալության հնարքը, երբ ամպերի ու արևի միջոցով սպառողի մեջ առաջացնում են լավ ապագայի սպասումներ, իսկ անծայրածիր ձգվող ճանապարհները և մեքենայի շարժիչի ձայնը ստիպում են մտածել մարդու անսպառ հնարավո-

---

[2] Տե՛ս Factory production, Towards a new reality Evoca Bank, Nov 3, 2017, հասանելի է՝ 08.04.2023, https://www.youtube.com/watch?v=U8FWDjF2mPU&feature=youtu.be&fbclid=IwAR3mZRXY5hBoz8Ue2ufnL7F1NdL1n5KxOuiZD_mrrc6e7flzNFKCNoGfpJg

* ՆԼԾ-ն այսօր համարվում է հոգեբանության ամենահեռանկարային և արագ զարգացող ուղղություններից մեկը: Այն ներառել է մարդկանց վրա ազդեցության լավագույն հնարանքները և տեխնիկաները՝ այդ ամենի հիման վրա ստեղծելով բացարձակ նոր մեթոդիկա: ՆԼԾ մեթոդների կիրառումը գովազդում համարվում են արդյունավետ, քանի որ դրանք թույլ են տալիս ազդել մարդու անգիտակցական մակարդակի վրա:

րությունների մասին: Ինչպես նախորդ, այնպես էլ այս գովազդում հերոսուհին խոսում է ընտրության մասին, սակայն սպառողին տալիս է միայն ենթադրյալ ընտրության պատրանք, որը հենց տվյալ բանկի ծառայությունն է: Ընտրված երաժշտական և լուսային էֆեկտները նույնպես ստիպում են սպառողին իրեն նորարար զգալ:

Հայտնի մարդու ֆենոմենին է դիմում նաև «Սաֆ» ակումբը, որտեղ գլխավոր դերում երգիչ Արսեն Սաֆարյանն է, ով մեքենայով ուղևորվում է ակումբ՝ հեռախոսով խոսելով. «Ես արդեն ճանապարհին եմ»: Գովազդը կարգախոս չունի, միայն տղամարդու ձայնով նշվում է ակումբի հասցեն:

Թվում է՝ հայտնի անձանց կողմից գովազդվող ապրանքատեսակն ավելի մեծ հնչեղություն է ձեռք բերում ու վստահություն: Ներշնչում, որը պայմանավորված է մի շարք գործոններով՝ հայտնի մարդու հեղինակությամբ, վստահությամբ վերջինիս հանդեպ և այլն: Հոգեբանորեն մարդիկ հակված են հավատալու և ուշադրություն դարձնելու այն ամենին, ինչի մասին ասում է ծանոթ մարդը, և առավել քիչ հավանական է վստահել անծանոթի կարծիքին: Սա է պատճառը, որ հայաստանյան մեդիաոլորտում հանդիպում ենք ինչպես հայտնի անձանց, այնպես էլ փորձագետների կողմից գովազդվող բազում ապրանքանիշերի: Տվյալ դեպքում հիմք ընդունելով Գրիդների և Բենդլերի համատեղ հիմնադրույթը[3]՝ մեր կատարած հետազոտությամբ հերքում ենք դրա միանշանակությունը, քանի որ դիսոնանսն ավելի քան ակնհայտ է: Այսպես՝ 71,3%-ին վստահություն չեն ներշնչում այն գովազդները, որոնցում դերակատարություն են ստանձնել հայտնի անձինք, իսկ 28,7%-ը նշում է, որ դրանք իրենց վրա այնուամենայնիվ ազդում են:

Գծապատկեր 1

Ձեզ վստահություն ներշնչո՞ւմ են այն գովազդները, որոնցումառկա են հայտնի մարդիկ



[3] Տե՛ս **Гриднер Дж., Бэндлер Р.** Из лягушек в принцы, Воронеж, 1993:

Այսպիսով, հայտնի մարդկանց ներգրավումը կարող է բարձրացնել գովազդի վարկանիշը, սակայն դա վերջինիս հաջողության գրավական չի կարող համարվել:

Ձայնի ազդեցությունը գովազդում

Նշանակություն ունի գովազդի ոչ միայն սյուժեն, այլև հնչողությունը, քանի որ ձայնը մեծ նշանակություն ունի անհատի ընկալման համար: Հայաստանյան հեռուստաեթերում քիչ գովազդների կարելի է հանդիպել, որոնցում հնչում է կնոջ ձայն, ուստի մեր խնդիրներից էր նաև հետազոտել, թե որ դեպքում է գովազդն առավել ազդեցիկ հասարակության համար: Կարծիքները լրիվ համապատասխանում են մերօրյա գովազդաշուկայում տիրող իրավիճակին. հարցվածների 48,5%-ի համար ազդեցիկ է այն գովազդը, որը հնչում է հասուն տարիքի տղամարդու ձայնով, և միայն 30,5%-ի համար է կնոջ ձայնն առավել ազդեցիկ գովազդում, այն էլ՝ երիտասարդ կնոջ:

Գծապատկեր 2

Ձեզ համար գովազդն առավել ազդեցիկ է, եթե տեքստը հնչում է



Հայաստանյան իրականությունը երբեմն զարմացնող է, երբեմն՝ պարադոքսալ, երբեմն էլ՝ կարծրատիպերով լեցուն: Որքան էլ հասարակությունը փորձում է պայքարել գենդերային անհավասարության դեմ, միևնույնն է, կան բացեր, որոնք անհապաղ լրացման կարիք ունեն: Կարծրատիպերով լի հասարակությունում հաճախ նաև գովազդներն են կարծրատիպացված: Թեև առօրյա մեկնաբանմամբ մենք հակված ենք կարծրատիպերը համարելու բացասական երևույթ, սակայն դրանք ոչ միշտ են միանշանակ մերժելի: Կարծրատիպերի առաջնային գործառույթը ճանաչողության գործընթացը դյուրին դարձնելն է. մարդն ամեն անգամ տեղեկատվությունը նորից մեկնաբանելու և իմաստավորելու փոխարեն գործում է արդեն կարծրացած սխեմաներով, իսկ դրանց ձևավորումը տեղի է ունենում ինչպես անհատական փորձի ընդհանրացմամբ, այնպես էլ սոցիալական փորձի փոխանցմամբ[4]:

[4] Տե՛ս **Мацумото Д**. Психология и культура, СПб., 2002, էջ 79-87:

Այսպես, հայաստանյան գովազդաշուկայում մատների վրա կարելի է հաշվել այն գովազդները, որոնցում կինը պատկերվում է կոնկրետ մասնագիտություն ունեցողի դերում, մինչդեռ չափից շատ են այնպիսիք, որոնցում նա տնային տնտեսուհու դեր է խաղում: Կանայք մեծ մասամբ պատկերվում են տնտեսական ապրանքների գովազդներում և տնային տնտեսուհու դերում. նման թեմայի շահարկումը խնդրահարույց է այնքանով, որ արծարծում է մեր հասարակության մեջ կնոջ՝ մշտապես կենցաղում լինելու, գործ անելու և ընտանիքին պատկանելու կարծրատիպը: Մինչդեռ նրա՝ հասարակական միջավայրում գտնվելու թեմայով գովազդները գրեթե բացակայում են: Կնոջ գործունեությունը սահմանափակված է կենցաղային գործերով՝ մաքրություն, լվացք, խոհանոց. նրանք կարծես իրականացնում են իրենց առաքելությունը որպես լավ կին, և դա այն ամենն է, ինչ սպասում են կյանքից:

Հարցման ընթացքում փորձեցինք պարզել այս ամենի վերաբերյալ հասարակական դիրքորոշումը: Չնայած առկա իրավիճակին՝ 53,6%-ը գովազդում կնոջը ցանկանում է տեսնել որևէ մասնագիտությամբ հանդես եկողի դերում, և միայն 2,5%-ին է դուր գալիս կնոջը տեսնել խոհանոցում կամ տան գործերով զբաղվելիս: Ստացվում է՝ հասարակությունը վաղուց փոխել է դիրքորոշումը կնոջ տեղի և դերի մասին, սակայն գովազդաշուկան շարունակում է գործել կարծրատիպերով: Հատկանշական է հատկապես այն, որ տնային տնտեսուհու դերում կնոջ դերակատարությունը տեսնել ցանկացողների մեծ մասը հենց կանայք են: Մյուս 35%-ի համար կնոջ կերպարը գովազդում ցանկացած պարագայում առավել նախընտրելի է. այստեղ գերակշռողը տղամարդկանց կարծիքն է: Գենդերային կարծրատիպերը թե՛ գիտական, թե՛ հասարակական լայն շրջանակների ուշադրության կենտրոնում են, քանի որ կարող են առաջացնել անարդար վերաբերմունք այդ չափորոշիչներին չհամապատասխանող մարդկանց հանդեպ, սահմանափակել կամ խոչընդոտել անձի ինքնադրսևորումը:

Այսպիսով, տեսալսողական գովազդում մեծ նշանակություն չունի, թե ով է դերակատարություն ստանձնում՝ տղամարդ, կին, թե երեխա, այնինչ ձայնի դեպքում առավելությունը տրվում է տղամարդուն:

Խաղադրույքների ռիսկերը գովազդում

Վերջին տարիներին Հայաստանի Հանրապետությունում ընդունվեց օրենք խաղատները մայրաքաղաքից դուրս հանելու, միայն Ծաղկաձոր, Ջերմուկ, Մեղրի և Սևան քաղաքներում տեղակայելու մասին: Սակայն փոխարենը Երևանում սկսեցին սնկի պես աճել բուքմեյքերական գրասենյակները: Ըստ «Վիճակախաղերի մասին» ՀՀ օրենքի[5]՝ վիճակախաղը հրապարակային միջոցառում է, որի ընթացքում կազմա-

[5] Տե՛ս «ՀՀ օրենքը վիճակախաղերի մասին», https://www.arlis.am/documentview.aspx?docid=75459

կերպիչը մասնակիցների միջև անցկացնում է վիճակախաղի շահումային ֆոնդի խաղարկություն, ընդ որում շահումները կախված չեն նրա գործողություններից և կամքից, այլ բացառապես արդյունք են պատահականության: Իսկ «Շահումով խաղերի և խաղատների մասին»[6] ՀՀ օրենքի համաձայն՝ շահումով խաղը ցանկացած մեքենայացված կամ կենդանի խաղն է, որը որևէ կերպ ստեղծում է շահելու հնարավորություն: Երկու դեպքում էլ մարդիկ գումար են ներդնում՝ շահելու ակնկալիքով: Մինչև 2020 թվականը, երբ Ազգային ժողովն ընդունեց «Գովազդի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին նախագիծը, և որոշ սահմանափակումներ մտցվեցին, «Վիվառո», «Տոտո», «Գուդվին», «Եվրոֆուտբոլ», «Աջարաբեթ» բուքմեյքերական ընկերությունները Հայաստանում ունեին բազմաթիվ գրասենյակներ, իրենց գովազդները տարածում էին ամենուր՝ հեռուստատեսությամբ, համացանցում, փողոցում, տրանսպորտում: Օրենքով նախևառաջ սահմանափակվեցին շահումով խաղերի գովազդների ցուցադրման ժամերը: Կայքերի համար սահմանվեց, որ ցուցադրվող բաները չեն կարող զբաղեցնել էջի 20%-ից ավելին: Գործող օրենքով արգելվեց շահումով բոլոր խաղերի, այդ թվում՝ ինտերնետ շահումով խաղերի, խաղատների, խաղասրահների ու տոտալիզատորների բոլոր տեսակի գովազդները՝ ռադիոյով, հեռուստատեսությամբ, համացանցով՝ բացառությամբ իրենց պաշտոնական կայքերում, խաղատների, խաղասրահների, բուքմեյքերական գրասենյակների շենքերի, սրահների վրա փակցվող գովազդների: Գովազդային սահմանափակումներից հետո բուքմեյքերական ընկերություններն այդ ներդրումներն ուղղեցին օնլայն տիրույթ՝ ավելացնելով գովազդը և խաղերն ավելի հասանելի դարձնելով:

Բուքմեյքերական ընկերություններից ամենամեծը «Վիվառոն» է, որի թաքնված գովազդներով է լցված հեռուստատեսային արտադրանքը: Գովազդը, մասնավորապես առցանց գովազդը, հասանելի է հասարակության բոլոր շերտերին, այդ թվում՝ դեռահասներին, ովքեր հեշտությամբ կարող են հրապուրվել դրանցով, խաղադրույքներ կատարել և աստիճանաբար հակվել խաղամոլության: Նման խաղերի մեջ ներքաշվելը լիովին փոխում է երեխայի արժեհամակարգը. առաջնային են դառնում ոչ թե բարոյական արժեքները, այլ խաղամոլությունն ու ազարտը:

Գովազդում նյարդալեզվաբանական ծրագրավորումն ազդում է դիտողի ենթագիտակցության վրա և դրդում նրան վստահելու «Վիվառոյին». չէ՞ որ այն լեգենդար «Արսենալ» ֆուտբոլային ակումբի գործընկերն է: «Վիվառո» ապրանքանիշը ջանք չի խնայում իր գովազդներում ներգրավելու շոուբիզնեսի հայտնի ներկայացուցիչների, ինչպիսիք են Հովհաննես Ազոյանը և Մկրտիչ Արզումանյանը:

Ինչպես արդեն նշել ենք, գովազդում հայտնի մարդկանց ներգրա-

[6] Տե՛ս «ՀՀ օրենքը շահումով խաղերի և խաղատների մասին», https://www.arlis.am/documentview.aspx?docid=80275

վումը մեծացնում է տվյալ բրենդի վստահելիության մակարդակը, ինչին քաջատեղյակ է գովազդատուն: Պետք է նկատել, որ վերոնշյալ դերասաններին հաճախ ենք նկատում գովազդներում, և հատկանշական է, որ նրանց մասնակցությամբ գովազդները իրավամբ ամենադիտվողն են, քանի որ հիմնված են հումորի վրա և օժտված են երկար ժամանակ հիշվելու հատկությամբ: Մեր հետազոտած գովազդներում բրենդը չունի կարգախոս, չունի ձայն. գուցե գովազդատուն կարծում է, որ բրենդն ինքնին ամեն ինչ ասում է, և կարիք չկա այն բառերով ծանրացնելու:

«Վիվառոյի» 2016 թ. ցուցադրած գովազդներից մեկում երիտասարդ տղան նստած է՝ գինու բաժակը ձեռքին, դիտում է ֆուտբոլ: Այդ պահին խաղն ավարտվում է 0:0 հաշվով, և հնչում է դռան զանգը, որից հետո նրան վերադարձնում են գումարը: Գովազդը քարոզում է անընդհատ խաղալ, քանզի գումարի վերադարձման հավանականությունը մեծ է, թեև գուցե դա չի էլ համապատասխանում իրականությանը: «Վիվառոն» ստեղծում է բոլոր պայմանները խաղադրույք կատարելու համար. նույնիսկ հեռախոսով այդ ամենն անելու հնարավորություն է ընձեռում: Ապրանքանիշն ամենաշատը գովազդվել է «Արմենիա» հեռուստաընկերությամբ ցուցադրվող «Ֆուլ հաուս» սիթքոմում՝ թաքնված գովազդի միջոցով, որտեղ գլխավոր հերոսներից մեկն անընդհատ խաղադրույքներ է կատարում և գրեթե միշտ ունի գումար, որը վաստակել է կատարած խաղադրույքներից:

Հոգեբանաէթիկական տեսանկյունից այս ամենի կիրառումը բացասական հետևանք չունենալ չի կարող, քանի որ սիթքոմը դիտում են նաև անչափահասներ, որոնց մեջ դերասանին նույնականանալու, նրան կրկնելու ցանկությունն ավելի է ուժեղանալու. պատանիները նույնպես ձգտում են ունենալ ֆինանսական անկախություն, ինչպես ավագ ընկերները, և տվյալ պարագայում, կարծում ենք, ազարտին տրվելու հավանականությունը կտրուկ մեծանում է:

«Տոտո» բուքմեյքերական ընկերությունը նույնպես բավականին ակտիվ է եղել գովազդաշուկայում: Ի տարբերություն Վիվառոյի՝ «Տոտոն» չի ունեցել մեկ գովազդային դեմք, գերադասել է ամեն հոլովակը նկարահանելիս տարբեր հայտնի դեմքերի ընտրել, օրինակ՝ հայտնի մարզական մեկնաբանները: «Տոտոյի» ազդեցիկ գովազդներից է Հայկ Մարությանի մասնակցությամբ հոլովակը, որտեղ ներկայացվում է խաղամոլի հոգեբանությունը: Այստեղ հերոսն իր տանն ամեն ինչ զուգորդում է խաղատան հետ[7]:

Ներկայացնենք խաղադրույքի ծառայությունների գովազդային պատկերը, որոնք մինչև 2020 թվականն այնքան շատ էին, որ նույնիսկ հետազոտողներին էին շփոթության մեջ գցում: Չմոռանանք նշել, որ խաղադրույքների ծառայությունները գովազդելու հիմքում առավելա-

[7] Տե՛ս TotoGaming - Ձեր խաղադրույքը, Jul 23, 2015, հասանելի է՝ 14.03.2023, https://www.youtube.com/watch?v=T2pbhZTAGYo

պես դրվել են երգիծական ծրագրերն ու հումորային ֆիլմերը, որոնցում դրանք ոչ թե գովազդվել են թաքնված, այլ բացահայտորեն: Հասարակության վերաբերմունքը նմանատիպ ծառայությունների նկատմամբ այսպիսին է. 62,2%-ին խաղադրույքի ծառայության ոչ մի գովազդ չի գրավել: Թերևս գովազդ ստեղծողները լավագույնս տիրապետում են այս տեղեկատվությանը, և դա է պատճառը, որ դրանք մեծամասամբ զետեղվել են ֆիլմերում ու հաղորդումներում, քանի որ թիրախային լսարանն այդտեղ ավելի շատ է և խայծը կարող է կուլ տալ: 26%-ը նշում է «Վիվառռ» խաղադրույքի ծառայությունը, որն ամենաշատն է եղել վերոնշյալ ծրագրերում, դրան հաջորդում են «Աջարաբեթը» (11,4%), «Տոտո Գեյմինգը» (8,9%) և «Եվրաֆուտբոլը» (2%):

Գծապատկեր 3

Խաղադրույքի ո՞ր ծառայությունն է Ձեզ ամենից շատ գրավում իր գովազդներով



«Տոտո Գեյմինգն» օգտագործել է այլընտրանք՝ մուլտիպլիկացիոն հերոսի կիրառումը, որը խոսում է մուլտհերոսին բնորոշ ձայնով: Այստեղ բազմազանություն է մտցվում գովազդային հոլովակի մեջ, սակայն տվյալ դեպքում նույնպես վտանգն առկա է, քանի որ սյուժետային առանձնահատկությամբ պայմանավորված՝ այն առավելապես գրավում է երեխաների և պատանիների ուշադրությունը, այնուհետև՝ մեծահասակներինը: Գովազդում հերոսը քարոզում է խաղալ: Կարգախոսն է՝ «TotoGaming.am՝ Ձեր խաղադրույքը», որը հնչում է կնոջ ձայնով:

«Վիվառռյի» գովազդները մշտապես տարբերվել են իրենց վառ և կլանող սյուժեներով: Այս ընկերությունն իր գործունեության ընթացքում օգտագործել է տարբեր գովազդային մարտավարություններ: Ամենաազդեցիկներից մեկը «Վիվառռ չինգաչունգ» խաղի գովազդն էր, երբ երեխաներին փորձում էին թիրախավորել հայտնի խաղի միջոցով: Երբ երեխան լսում է «Վիվառռ, չինգաչունգ» արտահայտությունը, հետաքրքրություն է առաջանում, փորձում է մուտք գործել կայք՝ պարզելու, թե ինչ է այն: Մեկ այլ սկանդալային գովազդ էր Հովհաննես Ազոյանի մաս-

նակցությամբ 18+ հոլովակը, որն իհարկե հեռուստատեսությամբ չհեռարձակվեց, սակայն Facebook-ում և Youtube-ում մեծ արձագանք ստացավ: «Ֆուլ հաուս» սիթքոմի սերիաներից մեկում սիրված կերպարներից մեկը նոր բնակարանի համար նախատեսված ողջ կանխավճարը խաղադրույք է կատարում «Վիվառոյում» ու շահում եռապատիկը:

Անդրադառնանք «Վիվառո Բեթ» ընկերության գովազդին, որը հագեցած էր ՆԼԾ հնարանքներով: «Պատմական հիմքով, եռանդով լցված, լեգենդներ ստեղծելով, միասին դեպի հաղթանակ». այս կարգախոսով գովազդը պատմում է այն մասին, որ «Վիվառո Բեթը» ֆուտբոլային «Արսենալ» ակումբի պաշտոնական գործընկերն է: Դրանում ներդրված է դինամիկ ռոքային ոճի երաժշտություն, ինչը բնորոշ է ազարտային խաղերի և ընկերությունների գովազդներին, քանի որ դրդում է գործողության: Վիզուալ տեսանկյունից գովազդի ընթացքում ընկերության հայտնի լոգոն, որը ձեռքի ցուցամատը և միջնամատը վերև պտտելու նշանն է, այլ կերպ ասած՝ հաղթանակի նշանը (viva), սկսում է վազել: Սկզբում ցույց է տրվում ֆուտբոլային ակումբի հանդերձարանը. այնտեղ կախված է մեկ շապիկ, որի վրայի թվերն անընդհատ փոխվում են: Դրանից հետո ընկերության լոգոն սկսում է վազել, և վազքից առաջանում է հրետանի, որը գնդակ է արձակում, և վերջինս ընկնում է ֆուտբոլի դաշտ: Դիտողը տեսնում է ֆուտբոլի դաշտը, լսում երկրպագուների ձայները, ապա կտրվում է հաղթական ժապավենը:

Գովազդն ամբողջապես համակարգչային գրաֆիկայով է կառուցված և ունի կլանող ազդեցություն: Գերակշռում են մանուշակագույնը, կարմիրը, կապույտը և փայլուն երանգները: Կինեսթետիկ առումով ազդեցությունը մեծ է, սակայն այս դեպքում գովազդի նպատակն էր իրազեկել սպառողին, որ «Վիվառոն» «Արսենալի» գործընկերն է, ուրիշ ոչինչ: Հատկանշական է, որ գովազդի վերջում նշված է տարիքային սահմանափակում՝ 21+:

Մեր օրերում գովազդն իրականացնում է առավելապես հուզական գործառույթ: Գործակալներն առաջին հերթին իրենց առջև նպատակ են դնում ստեղծել գովազդ՝ հնարավորինս հեռու ռացիոնալ մտածողությունից: Եթե գովազդն ունակ չէ առաջացնելու համապատասխան հույզեր, ապա արդյունավետ լինել չի կարող, ուստի այլընտրանքային համակազմով տարատեսակ հնարանքներ են գործի դրվում՝ ներազդեցության առավել բարձր շեմ գրանցելու համար:

Արժեքաստեղծ գործոնները գովազդում

Արժեքային համակարգը՝ ուղղված սպառողին, որը կիրառվում է ողջ հասարակության նկատմամբ, հանգեցնում է բարդույթների ձևավորմանը բնակչության այն խմբերի շրջանում, որոնք, ֆինանսական պատճառներից ելնելով, չեն կարողանում օգտվել գովազդվող ապրանքատեսակից: Ֆինանսապես ապահովված մարդու համար քարոզչութ-

յունն այնքան ազդեցիկ չէ, որքան չապահովվածի, այնուամենայնիվ դրանում առկա բացասական ազդակը հետևյալն է. բարեկեցության հասնելու միջոցները մնում են կաղրից դուրս՝ ստեղծելով տպավորություն, որ հարուստ լինելը զուտ ցանկության հարց է: Այլ կերպ ասած՝ քարոզվում է արդյունքը, սակայն գործընթացը ոչ մի կերպ չի բացահայտվում: Ուստի հայտնվում են մարդկանց որոշակի խմբեր, որոնք հակահիրավական քայլերի դիմելու հոգեբանական պատրաստվածության վիճակում են, և որոնց գործողություններն ուղղված են ենթադրյալ հարստացմանը՝ գրպանահատությունից մինչև խոշոր հանցագործություններ: Նման արժեքային համակարգը և համապատասխան գործողությունները նպաստում են մարդու կյանքի արժեզրկմանը: Որպես հետևանք՝ օրենքներն անտեսվում են, ինչն էլ իր հերթին նպաստում է հասարակության քրեականացմանը:

Հայաստանյան գովազդաշուկայում մշտապես հայեցի և յուրօրինակ ոճով տարբերվում են «Արարատ» բրենդի կոնյակի գովազդները: Դրանցում շեշտվում են ընկերության, միասնականության գաղափարը, գերակշռում է խոհափիլիսոփայական միտքը: Գովազդը, որը գրավել է մեր ուշադրությունը, հետևյալն է. «Մեկի համար բաժակը կիսով չափ լիքն է, մյուսի համար՝ կիսով չափ լեցուն: Սակայն ընկերների հետ բարձրացված ամեն բաժակ միշտ լի է: Նրանց համար, ովքեր մեր կյանքը լեցուն են դարձնում»: Կարգախոսը հետևյալն է. «Ի սրտե՝ Արարատ»: Արարատը համարվում է ազգային հարստություն և մեր երկրի խորհրդանիշներից մեկն է, ինչը հաջողությամբ արտացոլվում է «Արարատի»[8] գովազդներում, որոնցից յուրաքանչյուրը կարծես փոքրիկ ասոնս լինի Հայաստանի մասին:

«Երբեք մի՛ ուշացեք ճաշին, ծխեք Հավանայի սիգարներ և խմեք հայկական կոնյակ». այսպես էր բնութագրում Ուինսթոն Չերչիլն իր երկարակեցության գաղտնիքը: Երևանի կոնյակի գործարանի լեգենդար «Արարատ» կոնյակներն աշխարհում դարձել են Հայաստանի, նրա մշակույթի և պատմական ժառանգության խորհրդանիշը: Ու չնայած քննադատություններին՝ բարձրակարգ խմիչքների ոլորտում համաշխարհային առաջատարներից մեկի՝ «Պեռնո Ռիկար» խմբի անդամ դառնալու շնորհիվ «Արարատ» ապրանքանիշը զարգացման և նորարարական մոտեցումների նոր հնարավորություններ ձեռք բերեց՝ ամրապնդելով իր դիրքերը միջազգային ասպարեզում: Ուստի անհնար է չնկատել, որ «Արարատ» կոնյակի գովազդները հնարավորություն են տալիս որոշակիորեն ծանոթանալու հայկական մշակույթին:

Կադրերն ուղեկցվում են ձայնի և էկրանին հայտնվող բառերի համադրությամբ, ինչն այն ընկալելի է դարձնում միաժամանակ և՛ աուդիալ, և՛ վիզուալ զգայարաններով առաջնորդվողների համար: Կինես-

[8] Տե՛ս ARARAT New Range, PernodRichardArmenia, Apr 22, 2011, հասանելի է՝ 19.03.2023, https://www.youtube.com/watch?v=RWEq85DiS3s

թետիկ ֆոնն ապահովում են ՆԼԾ հնարանքները՝ կոնյակ, որը շարժվում է բաժակում, ունի գրավիչ և աչք շոյող փայլ: Կադրում հնչում է տղամարդու ձայն: Իսկ ընկերության թեման յուրօրինակ կանչ է, որ ստեղծում է ջերմության զգացողություն և ուժգնացնում ընկերների հետ մի բաժակ կոնյակի շուրջ հավաքվելու ցանկությունը:

Հարցման արդյունքում «Արարատ» բրենդի գովազդները դուր են գալիս հարցվածների 49%-ին, և միայն 11,8%-ն է մերժում դրանք: Մնացած 39,2%-ն ուղղակի ծանոթ չէ դրանց:

«Արարատի» գովազդային արշավները ներառում են հեռուստատեսային հոլովակներ, արտաքին գովազդ և վաճառքի կետերի համար նախատեսված նյութեր, ռադիոգովազդ, մամուլի հրապարակումներ ընկերության մասին: Պարզ, բայց հավերժական արժեքների խորը իմաստով լի ձևակերպումները թույլ են տալիս բրենդին իր սպառողի հետ շփվել նոր՝ հուզական մակարդակում:

Կարևոր չէ, թե ընկերությունը քանի տարի է գործում, կարևոր է, թե ինչ տեղ է տալիս հանրությանը, և ինչպես է կազմակերպվում աշխատանքը հանրության հետ:

Հայ հեռուստադիտողն ամենաշատն ուշադրություն է դարձնում գովազդի բովանդակությանը՝ 45,5%-ը, արտադրանքին, ծառայությանը՝ 42,1%-ը, գովազդի տեքստին՝ 35,5%-ը, դերասանական կազմին՝ 12,4%-ը, գունային բազմազանությանը՝ 10,7%-ը: Մնացածները նշում են այլ բաղկացուցիչներ: Հարկ է նշել, որ յուրաքանչյուրն առանձնացնում է այն գործոնը, որն ամենաառաջնահերթն է իր ուշադրությունը գրավել, և դրանք հիմնականում արդարացված են՝ հաշվի առնելով մարդկանց անհատական ընկալումները:

Գծապատկեր 4

Առաջին հերթին ինչի՞ն եք ուշադրություն դարձնում գովազդում



Ստացված աղյուսակն ամբողջացնելուց հետո հարկ համարեցինք գնահատել հայկական գովազդաշուկան ըստ մեր ներկայացրած սանդղակի, որտեղ 1-ն ամենացածր միավորն է, 5-ը՝ ամենաբարձրը: Պատկերը հետևյալն է՝ հարցվածների 44,8%-ն այն գնահատել է 3 միավոր, որը համարժեք է լավ շեմին, 23,8%-ի համար այն 2 միավորին է համարժեք, իսկ շատ լավ դիրքորոշում ունի ընդամենը 1,2%-ը:

Գծապատկեր 5

Գնահատեք հայկական գովազդաշուկան 1-5 սանդղակային համակարգում, որտեղ 1-ը շատ վատն է, իսկ 5-ը՝ շատ լավը



Ամփոփելով հետազոտության արդյունքները՝ նկատենք, որ գովազդաշուկան օրեցօր զարգանում է, և, անկախ այն հանգամանքից, թե որքան մեծ է գովազդի ազդեցությունն ապրանքի կամ ծառայության վաճառքի վրա, դիտողների մեծ մասը գնումներ կատարելիս մտածում է իրեն արդեն ծանոթ ապրանքի կամ ծառայության մասին:

ՀՀ-ում գովազդային շուկայի զարգացման հեռանկարները պայմանավորված են ընթացող բարեփոխումներով: Դրական տեղաշարժեր իրականացնելու համար անհրաժեշտ է տարանջատել գովազդային գործունեության կարգավորման ոլորտը և ենթակառուցվածքները, հիմնավորել վտանգներն ու հնարավորությունները, ինչպես նաև առաջարկել միջոցառումներ՝ գովազդային գործունեության մեջ ռիսկերի նվազեցման և ոլորտի զարգացման համար:

Այսօր մեդիայում մեծապես կիրառվող գովազդի էական նշանակությունն անհնար է հերքել: Այն ապրանքների և ծառայությունների մատուցման կարևորագույն միջոց է, ԶԼՄ-ների գոյության առաջնային գործոն, և դրա ոչ ճիշտ պատրաստումն ու շրջանառությունը կարող են հանգեցնել բացասական հետևանքների: Ժամանակակից գովազդը ներազդում է ամբողջ հասարակության վրա՝ թողնելով որոշակի ազդեցություններ և հանգեցնելով արժեհամակարգի, կենսաձևերի և վարքի մոդելների փոխակերպումների: Ժամանակակից մեթոդներն ու տեխնոլոգիաները

լայն հնարավորություններ են ընձեռում այնպիսի գովազդների ստեղծման համար, որոնք ենթագիտակցական մակարդակում դիտողի մեջ առաջացնում են ապրանքի նկատմամբ ցանկալի դիրքորոշում՝ ներխուժելով հույզերի ու զգացմունքների տիրույթ: Գովազդ ստեղծողները սպառողի ենթագիտակցության վրա ներգործելու համար աշխատում են ազդել բոլոր զգայարանների վրա՝ օգտագործելով աչքի զարնող գույներ, խորհրդանշական երաժշտություն, հումորային կերպարներ, թիրախավորված արտահայտություններ, կաղրերի կոնտրաստային փոփոխություններ, կանանց կերպարներ, արժեքների օգտագործում, հետաքրքրաշարժ անիմացիաներ, շահավետ առաջարկներ և այլն:

Գովազդը՝ որպես հասարակական կյանքի մի մաս, պահանջում է բազմակողմանի ուսումնասիրություն, իսկ գիտահեն գործիքակազմի ներդրումը թույլ է տալիս ստեղծել պայմաններ, որոնց դեպքում սպառողի և գովազդատուի միջև առաջանում է կապ, որն էլ նպաստում է արդյունավետ սպառմանը: Գովազդը ոչ միայն ազդում է. այն մարդու մեջ առաջացնում է մյուսներից առանձնանալու ենթագիտակցական պահանջմունք՝ դրանով իսկ իրականացնելով անհատի բարձր ինքնագնահատականի պահպանման կարևորագույն գործառույթը:

САТЕНИК ГРИГОРЯН – ***Армянский рекламный рынок в медиапсихологическом пространстве.*** – В наши дни, когда на рынке представлен широкий выбор, реклама является лучшим решением, особенно когда речь идет о продвижении товара. Для создания эффективной рекламы используются различные психологические приемы, такие как узнаваемость продукта как бренда, цветовая тактика, частота тиражей, выбор целевой группы, использование запоминающегося и соответствующего слогана, использование альтернативных методов и т. д. В связи с этим обстоятельством целью работы является отдельное рассмотрение рекламы с точки зрения ее влияния на человека и его внутренний мир. В наше время средства массовой информации, насыщенные разножанровой информацией, внедряют в наше подсознание идеи и ценности, перед которыми наше сознание бессильно. Рекламщики не дают друг другу права создавать модели, определять нормы жизни, которым мы волей-неволей подчиняемся. Наблюдая за армянскими СМИ, мы замечаем, что западные ценности укоренены в нас, и требуется достаточно времени, чтобы суметь сломать их и создать новые. Зачастую рекламный рынок придерживается определенной политики без четкой тактики, где главную роль играет конкуренция. В этой борьбе зачастую игнорируются функциональные, психологические, ценностные, этические и законодательные аспекты рекламной продукции.

Ключевые слова: *реклама, влияние, прайм-тайм, голосовое влияние, знаменитости, риски ставок, скрытая реклама, гендерные стереотипы, трюки НЛП*

SATENIK GRIGORYAN – ***Armenian Advertising Market in the Field of Media Psychology.*** – Nowadays, with a wide variety of choices available in the market, advertising is the best solution for promoting a product. Various psychological techniques are used to create effective advertising, such as brand recognition of the product, color tactics, frequency of circulation, selection of the target groups, use of a

memorable and appropriate slogan, use of alternative methods, etc. The purpose of the work is a separate consideration of advertising from the point of view of its influence on a person and his value system.

Nowadays, the media, saturated with multi-genre information, introduce ideas, and values into our subconscious, against which our consciousness is powerless. Advertisers do not give each other the right to create models, to determine the standards of life to which we willy-nilly submit. Watching the Armenian media, we notice that Western values are rooted in us, and it takes enough time to be able to break them and create new ones. Often the advertising market adheres to a certain policy without clear tactics, where competition plays the main role. In this struggle, the functional, psychological, value, ethical, and legislative aspects of advertising products are often ignored.

Keywords: *advertising, influence, prime time, voice influence, celebrities, betting risks, hidden advertising, gender stereotypes, NLP tricks*

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ
СВЕДЕНИЯ ОБ АВТОРАХ
INFORMATION ABOUT THE AUTHORS

1. **Գագիկ Սողոմոնյան** – փիլիսոփայական գիտությունների թեկնածու, ԵՊՀ սոցիալական փիլիսոփայության, բարոյագիտության և գեղագիտության ամբիոնի դոցենտ
   Гагик Согомонян – кандидат философских наук, доцент кафедры социальной философии, этики и эстетики ЕГУ
   Gagik Soghomonyan – PhD, Associate Professor at YSU Chair of Social Philosophy, Ethics and Aesthetics
   Էլ. փոստ՝ gagiksoghomonyan@ysu.am
2. **Արման Ղարագուլյան** – փիլիսոփայական գիտությունների թեկնածու, ԵՊՀ սոցիալական փիլիսոփայության, բարոյագիտության և գեղագիտության ամբիոնի դոցենտ
   Арман Карагулян – кандидат философских наук, доцент кафедры социальной философии, этики и эстетики, ЕГУ
   Arman Gharagulyan – PhD, Associate Professor at YSU Chair of Social Philosophy, Ethics and Aesthetics
   Էլ. փոստ՝ arman_gharagulyan@ysu.am
3. **Հռիփսիմե Զաքարյան** – բանասիրական գիտությունների թեկնածու
   Рипсиме Закарян – кандидат филологических наук
   Hripsime Zakaryan – Candidate in Philology
   Էլ. փոստ՝ zaqaryan_hripsime@mail.ru
4. **Օվսաննա Նահապետյան** – ԵՊՀ փիլիսոփայության պատմության, տեսության և տրամաբանության ամբիոնի ասիստենտ
   Овсанна Нагапетян – ассистент кафедры истории, теории философии и логики ЕГУ
   Ovsanna Nahapetyan – Assistant at YSU Chair of History and Theory Of Philosophy and Logic
   Էլ. փոստ՝ onahapetyan@ysu.am
5. **Աստղիկ Սերոբյան** – ԵՊՀ անձի և սոցիալական միջավայրի գիտահետազոտական լաբորատորիայի գիտաշխատող, անձի հոգեբանության ամբիոնի դասախոս
   Астхик Серобян – научный сотрудник научно-исследовательской лаборатории личности и социальной среды, преподаватель кафедры психологии личности ЕГУ
   Astghik Serobyan – Researcher at the Laboratory of the Person and Social Environment, Lecturer at YSU Chair of Personality Psychology
   Էլ. փոստ՝ astghiks@ysu.am
6. **Էդիտա Առաքելյան** – ԵՊՀ անձի հոգեբանության ամբիոնի ասպիրանտ, բակալավրիատի բաժնի առաջատար մասնագետ
   Эдита Аракелян– аспирант кафедры психологии личности, ведущий специалист отделения бакалавриата ЕГУ
   Edita Arakelyan – PhD Student at YSU Chair of Psychology of Personality, Leading Specialist of the Bachelor's Department
   Էլ. փոստ՝edita.araqelyan@ysu.am
7. **Սաթենիկ Գրիգորյան** – ԵՊՀ ընդհանուր հոգեբանության ամբիոնի դասախոս
   Сатеник Григорян – Преподаватель кафедры общей психологии ЕГУ
   Satenik Grigoryan – Lecturer at YSU Chair of General Psychology
   Էլ. փոստ՝satengrigoryan@ysu.am

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ ❋ СОДЕРЖАНИЕ ❋ CONTENTS

ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ
ФИЛОСОФИЯ ❋ PHILOSOPHY

Գագիկ Սողոմոնյան – Փիլիսոփայական մարդաբանության գիտական կարգավիճակը 3
Гагик Согомонян – Научный статус философской антропологии
Gagik Soghomonyan – Scientific Status of Philosophical Anthropology

Արման Ղարագուլյան – Արտացոլո՞ւմ, թե՞ պատրանք: Օնլայն և օֆլայն ինքնությունների փոխհարաբերության հիմնախնդիրը միջանձնային հարաբերությունների համատեքստում 17
Арман Карагулян – Отражение или мираж? Проблема соотношения онлайн и офлайн идентичностей в контексте межличностной коммуникации
Arman Gharagulyan – Reflection or Mirage? The Problem of the Relationship between Online and Offline Identities in the Context of Interpersonal Communication

Հռիփսիմե Զաքարյան – Մ. Մ. Բախտինի երկխոսայնության տեսությունը որպես մշակույթների փոխազդեցության ձև 29
Рипсиме Закарян – Диалогическая теория М. М. Бахтина как форма взаимодействия культур
Hripsime Zakaryan – The Dialogical Theory of M.M. Bakhtin as a Form of Interaction of Cultures

Օվսաննա Նահապետյան – Ապակառուցողական վարքի սոցիոմշակութային հիմունքները 40
Овсанна Нагапетян – Социокультурные основы деструктивного поведения
Ovsanna Nahapetyan – Sociocultural Foundations of Disruptive Behavior

ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ
ПСИХОЛОГИЯ ❋ PSYCHOLOGY

Աստղիկ Սերոբյան, Էդիտա Արաքելյան – Ուսանողների ակադեմիական ներգրավվածությունը և կրթական ու տարիքային դժվարությունները 50
Астхик Серобян, Эдита Аракелян – Академическая вовлеченность студентов: влияние образовательных и возрастных трудностей
Astghik Serobyan, Edita Arakelyan – Students' Academic Engagement in Higher Education: The Role of Age and Education-Related Challenges

Սաթենիկ Գրիգորյան – Հայաստանյան զովազդաշուկան մեդիահոգեբանության առանցքում 62
Сатеник Григорян – Армянский рекламный рынок в медиапсихологическом пространстве
Satenik Grigoryan – Armenian Advertising Market in the Field of Media Psychology

Տեղեկություններ հեղինակների մասին 78
Сведения об авторах
Information about the Authors

Խմբագրության հասցեն. Երևան, Ալեք Մանուկյան փող., 1
Адрес редакции: Ереван, ул. Алека Манукяна 1
Address: 1, Alex Manoogian str., Yerevan

Կայք՝ journals.ysu.am
Էլ. փոստ՝ ephbanber@ysu.am

Հեռ. 060 710 218, 060 710 219

Հրատարակչական խմբագիր՝ **Արմեն Հովակիմյան**
Издательский редактор: **Армен Овакимян**
Publishing Editor: **Armen Hovakimyan**

Վերստուգող սրբագրիչ՝ **Գայանե Գրիգորյան**
Контрольный корректор: **Гаяне Григорян**
Proofreader: **Gayane Grigoryan**

Թողարկման պատասխանատու՝ **Հասմիկ Եսայան**
Ответственный выпуска: **Hasmik Yesayan**
Issued by: **Hasmik Yesayan**

Տեխնիկական խմբագիր՝ **Աննա Մկրտչյան**
Технический редактор: **Анна Мкртчян**
Technical Editor: **Anna Mkrtchyan**

Ստորագրված է տպագրության՝ 14. 11. 2023: